

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԵՎԻԿ ՔԱՄԱԼՅԱՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ

ՏԵՍՈՒԹՅԱՆ

ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2020

ՀՏԴ 81'25(07)
ԳՄԴ 81.2-7ց7
Ք 170

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի
գիտական խորհուրդը:*

Քամալյան Արևիկ

Ք 170 Թարգմանության տեսության հիմունքներ/Ա. Քամալյան:
- Եր., ԵՊՀ հրատ., 2020, 162 էջ:

Ձեռնարկը նախատեսված է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի «Թարգմանության տեսության հիմունքներ» առարկայի համար:

Կարող է օգտակար լինել սկսնակ և գործող թարգմանիչների, խմբագիրների, ինչպես նաև լրագրողների, լեզվաբանների, թարգմանությանը և թարգմանաբանությանը հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 81'25(07)
ԳՄԴ 81.2-7ց7

ISBN 978-5-8084-2428-9

© ԵՊՀ հրատ., 2020
© Քամալյան Ա., 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	8
ԹԵՄԱ 1. ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԿԱՊԸ ԱՅԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ. ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐԸ. ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՒՅՆԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ.....	15
ԹԵՄԱ 2. ՆԱԽԱԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ: ՖՈՆԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔ.....	26
ԹԵՄԱ 3. ԲԱՌԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԼԵԶՎԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒՅԹ (ԻՆՖՈՐՄԱՅԻԱ).....	34
ԹԵՄԱ 4. ՀԱՄԱՏԵՔՍ: ԲԱՌԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ (ըստ Յա. Ռեցկեթի)	39
ԹԵՄԱ 5. ԲԱՌԻ ՌԵՖԵՐԵՆՑԻԱԼ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԼԻԱԿԱՏԱՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ (ըստ Լ. Բաթխուդարովի)	45
ԹԵՄԱ 6. ԲԱՌԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ (ՊՐԱԳՄԱՏԻԿ) ԻՄԱՍՏՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ըստ Լ. Բաթխուդարովի)	51
ԹԵՄԱ 7. ՀԱՐԱՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ԶՈՒԳՈՐԴՈՒՄ, ԽՈՐՀՐԴԱՆԻՇ.....	57
ԹԵՄԱ 8. ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ԲԱՌԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ ՉՈՒՆԵՑՈՂ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ (ՌԵԱԼԻԱ) ԵՎ ԷԿԶՈՏԻԶՄ.....	66
ԹԵՄԱ 9. ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ՄԽԱԼՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ. ՄԻԶԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆ/ՀԱՐԱՆՈՒՆՆԵՐ ԿԱՍ «ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿԵՂԾ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ». ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱԿՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ.....	76
ԹԵՄԱ 10. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՅՈՒՄ.....	86
ԹԵՄԱ 11. ՏԱՌԱԴԱՐՁՈՒՄ ԵՎ ԳՐԱԴԱՐՁՈՒՄ. ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ.....	93

ԹԵՄԱ 12. ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ (ԴՄ) ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	99
ԹԵՄԱ 13. ԲԱՌԻ ՆԵՐԼԵԶՎԱԿԱՆ ԻՄԱՍՏ. ԲԱՌԱԽԱՂԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.....	105
ԹԵՄԱ 14. ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ. ՏԵՍԱԿՆԵՐԸ.....	112
ԹԵՄԱ 15. ԲԱՌԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ.....	117
ԹԵՄԱ 16. ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ-1	125
ԹԵՄԱ 17. ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ- 2	134
ԹԵՄԱ 18. ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ.....	139
ՀԱՎԵԼՎԱԾ.....	148
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	154
ԲԱՌԱՐԱՆՆԵՐ, ԱՌՅԱՆՑ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ.....	157
ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	158
ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՑԱՆԿ	159

ԱՌԱՋԱԲԱՆ

ձեռնարկը նախատեսված է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի «Թարգմանության տեսության հիմունքներ» դասընթացի համար: Թեմաները բաժանել ենք ըստ դասընթացին հատկացված սուղ ժամաքանակի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թարգմանաբանությունից հայերեն տեսական գրականությունը բավականին աղքատիկ է¹, իսկ օտար լեզվով գիտական գրականություն հատկապես ցածր կուրսերի ուսանողները դժվարանում են կարդալ, ձեռնարկում աշխատել ենք համառոտ և հնարավորինս մատչելի ներկայացնել թարգմանաբանության հիմնական հասկացությունները: Տեսական գրականությանն առավել հանգամանալից ինքնուրույն ծանոթանալու համար յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ ուսանողներին առաջարկվում է գրականության ցանկ (մեծ մասամբ՝ ռուսերեն կամ անգլերեն, հնարավորության դեպքում՝ նաև հայերեն):

Տեսական նյութից բացի՝ ձեռնարկում կան նաև գործնական վարժություններ, առաջադրանքներ, քանի որ, ինչպես ցույց է տալիս տարիների փորձը, տեսական նյութն առանց գործնական

¹ Դեռ խորհրդային տարիներին գրված մի քանի աշխատություններ կան, որոնք հիմնականում գրականագիտական ուղղվածություն ունեն և տեսական հարցերին խիստ հպանցիկ են անդրադառնում կամ ռուսալեզու են (Շլիագարյան Ա., Գեղարվեստական թարգմանությունը և ժողովուրդների մերձեցումը, Եր., ՀԽՍՀ ԳԱ, 1977, Մկրտչյան Լ. Մ., Եթե Բաբելոնում թարգմանիչներ լինեին (հոդվածներ), Եր., 1976, **Мкртчян Л. М.** Армянская поэзия и русские поэты XIX-XX века: Вопросы перевода и литературных связей. Ер., 1968, **Мкртчян Л. М.** О стихах и переводах. Ер., 1965): Վերջին տարիների կարևոր աշխատանքներից է **«Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկը»**, որը, սակայն, ավելի շուտ թարգմանաբանական տերմինների բացատրական բառարան է: Կան նաև կոնկրետ լեզվական զույգի մասին մի քանի գործնական ձեռնարկներ, 1-2 տեսական աշխատանքներ՝ հիմնականում ռուսերենից թարգմանած, որոնք նշված են գրականության ցանկում:

աշխատանքի հնարավոր չէ խորությամբ յուրացնել: «Թարգմանության տեսության հիմունքներ» առարկան ենթադրում է անդրադարձ ընդհանուր տեսական հարցերին՝ առանց կոնկրետ լեզվական գույգի մասնավոր խնդիրներին անդրադառնալու, այդ պատճառով բերված օրինակները, գործնական առաջադրանքները տարբեր լեզուներից են (հիմնականում՝ ռուսերեն և անգլերեն):

Առաջադրանքները նպատակ են հետապնդում ոչ այնքան ստուգելու ուսանողների՝ օտար լեզվի իմացությունը, որքան նպաստելու մայրենի լեզվով գրագետ խոսք կազմելուն, օտար լեզվի միջոցով հայերենի գաղտնիքները, նրբությունները բացահայտելուն և կիրառելուն: Գաղտնիք չէ, որ թեև վերջին տասնամյակներում թարգմանական գրականության նկատմամբ հետաքրքրությունն ու պահանջարկը խիստ մեծ է, սակայն թարգմանությունների որակը՝ թե՛ գեղարվեստական, թե՛ գիտական, մեղմ ասած հեռու է կատարյալ լինելուց: Պատճառներն անշուշտ բազմաթիվ են՝ կրթության ընդհանուր ցածր որակ, օտար լեզվի ու մշակույթի անկատար իմացություն, սակայն առավել ցավոտ խնդիր է դարձել մայրենի լեզվի ոչ բավարար իմացությունը:

Հիմնական տերմինների կողքին հայերենից բացի փակագծում տրված են ռուսերեն և անգլերեն տերմինները՝ այլ լեզուներով տեսական գրականության որոնումը հեշտացնելու և տերմինաբանական խառնաշփոթից խուսափելու համար: Որոշ դեպքերում նախընտրել ենք փոխառյալ տերմինը, իսկ փակագծում տվել ենք հայերեն տարբերակը, եթե վերջինս պակաս գործածական է կամ ամբողջությամբ չի արտահայտում տերմինի իմաստը: Ձեռնարկի վերջում կա թարգմանաբանական տերմինների ռուսերեն-հայերեն փոքրիկ բառացանկ, ինչպես նաև առցանց բառարանների, թարգմանչի աշխատանքի համար օգտակար համացանցային ռեսուրսների հղումներ:

Ձեռնարկն առավել հետաքրքիր և դյուրըմբռնելի դարձնելու համար յուրաքանչյուր թեմայի վերջում կան տվյալ թեմային առնչվող պատկերագրողումներ, նկարներ, տարբեր լեզուների մասին հետաքրքրաշարժ տեղեկություններ:

**When you have to translate
something but can't find the
right word.**



*Նկ. 1. Թարգմանելիս սխալ ընտրված բառը նման է պատի
մեջ ծուռ դրած քարի:*

Շնորհակալությամբ կընդունենք ձեռնարկի վերաբերյալ դիտողություններն ու առաջարկները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թարգմանությունը միջլեզվական և միջմշակութային հաղորդակցման ձև է: Թեև թարգմանության պատմությունը սկսվում է դեռ հնագույն ժամանակներից, իբրև առանձին գիտակարգ՝ թարգմանաբանությունը ձևավորվել է 20-րդ դարի կեսերին:



*Նկ. 2. Բաբելոնյան աշտարակը
(նկարիչ՝ Պիտեր Բրեյգել Ավագ, 16-րդ դար)*

Աստվածաշնչում հիշատակված Բաբելոնի աշտարակաշինության մասին միջը պատկերավոր ձևով ներկայացնում է տարբեր լեզուների առաջացումը մեկ ընդհանուր՝ մայր լեզվից: Համաձայն այդ առասպելի՝ Աստված խառնում է մեկ ընդհանուր լեզվով խոսող մարդկության լեզուները, որպեսզի մարդիկ իրար չհասկանան: Այսպիսով, դեռ հնում մարդկությունը գիտակցում էր, որ միմյանց հասկանալու համար լեզուն ամենակարևոր միջոցն է:

Թարգմանիչների մասին առաջին հիշատակությունը մ.թ.ա. 23-րդ դարից է, իսկ առաջին վավերագրերը՝ մ.թ.ա. 15-րդ դարից:

դրանք եգիպտերենից արքադերեն թարգմանված դիվանագիտական փաստաթղթեր են, նամակներ: Աշխարհին հայտնի առաջին թարգմանչի անունը Անհուրմես է (մ.թ.ա. 14-րդ դար). նա Նեղոսի արևմտյան ափին գտնվող հին եգիպտական Թինիս քաղաքի քրմերից էր²: Թարգմանությունը բավականին զարգացած է եղել Շումերում. գտնվել են երկլեզու (շումերերեն և արքադերեն), նաև եռալեզու բազմաթիվ սեպագիր սալիկներ (մ.թ.ա. 3-րդ հազ.): Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի գրադարանը (մ.թ.ա. 7-րդ դար), որ ստեղծվել է Աշուրբանիպալ արքայի հրամանով, աշխարհին հայտնի հնագույններից է. 19-րդ դարի կեսերին հայտնաբերված գրադարանում հնագետները գտել են մոտ 25 000 սեպագիր սալիկներ, այդ թվում և երկլեզու: Հին աշխարհում բազմալեզու արձանագրությունները տարածված երևույթ էին. օրինակ՝ հայտնի Բեհիսթունյան արձանագրությունը (մ.թ.ա. 6-րդ դար) եռալեզու է՝ հին պարսկերեն, էլամերեն և արքադերեն: Երկլեզու և եռալեզու արձանագրություններ, նաև դրամներ են հայտնաբերվել Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքում:

Աշխարհին հայտնի առաջին գրական (գեղարվեստական) թարգմանությունն արել է հին հռոմեացի դրամատուրգ, բանաստեղծ և թարգմանիչ **Լիվիոս Անդրոնիկոսը** (լատ.՝ *Lucius Livius Andronicus*, մ.թ.ա. 284-205 թթ.). նա հունարենից լատիներեն է թարգմանել Հոմերոսի «Ոդիսականը»: Թարգմանության առաջին տեսաբաններից է համարվում հռոմեացի քաղաքական գործիչ, հռետոր և փիլիսոփա **Մարկոս Տուլիոս Ցիցերոնը** (Կիկերոն, լատ.՝ *Marcus Tullius Cicero*, մ.թ.ա. 106-43 թթ.). նա “*De Oratore*” («Հռետորի մասին») տրակտատում խոսում է նաև թարգմանելու արվեստի մասին: Ցիցերոնն ընդգծում է, որ թարգմանելիս ինքը փորձում է ոչ թե բառ առ բառ թարգմանել, այլ փոխանցել բնագրի

² Ст'ю **Алексеева И. С.** Введение в переводоведение: Учеб. пособие. М., 2004 (<https://studfile.net/preview/1197096/>):

միտքն ու ոճը՝ միաժամանակ չաղավաղելով սեփական լեզուն:

Մ.թ.ա. 3-1-ին դդ.-ում տարբեր լեզուներով է թարգմանվում Հին Կտակարանը: Ամենահին թարգմանություններից են Հին Կտակարանի թարգմանությունը հին հունարեն (մ.թ.ա. 3-1-ին դդ.), որ հայտնի է **Սեպտուագինտա** (հայ.՝ Յոթանասնից) անունով, **Թարգումը** (արամեերեն թարգմանությունների ընդհանուր անվանումը, մոտավորապես մ.թ.ա. 1-ին դար), **Պեշիտտան** (ասորերեն, մ.թ. 5-րդ դարի սկիզբ): Լատիներեն թարգմանությունը (մոտ մ.թ. 390-405 թթ.) հայտնի է **Վուլգատա** անունով, որից էլ հետագայում թարգմանվել է ռոմանական, գերմանական, սլավոնական շատ լեզուներով: Մ.թ. 4-5-րդ դարերում է Աստվածաշունչը թարգմանվել նաև գոթերեն, հայերեն, վրացերեն: Անգլերեն առաջին գրավոր թարգմանությունն արվել է 14-րդ դարի կեսերին, իսկ գերմաներեն՝ 16-րդ դարի 1-ին կեսին:

Քրիստոնեությունն իբրև պետական կրոն ընդունելուց հետո (301 թ.) Հայաստանում սկիզբ է առնում Աստվածաշնչի քանավոր թարգմանության ավանդույթը: Գրերի գյուտից մի քանի տարի անց Աստվածաշունչը (կամ դրա առանձին հատվածներ) առաջին անգամ գրավոր թարգմանվում է հայերեն: Նշենք, որ տարբեր են տեսակետները, թե որ լեզվից են արված հայերեն առաջին թարգմանությունները: Մասնագետների մի մասի կարծիքով՝ թարգմանությունն ամենայն հավանականությամբ ասորերեն տարբերակից է արվել, որ կոչվում է *Պեշիտտա* (այս մասին խոսում է պատմահայր Խորենացին, այս տեսակետի կողմնակիցն է Ստ. Մալխասյանցը): Հայերեն այս թարգմանությունը հայտնի է «*Փութանակի թարգմանություն*» անունով: Լեզվաբանների մի մասը (օր.՝ Մ. Գարագաշյանը, Հր. Աճառյանը), վկայակոչելով նաև Կորյունին, այն տեսակետին է, որ հայերեն առաջին՝ «փութանակի» թարգմանությունն արվել է հունարենից: Մեր առաջին թարգմանիչներից են **Մեսրոպ Մաշտոցը**, **Սահակ Պարթևը**, **Եզնիկ Կող-**

բացին, Կորյունը, Հովսեփ Պաղնացին, Ղևոնդ վարդապետը և այլք: Եփեսոսի ժողովից հետո, որ տեղի է ունեցել 431 թ., կատարվում է Աստվածաշնչի երկրորդ թարգմանությունը՝ ամենայն հավանականությամբ համեմատվելով և սրբագրվելով հունարեն թարգմանության միջոցով³:



Նկ. 3. Վեհամոր Ավետարան, 7-րդ դար: Համարվում է մեզ հասած հայերեն հնագույն ամբողջական ձեռագիրը: Պահվում է Մատենադարանում:

Այդուհանդերձ, թարգմանության տեսությամբ սկսում են լրջորեն զբաղվել 19-րդ դարի կեսերին, իսկ իբրև առանձին գիտություն՝ թարգմանաբանությունը ձևավորվել է միայն 20-րդ դարի կեսերից:

Ֆրանսախոս երկրներում թարգմանության տեսության զարգացման գործում հատկապես մեծ ազդեցություն է թողել կանադացի լեզվաբաններ **Ժան-Պոլ Վինեի** և **Ժան Դարբելենի** «Ֆրանսերենի և անգլերենի համեմատական ոճաբանություն»

³ Այս մասին տե՛ս **Աճառյան Հր.**, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 231-262:

(Jean-Paul Vinay and Jean Darbelnet. *Comparative Stylistics of French and English*) աշխատությունը, որ լույս է տեսել 1958 թ. Փարիզում: Ֆրանսիացի մեծ լեզվաբան **Ժորժ Մունենը** (Georges Mounin) «Թարգմանության տեսական խնդիրները» (*Problèmes théoriques de la traduction*. 1963), «Թարգմանության տեսություն և պատմություն» (*Teoria e storia della traduzione*. 1965) հիմնարար աշխատություններով, ինչպես նաև հետագա տարիներին լույս ընծայած բազմաթիվ հոդվածներով հսկայական ներդրում է ունեցել թարգմանաբանության իրրև գիտության կայացման գործում:

Մեծ է նաև ամերիկացի լեզվաբան **Յուլիան Նայդայի** (Eugene Albert Nida) ավանդը: Նա զբաղվել է ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից լեզուներով և Աստվածաշնչի թարգմանությամբ նվիրված մի շարք կարևոր աշխատություններ է հրապարակել (օր.՝ «Աստվածաշնչի թարգմանությունը» (*Bible Translating*. 1947), «Թարգմանագիտության շուրջ» (*Toward a Science of Translating*. 1964): Նշենք նաև շոտլանդացի լեզվաբան **Ջոն Քատֆորդի** «Թարգմանության լեզվաբանական տեսությունը» (*John C. Catford. A linguistic theory of translation*. 1965):

Կարևոր աշխատություններից են նաև չեխ գրականագետ, թարգմանության տեսաբան **Իրժի Լևիի** «Թարգմանության արվեստը» («*Искусство перевода*». 1974), բուլղար տեսաբաններ **Ս. Վլախովի** և **Ս. Ֆլորինի** «Անթարգմանելի թարգմանության մեջ» («*Непереводимое в переводе*». 1980) աշխատությունը, որը նվիրված է համարժեք չունեցող լեզվական միավորների, մասնավորապես՝ իրույթների (ռեալիա), նաև դարձվածքների, բառախաղերի թարգմանության խնդիրներին: Հետաքրքիր և կարևոր ներդրում են նաև իտալացի գրող, գրաքննադատ, փիլիսոփա **Ումբերտո Էկոյի** «Մեկնաբանության (ինտերպրետացիայի) սահմանները» (*I limiti dell'interpretazione*, 1 Ed., 1987, անգլ.՝ *The Limits of Interpretation*), «Ասել գրեթե նույն բանը» (Dire quasi la stessa

cosa. անգլ. թարգմ.՝ *Experiences in Translation. 2000*) աշխատությունները:

Թարգմանության տեսության զարգացման գործում ռուս լեզվաբանների, գրականագետների, թարգմանիչների ավանդը հսկայական է: 20-րդ դարի սկզբներին խիստ մեծանում է տարբեր լեզուներից թարգմանությունների նկատմամբ ուշադրությունը, թարգմանություններով զբաղվում են հայտնի գրողներ, բանաստեղծներ, գիտնականներ, մտավորականներ⁴:

1941-ին լույս է տեսնում **Կոռնեյ Չուկովսկու** «*Высокое искусство*» («Բարձր արվեստ») գիրքը, որը մինչ օրս արդիականությունը չի կորցրել: 1950 թ. լույս է տեսնում **Յա. Ռեցկերի** «*О закономерных соответствиях при переводе на родной язык*» («Մայրենի լեզվով թարգմանությունների օրինաչափ համապատասխանությունները») աշխատությունը, 1953-ին՝ **Ա. Ֆյոդորովի** «*Введение в теорию перевода*» («Թարգմանության տեսության ներածություն»), ապա **Վ. Կոմիսարովի** «*Слово о переводе*» (1973), «*Лингвистика перевода*» (1980), «*Теория перевода*» (1990), «*Общая теория перевода*» (1999), **Լ. Բարխուդարովի** «*Язык и перевод*» (1975), **Վ. Վինոգրադովի** «*Лексические вопросы перевода художественной прозы*» (1978), «*Введение в переводоведение*» (2001), **Ա. Շվեյցերի** «*Перевод и лингвистика*» (1978), «*Теория перевода: статус, проблемы, аспекты*» (1988) և այլ աշխատություններ: Նրանց գործը շարունակում են **Ն. Գարրովսկին** («*Теория перевода*» (2004)), **Տ. Կազակովան** («*Художественный перевод*» (2002)), «*Теория перевода*», **Վ. Սդոբնիկովը** («*Теория перевода*» (2007)): 1963 թ. -ից մինչ օրս լույս է տեսնում «**Тетради переводчика**» հոդվածների ժողովածուն:

⁴ Ի դեպ, Վալերի Բրյուսովի խմբագրությամբ և ժամանակի հայտնի գրողների, պոետների թարգմանությամբ 1916-ին լույս է տեսնում «**Поэзия Армении с древнейших пор до наших времён**» անթոլոգիան: Այլ Բրյուսովի թարգմանությամբ լույս են տեսնում Ավ. Բաախակյանի բանաստեղծությունները, Չարենցի որոշ բանաստեղծություններ թարգմանում է ռուս մեծ բանաստեղծ Աննա Ախմատովան:

ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

Մրբոց թարգմանչաց տոնը նշվում է ամեն տարի՝ հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը: Խորհրդանշում է հայոց գրերի գյուտը, Աստվածաշնչի հայերեն առաջին թարգմանությունը, թարգմանչաց շարժումն ու հայ դպրության սկիզբը: Այդ օրը Հայ առաքելական եկեղեցին նշում է վեց թարգմանիչների՝ Մեսրոպ Մաշտոցի և նրա ավագ ու կրտսեր աշակերտների՝ Եղիշեի, Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթի, ինչպես նաև Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու հիշատակը:

Թարգմանչաց տոնը Հայ առաքելական եկեղեցին նշում է տարին 2 անգամ. հունիսի վերջին կամ հուլիսի սկզբին Օշականում նշվում է Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի տոնը, իսկ հոկտեմբերին՝ Մեսրոպ Մաշտոցի ու նրա սաների առաջին թարգմանություններով սկզբնավորված հայ դպրության ու մշակույթի տոնը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Комиссаров В. Н. Общая теория перевода. М., 1999.
(https://classes.ru/grammar/113.komissarov_obshaya_teoriya_perevoda/html/unnamed.html).
2. Федоров А. В. Основы общей теории перевода. М., 2002.
(http://samlib.ru/w/wagapow_a_s/osnowyobshejteoriiperewoda2002.shtml).
3. Աճառյան Հր., Հայոց գրերը, Եր., 1984 (<https://bit.ly/2FPIQRI>):

**ԹԵՄԱ 1. ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ
ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԿԱՊԸ ԱՅԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ.
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐԸ, ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՆՈՒՅՆԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ**

Թարգմանաբանության լեզվաբանական տեսության ներկայացուցիչները գրեթե նույն կերպ են սահմանում «թարգմանություն» հասկացությունը:

Ըստ Լ. Բարխուդարովի՝ «թարգմանություն է կոչվում մի լեզվով ստեղծված տեքստի փոխակերպման պրոցեսը մի այլ լեզվով տեքստի՝ պահպանելով բովանդակային պլանը, այսինքն՝ իմաստը»⁵:

Յա. Ռեցկերը համարում է, որ «թարգմանչի խնդիրն է մի լեզվի միջոցներով փոխանցել բնագրի ամբողջական և ճշգրիտ բովանդակությունը՝ պահպանելով դրա ոճական և արտահայտչական առանձնահատկությունները»⁶:

Ա. Շվեյցերը թարգմանությունը սահմանում է իբրև «միջլեզվական և միջմշակութային միկոդմանի և երկփուլ պրոցես, որի ընթացքում առաջնային տեքստի նպատակաուղղված (թարգմանչական) վերլուծության հիման վրա ստեղծվում է երկրորդային տեքստը (մետատեքստ), որը փոխարինում է առաջնային տեքստին այլ լեզվական և մշակութային միջավայրում»⁷:

Թարգմանությունը բազմակողմանի երևույթ է, որի առանձին կողմերը կարող են դառնալ տարբեր գիտությունների ուսումնասիրության առարկա: Թարգմանության տեսությունը օգտագործում է գրականագիտության (օրինակ՝ պոեզիայի թարգմանությունն անհնարին է պատկերացնել առանց տաղաչափության ի-

⁵ **Бархударов Л.** Язык и перевод. М., 1975, с. 11.

⁶ **Рецкер Я.** Теория перевода и переводческая практика. 3-е изд., М., 2007, с. 10.

⁷ **Швейцер А. Д.** Теория перевода: Статус, проблемы, аспекты. М., 1988, с. 75.

մացության), պատմության, մշակութաբանության (սա կարևոր է, օրինակ, ֆոնային գիտելիքի համար), հոգեբանության (թարգմանության պրոցեսը տեղի է ունենում մարդկային գիտակցության մեջ), սոցիոլոգիայի և այլ գիտությունների տվյալները, մեթոդները⁸։ Սակայն թարգմանաբանությունն ամենից առաջ լեզվաբանական գիտակարգ է։ Այն հիմնվում է լեզվաբանության այլ բաժինների՝ հնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության, շարահյուսության, ինչպես նաև ոճագիտության, հանրալեզվաբանության, հոգելեզվաբանության մեթոդների ու տվյալների վրա։

Թարգմանության լեզվաբանական տեսության **առարկան** թարգմանության՝ իբրև միջլեզվական փոխակերպման (*межъязыковая трансформация*) պրոցեսի գիտական նկարագրությունն է։ Թարգմանության տեսության **խնդիրներից** են.

ա) բացահայտել և նկարագրել թարգմանության ընդհանուր լեզվաբանական հիմունքները.

բ) սահմանել թարգմանությունը որպես լեզվաբանական ուսումնասիրության առարկա, ցույց տալ թարգմանության տարբերությունը լեզվական միջնորդավորվածության այլ ձևերից.

գ) բացահայտել թարգմանության համարժեքության էությունը՝ իբրև բնագրի և թարգմանության տեքստերի հաղորդատվական (կոմունիկատիվ) հավասարարժեքության հիմք.

դ) մշակել թարգմանության մասնավոր և հատուկ տեսությունների ստեղծման ընդհանուր սկզբունքներ և առանձնահատկություններ տարբեր լեզվական զույգերի համար.

ե) մշակել թարգմանության պրոցեսի՝ իբրև բնագրի տեքստը թարգմանության տեքստի վերափոխելու թարգմանչի գործողությունների ընթացքի գիտական նկարագրության ընդհանուր

⁸ Տե՛ս, օրինակ, **Бархударов Л., Комиссаров Н.**, նշվ. աշխ.-ները։

սկզբունքներ.

զ) բացահայտել գործաբանական (պրագմատիկ) և հանրալեզվաբանական գործոնների ազդեցությունը թարգմանության ընթացքի վրա.

է) սահմանել «թարգմանության նորմ» հասկացությունը և մշակել թարգմանության որակի գնահատման սկզբունքներ նն⁹:

Թարգմանության ընդհանուր տեսությունը թարգմանաբանության բաժին է, որն ուսումնասիրում է թարգմանության ընդհանուր լեզվաբանական օրինաչափությունները՝ անկախ թարգմանության պրոցեսին մասնակից կոնկրետ լեզվական գույզի առանձնահատկություններից: ***Թարգմանության մասնավոր տեսություններն*** ուսումնասիրում են մի կոնկրետ լեզվից մյուսը թարգմանությունների լեզվաբանական տեսանկյունները: Իսկ ***թարգմանության հատուկ տեսություններն*** ուսումնասիրում են տարբեր տիպի ու ժանրերի տեքստերի թարգմանության պրոցեսի առանձնահատկությունները¹⁰:

Թարգմանության միավորը: Տեսաբանները նշում են, որ թարգմանության միավոր կարող է լինել լեզվական ցանկացած մակարդակի միավորը.

ա) *հնչույթների (գրավոր տեքստում՝ գրույթների) մակարդակ (уровень фонем/графем),*

բ) *ձևույթների մակարդակ (уровень морфем),*

գ) *բառային մակարդակ (уровень слов),*

դ) *բառակապակցական մակարդակ (уровень словосочетаний),*

ե) *նախադասությունների մակարդակ (уровень предложений),*

⁹ Տե՛ս **Комиссаров В. Н.** Теория перевода (Лингвистические аспекты). М., 1990, էջ 35-36:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 35:

զ) տեքստի մակարդակ (*уровень текста*):

Մրանից էլ կախված՝ թարգմանությունը կարող է կատարվել հնչույթների, ձևույթների, բառերի, բառակապակցությունների, նախադասությունների կամ տեքստի մակարդակով¹¹:

Համարժեքություն և նույնարժեքություն: Թարգմանաբանության կարևորագույն հարցերից մեկը թարգմանության համարժեքության (*эквивалентность, equivalence*) խնդիրն է: Որոշ տեսաբաններ նույնացնում են *համարժեքություն* և *նույնարժեքություն* (*адекватность, adequate*) տերմինները, որոշ տեսաբաններ դրանց միջև տարբերություններ են տեսնում:

Ա. Ֆյոդորովը լիարժեք (*полноценный, адекватный*) է համարում այն թարգմանությունը, որը սպառիչ կերպով փոխանցում է բնագրի բովանդակությունը և լիակատար համապատասխանում է նրան գործառական-ոճական տեսանկյունից¹²:

Ըստ Լ. Լատիշևի՝ համարժեքությունը (*эквивалентность*) թարգմանչական ամենահամապատասխան, ամենաարդյունավետ լուծումների արդյունքն է, իսկ նույնարժեքությունը (*адекватность*) լավագույն թարգմանության հասնելու ուղին է, թարգմանչական լավագույն լուծումների որոնման միջոցը, այսինքն՝ դա թարգմանության պրոցեսն է, որի արդյունքը համարժեք թարգմանությունն է¹³:

Վ. Կոմիսարովը նույնարժեք՝ ադեկվատ է համարում այն թարգմանությունը, որը լուծում է թարգմանական ակտի գործաբանական (պրագմատիկ) խնդիրները՝ այդ նպատակին հասնելու համար համարժեքության առավելագույն մակարդակով, և որը չի խախտում թարգմանության լեզվի նորմերը, կիրարկությունը

¹¹ Մանրամասն տե՛ս **Бархударов Л.**, նշվ. աշխ., էջ 175-176:

¹² Տե՛ս **Федоров А.** Основы общей теории перевода. М., 2002, էջ 148:

¹³ Տե՛ս **Латышев Л.** Перевод: проблемы теории, практики и методики преподавания. М., 1988.

(*usage*), պահպանում է տեքստի ժանրային-ոճական առանձնահատկությունները: Իսկ համարժեք՝ էկվիվալենտ է համարում այն թարգմանությունը, որը վերարտադրում է բնագրի լեզվով տեքստի բովանդակությունը համարժեքության որևէ մակարդակում: «Նույնարժեք թարգմանությունը պետք է համարժեք լինի համարժեքության այս կամ այն մակարդակում, սակայն ամեն համարժեք թարգմանություն չէ, որ նույնարժեք է»¹⁴:

Նա առանձնացնում է համարժեքության մի քանի մակարդակ.

ա) *հաղորդակցման նպատակի մակարդակ*,

բ) *իրավիճակի նույնականության մակարդակ*,

գ) *իրավիճակը նկարագրելու եղանակների մակարդակ*,

դ) *շարահյուսական կառույցների նշանակությունների մակարդակ*,

ե) *բառային նշանների մակարդակներ*¹⁵:

Օրինակ՝ «*Сколько лет-сколько зим*» (բառացի՝ «*քանի ամառ, քանի ձմեռ*») հայերեն ճիշտ կլինի թարգմանել «*հազար տարի չենք հանդիպել: էս ո՞ւր ես կորել: լույս քեզ տեսնողին*» ևն՝ կախված խոսքային իրադրությունից. սա նույնարժեք թարգմանություն է, թեև համարժեք չէ առանձին բաղադրիչների մակարդակում: Կամ՝ արգելող «*Keep off the grass!*» (բառացի՝ «*Հենո՛ւ մնացեք սիզամարգից/գազոնից*») արտահայտությունը հայերեն նույնարժեք՝ ադեկվատ կլինի թարգմանել, օրինակ, «*Միզամարզը չտորե՛ր*», թեև սա համարժեք՝ էկվիվալենտ չէ: Կամ, օրինակ, դռան վրա անգլերեն գրում են «*push-pull*» (բառացի՝ *հրել-ձգել*), նույն նպատակով հայերեն գործածում ենք «*դեպի դուրս-դեպի ներս*», ռուսերեն՝ «*от себя-к себе*». սա համարժեք չէ բառային մակարդակում, սակայն նույնարժեք է իրավիճակը նկարագրելու

¹⁴ Комиссаров В. указ. соч., с. 233-234.

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 51-69, 70-91:

եղանակների մակարդակում:

Կոմիսարովը **բառացի** (*точный или дословный перевод*) է անվանում այն թարգմանությունը, որտեղ համարժեք է թարգմանված միայն առարկայական-տրամաբանական բովանդակությունը, սակայն կան թարգմանության լեզվի ժանրային-ոճական նորմերից շեղումներ, թարգմանության լեզվի ընդունված (ուզուալ) կանոնների խախտումներ¹⁶:

Օրինակ՝ *“no one is more happy than he/she” – «ոչ ոք այնքան երջանիկ չէ, որքան նա»*՝ փոխանակ՝ *«նրա պես երջանիկ մարդ չկա/նա ամենաերջանիկ մարդն է»*: Կամ՝ *“King Lear is a tragedy written by William Shakespeare” – ««Լիր արքան» ողբերգություն է՝ գրված Վիլյամ Շեքսպիրի կողմից»*՝ փոխանակ՝ *««Լիր արքա» ողբերգության հեղինակը Վիլյամ Շեքսպիրն է»* կամ *««Լիր արքա» ողբերգությունը գրել է Վիլյամ Շեքսպիրը»*:

Բառացի և անգամ տառացի թարգմանությունները հատկապես շատ են պաշտոնական ոճի փաստաթղթերում. նման թարգմանությունը երբեմն դժվարացնում է տեքստի ընկալումը, դարձնում այն խրթին: Նկատենք սակայն, որ այս եղանակով երբեմն փոխառում ենք դարձվածքներ, թևավոր խոսքեր ևն: Օրինակ՝ հունա-հռոմեական դիցաբանությունից, Աստվածաշնչից, համաշխարհային գրականությունից փոխառած դարձվածքների, լատիներեն թևավոր խոսքերի մեծ մասը բառացի պատճենումներ են:

“Hannibal ante portas/ Hannibal ad portas” – «Հանիբալը դարպասների մոտ է», «Поймать золотую рыбку» – «ոսկե ձկնիկ բռնել» ևն:

Տառացի թարգմանությունը (*буквальный перевод*) սովորաբար աղավաղում է թարգմանության լեզուն, քանի որ այն օտար

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 234:

լեզվով տեքստի ձևական՝ ֆորմալ տարրերի պատճենում է, թարգմանության մեջ հաշվի չեն առնվում ելակետային լեզվի (ԵԼ) ու թարգմանության լեզվի (ԹԼ) առանձնահատկություններն ու տարբերությունները: Օրինակ՝ «*мне плохо*» – «*ինձ վատ է*» փոխանակ «*(ես) վատ եմ/վատ եմ զգում*», «*как тебя зовут?*» – «*ինչպե՞ս են քեզ կոչում*»՝ փոխանակ «*անունդ ի՞նչ է*»: Ստորև բերված տեքստը թարգմանվել է Google Translate-ի միջոցով. ինչպես տեսնում ենք, առայժմ մեքենական թարգմանության գործիքները հաճախ ի վիճակի չեն ընկալելու բառի բազմիմաստությունը, չեն տարբերում համանունները, չեն հասկանում համատեքստը, առավել ևս՝ ենթատեքստը, տողատակերը, թարգմանությունը հաճախ կատարվում է զուտ բառային մակարդակում, ինչը հանգեցնում է անհեթեթության.

≡ Google Переводчик

::

Перед нами стол. На столе стакан и вилка. Что они делают? Стакан стоит, а вилка лежит. Если мы воткнем вилку в столешницу, вилка будет стоять. Т.е. стоят вертикальные предметы, а лежат горизонтальные? Добавляем на стол тарелку и сковороду. Они вроде как горизонтальные, но на столе стоят. Теперь положим тарелку в сковороду. Там она лежит, а ведь на столе стояла. Может быть, стоят предметы готовые к использованию? Нет, вилка – то готова была, когда лежала. Теперь на стол залезает кошка. Она может стоять, сидеть и лежать. Если в плане стояния и лежания она как – то лезет в логику «вертикальный – горизонтальный», то сидение – это новое свойство. Сидит она на попе.

×

Մեր առջև սեղան է: Սեղանի վրա մի բաժակ և պատասպաղ է: Ի՞նչ են անում: Մի բաժակ կանգնած է իսկ պատասպաղը՝ ստում: Եթե մենք խրոջը պահենք count-top-ում, ապա վարդակից կկանգնի: Ի՞նչ ուղղահայաց առարկաներ են, բայց հորիզոնական են: Սեղանին ավելացրեք ափսի և թավա: Դրանք կստնեն հորիզոնական են, բայց կանգնած են սեղանի վրա: Հիմա ավանդ տապակի մեջ դնել: Այնտեղ նա ստում է, բայց կանգնած էր սեղանի վրա: Միգուցե կան կոպեր, որոնք պատրաստ են օգտագործման համար: Ոչ, խրոջը պատրաստ էր, երբ նա պատկեց: Այժմ կառուն բարձրանում է սեղանին: Նա կարող է կանգնել, նստել և ստել: Եթե կանգնելու և ստելու առումով ինչ-որ կերպ ստում են «ուղղահայաց – հորիզոնական» տրամաբանության մեջ, ապա նստելը նոր սեփականություն է: Նա նստած է պապի վրա:

Նկ. 4. Google Translate-ով թարգմանած տեքստ:

Իհարկե, ծրագրերը չափազանց արագ կատարելագործվում են, տարբեր լեզուներից թարգմանությունների որակը տարբեր է, և հնարավոր է՝ մոտ ապագայում գիտական, պաշտոնական ոճի տեքստերը, որտեղ չկա պատկերավորություն, բազմիմաստություն, երկիմաստություն, միայն այս ծրագրերի միջոցով թարգմանվեն: Մակայն գոնե առայժմ մեքենական թարգմանության որակը հեռու է բավարար լինելուց, հատկապես երբ խոսքը գեղարվեստական գրականության, պոեզիայի մասին է:

Առաջադրանք 1. Տրված դարձվածքները և բառակապակցությունները թարգմանված են բառացի: Հասկանալի՞ է արդյոք դրանց իմաստը: Օգտվելով բառարաններից՝ դուրս գրեք դրանց հայերեն համարժեքները¹⁷:

ш) Когда рак на горе свистнет (բոց.՝ երբ խեցգետինը սարի գլխին կսուլի) –

Идти на Кудыкину гору (բոց.՝ գնալ Կուդիկինի սարը) –

Зуб даю! (բոց.՝ ատամն եմ տալիս) –

При царе Горохе (բոց.՝ Ոլոռ ցարի օրոք) –

Не в глаз, а в бровь (բոց.՝ ոչ թե աչքին, այլ ունքին) –

բ) When pigs fly (բոց.՝ երբ խոզերը թռչեն) –

Beat/rack one's brains (բոց.՝ ուղեղը կոտրել, ջարդել) –

Crows don't pick crow's eyes (բոց.՝ ագռավը ագռավի աչք չի հանի) –

A cat nap (բոց.՝ կատվի քուն, նինջ) –

Second banana (բոց.՝ երկրորդ բանան) –

Առաջադրանք 2. Google Translate-ի միջոցով թարգմանել ստորև տրված տեքստերը: Գտնել սխալները, ուղղել:

**Machine learning has been used to automatically
translate long-lost languages**

Some languages that have never been deciphered could be the next ones to get the machine translation treatment.

In 1886, the British archaeologist Arthur Evans came across an ancient stone bearing a curious set of inscriptions in an unknown language. The stone came from the Mediterranean island of Crete, and Evans immediately traveled there to hunt for more evidence. He


¹⁷ <http://polyidioms.narod.ru/> (անցանց, բազմալեզու), <http://dict.am/> (անցանց, անգլ.-հայ.), <http://www.nayiri.com/> կայքում՝ **Անգլերեն-հայերեն բառարան (Բարաթյան Ն., Եր., 2011), Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան (Մելքումյան Ռ., Պողոսյան Պ., Եր., 1975) և:**

quickly found numerous stones and tablets bearing similar scripts and dated them from around 1400 BCE. That made the inscription one of the earliest forms of writing ever discovered. Evans argued that its linear form was clearly derived from rudely scratched line pictures belonging to the infancy of art, thereby establishing its importance in the history of linguistics. He and others later determined that the stones and tablets were written in two different scripts. The oldest, called Linear A, dates from between 1800 and 1400 BCE, when the island was dominated by the Bronze Age Minoan civilization. The other script, Linear B, is more recent, appearing only after 1400 BCE, when the island was conquered by Mycenaeans from the Greek mainland. (սղբյոսրը` <https://bit.ly/2LWVsKo>)

Армяно-кыпчакский язык

Армяно-кыпчакский язык - мёртвый язык, относимый к кыпчакско-половецкой подгруппе тюркских языков. Язык армян, подвергшихся языковой ассимиляции в Крыму в XIV-XV веках. Известен по письменным памятникам кыпчакоязычных армян, исповедовавших христианство в традиции Армянской апостольской церкви, которые жили большими колониями в городах Украины, Польши, Румынии, Молдовы, куда переселились из Крыма (в основном из Феодосии) и, возможно, из Армении после монгольского нашествия. Колыбелью армяно-кыпчакской письменности является Львов 20-30 гг. XVI в. Эпиграфические памятники свидетельствуют также о том, что в XII-XIII веках на территории Армении жили кыпчаки, которые приняли веру Армянской апостольской церкви. Один из сохранившихся монастырей комплекса Арич в Артикском районе Ширакской области Армении, построенный на рубеже XII-XIII веков, носит название Хпчачаванк (из арм. *хпчач* «кыпчак» + *ванк* «монастырь»).

Памятники, составленные армянским письмом, насчитывают десятки тысяч страниц и охватывают период с 1521 по 1669 год. Всего насчитывается 112 памятников. В библиотеках и архивных собраниях Европы хранится значительное количество армяно-кыпчакских письменных памятников церковно-религиозного содержания. Единственную печатную книгу на армяно-кыпчакском языке - «Альгыш Битики» («Молитвенник») издал во Львове в 1618 году Ованнес Кармаданец. Единственный сохранившийся экземпляр книги находится в библиотеке Лейденского университета. Это первая в мире не только кыпчакская, но и вообще тюркская печатная книга. (hwnuḡuḡuḡhḡ)



Նկ. 5. Հայ-ղիջաղերեն անուսնական պայմանագիր: Պահվում է Մատենադարանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Комиссаров В. Н. Теория перевода (Лингвистические аспекты). М., 1990.
2. Бархударов Л. Язык и перевод. М., 1975.
3. Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ: Նազարյան Ա., Բաղդասարյան Հ., Եր., 2000:

ԹԵՄԱ 2. ՆԱԽԱԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ: ՖՈՆԱՑԻՆ ԳԻՏԵԼԻՔ

Նախաթարգմանական աշխատանք: Մինչ բուն թարգմանությանն անցնելը պրոֆեսիոնալ թարգմանիչը պիտի նախաթարգմանական մեծ աշխատանք կատարի: Բացի բնագրի ու թարգմանության լեզուների փայլուն իմացությունից՝ թարգմանչից պահանջվում են բազմակողմանի գիտելիքներ տարբեր բնագավառներից, զանազան հմտություններ (սկսած համակարգչային գրագիտությունից մինչև արագ կողմնորոշվելու ունակություն):

Եթե խոսքը գեղարվեստական գրականության մասին է, թարգմանիչը պիտի բավարար գիտելիքներ ունենա տվյալ երկրի պատմության, մշակույթի, կենցաղի, ազգային առանձնահատկությունների, լեզվական ավանդույթի, ինչպես նաև տեքստի հեղինակի, նրա ապրած ժամանակաշրջանի, անհատական ոճի, տեքստում արտացոլված իրականության մասին: Առավել բարդ է պոեզիայի թարգմանությունը, քանի որ բացի վերը նշված գիտելիքներից՝ թարգմանիչը նաև պիտի պոետական ձիրք ունենա, ռիթմի բացառիկ զգացողություն, հիմնավոր գիտելիքներ տաղաչափական տարբեր համակարգերից:

Մասնագիտական, տեխնիկական տեքստերի թարգմանությունը պահանջում է տվյալ բնագավառից բավականին հիմնավոր գիտելիքներ (քանի որ հնարավոր չէ թարգմանել մի բան, որ չես հասկանում), տերմինաբանության լավ իմացություն: Օրինակ՝ իրավաբանության, բժշկության ոլորտի տեքստերի թարգմանությունը առարկայի ոչ բավարար իմացության պարագայում կարող է ճակատագրական դառնալ մարդկանց համար (ոչ ճիշտ թարգմանված ախտորոշում, ոչ ճիշտ թարգմանված ցուցմունք, մեղադրական կամ դատավճիռ են): Հատուկ գիտելիքներ է պահանջում դիվանագիտական ոլորտի տեքստերի թարգմանությունը:

նը. մասնավորապես թարգմանիչը պիտի տեղյակ լինի այլ երկրի խոսքային էթիկետից, դիմելաձևերից, կաղապարներից:

Ի. Ալեքսենյան առաջարկում է նախաթարգմանական աշխատանքի հետևյալ «սխեման»․ թարգմանությունը ոչ միայն թարգմանելու ընթացքն է, այն սկսվում է ավելի վաղ, երբ թարգմանիչը իր համար ճշտում է մի քանի կարևոր բան.

ա) տեղեկություններ տեքստի հեղինակի, տեքստը ստեղծելու ժամանակի, տեքստի հասցեատիրոջ մասին (ում է ուղղված կամ ում համար է նախատեսված).

բ) բնագրի տեքստում տեղեկույթի (ինֆորմացիա) տեսակը՝ ճանաչողական (կոգնիտիվ) տեղեկույթ, օպերատիվ տեղեկույթ, հուզական տեղեկույթ, գեղագիտական (էսթետիկ) տեղեկույթ.

գ) բնագրի տեքստի բնույթը (գիտական, տեղեկատվական, գեղարվեստական են)¹⁸:

Նախաթարգմանական ճիշտ աշխատանքն օգնում է թարգմանչին խուսափել բազմաթիվ սխալներից, նպաստում տեքստի ճիշտ ընկալմանը և վերաբաժանմանը:

Ֆոնային կամ խորքային/հենքային գիտելիքը (*фоновые знания, background knowledge*) կարևորագույն դեր ունի միջլեզվական ու միջմշակութային հաղորդակցման, թարգմանության ընթացքում: Այն ենթադրում է այլ լեզվի ու մշակույթի կրող հանրության կյանքի ու կենցաղի, ավանդույթների, խոսքային էթիկետի, տվյալ հանրության մեջ ընդունված վարքի նորմերի մասին գիտելիք: Այլ կերպ ասած՝ ֆոնային գիտելիքը սոցիալական, պատմական, ազգագրական, մշակութային առանձնահատկություններն են, հանգամանքները, որոնք ստեղծում են համապատասխան «ֆոն» տվյալ լեզվի բառերի նշանակությունների համար¹⁹:

¹⁸ Տե՛ս **Алексеева И. С.** Введение в переводоведение. СПб, 2004, էջ 324-332:

¹⁹ Տե՛ս **Толковый переводоведческий словарь.** М., 2003:

Ֆոնային գիտելիքը կարևոր է ազգային ծեսերը, սովորույթները, հավատալիքները հասկանալու համար. օրինակ՝ տառադարձումը կամ բառապատճենումը չեն կարող օտար մշակույթի կրողներին լիարժեք պատկերացում տալ, թե ինչ է Ջանգյուլումը, ատամհատիկը, Տրընդեզը (Տեառնընդառաջ): Թարգմանիչը երբեմն ստիպված է լինում դիմելու նկարագրական թարգմանության՝ տեքստում կամ ծանոթագրությամբ բացատրելով, թե ինչ ծեսի, տոնի մասին է խոսքը: Կամ՝ հայերիս մեջ ընդունված է հանգուցյալի թաղումից հետո 7-րդ օրը նշել իբրև հիշատակության օր, իսկ Ռուս ուղղափառ եկեղեցին նշում է 9-րդ օրը. համարվում է, որ մահից հետո 9-րդ օրն է ննջեցյալի հոգին կանգնում Աստծո առջև, և թարգմանիչը պիտի իմանա ու հաշվի առնի մշակութային այս տարբերությունը:

Նույն կերպ մենք չենք հասկանում հումորը, որը ֆոնային գիտելիք է պահանջում: Անգամ նույն լեզվով խոսող և նույն մշակույթը կրող տարբեր սերունդներն իրար չեն հասկանում ֆոնային գիտելիքի տարբերության պատճառով. օրինակ՝ խորհրդային տարիների հայկական ու ռուսական ֆիլմերից, մուլտֆիլմերից մեր լեզվում հայտնված բազմաթիվ թնավոր խոսքեր այսօր գրեթե անհասկանալի են անկախությունից հետո ծնված երիտասարդների համար:

Գիտելիքի պակասը զավեշտական իրավիճակի մեջ է դնում ոչ միայն թարգմանիչներին: Օրինակ՝ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը դարձավ լրատվամիջոցների քննադատության թիրախ և հեզմանքի առարկա, երբ ելույթներից մեկի ժամանակ հայտարարեց, որ ամերիկյան հնդկացիները պիտի վերադառնան իրենց հայրենիք՝ Հնդկաստան (*“As part of his plan to improve national security and combat illegal immigration, US President Donald Trump intends to send around 3 million American Indians back to where they came from – India”*).

Ինչպես հայտնի է, թվերի, գույների, բույսերի, կենդանիների սիմվոլիկան տարբեր մշակույթներում կարող է խիստ տարբեր լինել²⁰: Օրինակ՝ սոսին հայոց մշակույթում կարևոր խորհրդանիշներից է. այն համարվել է սրբազան ծառ (հիշենք Սոսյաց անտառը): Արևելյան սոսին՝ չինարին, նաև գեղեցկության, նրբագեղության խորհրդանիշ է հայ բանահյուսության մեջ. սիրած աղջկան կամ տղային չինարի ծառի հետ համեմատելը շատ տարածված է ժողովրդական երգերում, հայ գրականության մեջ: Ռուսերենում կամ անգլերենում այս ծառը չունի նման խորհուրդ, և թարգմանության ժամանակ խնդիրներ կարող են առաջանալ, քանի որ այդ մշակույթներում անբնական ու անհասկանալի, գուցե նաև զավեշտական է սիրած աղջկան *платан/Platanus*-ի հետ համեմատելը: Իսկ ռուսական մշակույթում աղջկան *береза*-ի (կեչի) հետ են համեմատում. այն երիտասարդության, նրբագեղության, գեղեցկության խորհրդանիշ է:

Կամ՝ Միխայիլ Բուլգակովի «Վարպետն ու Մարգարիտան» վեպը խորությամբ հասկանալու համար ընթերցողը, առավել ևս թարգմանիչը պիտի համապատասխան գիտելիքներ ունենա ոչ միայն Ռուսաստանի պատմությունից ու մշակույթից, 20-րդ դարի 20-30-ականների Մոսկվայից, այլև Աստվածաշնչից, քանի որ վեպում ակնարկները, զուգորդումները աստվածաշնչյան կերպարների, մոտիվների հետ չափազանց շատ են:

Տարբեր են ոչ միայն ազգերի, ժողովուրդների լեզուները, տարբեր է աշխարհը «տեսնելու» նրանց կերպը: Ավելի հեշտ է թարգմանել լեզուն, քան մշակույթը: Օրինակ՝ օտարերկրացիների, հատկապես եվրոպացիների համար բավականին տարօրինակ, արտառոց են արևելյան ժողովուրդների՝ երեխաներին սիրելու «բանաձևերը» (*մեռնեմ խելքիդ/աչքերիդ/բոյիդ, ուտեմ քեզ/*

²⁰ Այս մասին տե՛ս **Тер-Минасова С. Г.** Язык и межкультурная коммуникация. М., 2000:

լեզու/քիթիկդ): Այսպիսի դեպքերում սովորաբար իրավիճակային թարգմանություն է արվում: Բայց միաժամանակ թարգմանիչը ոչ միայն պիտի համարժեքներ փնտրի թարգմանության լեզվում, այլև կարողանա թարգմանությունն ընթերցողին փոխանցել օտար մշակույթը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե որքանով է թարգմանությունն ընթերցող հանրությանը ծանոթ այս կամ այն մշակույթը:

Երբ բրիտանացին ասում է *“It’s interesting”* (բառացի՝ *հետաքրքիր է*), դա սովորաբար ոչ թե դրական, այլ չեզոք, երբեմն անգամ բացասական իմաստ ունի. այն բրիտանացիներին բնորոշ քաղաքավարական պատասխան է, երբ տեղի ունեցող իրադարձությունները, դեպքերը, երևույթները գրեթե տպավորություն չեն թողել նրա վրա:

WHAT THE BRITISH SAY	WHAT THE BRITISH MEAN	WHAT OTHERS UNDERSTAND
■ I hear what you say	■ I disagree and do not want to discuss it further	■ He accepts my point of view
■ With the greatest respect	■ You are an idiot	■ He is listening to me
■ That's not bad	■ That's good	■ That's poor
■ That is a very brave proposal	■ You are insane	■ He thinks I have courage
■ Quite good	■ A bit disappointing	■ Quite good
■ I would suggest	■ Do it or be prepared to justify yourself	■ Think about the idea, but do what you like
■ Oh, incidentally/by the way	■ The primary purpose of our discussion is	■ That is not very important
■ I was a bit disappointed that	■ I am annoyed that	■ It doesn't really matter
■ Very interesting	■ That is clearly nonsense	■ They are impressed
■ I'll bear it in mind	■ I've forgotten it already	■ They will probably do it
■ I'm sure it's my fault	■ It's your fault	■ Why do they think it was their fault?
■ You must come for dinner	■ It's not an invitation, I'm just being polite	■ I will get an invitation soon
■ I almost agree	■ I don't agree at all	■ He's not far from agreement
■ I only have a few minor comments	■ Please rewrite completely	■ He has found a few typos
■ Could we consider some	■ I don't like your idea	■ They have not yet decided

Նկ. 6. Միանգամայն տարբեր բաներ են, թե ինչ է ասում բրիտանացին, ինչ նկատի ունի նա, և ինչ են հասկանում օտարերկրացիները:

Առաջադրանք 1.1. Դեապանի անուն-ազգանունը բուլղարերեն Мария Павлова Цоцоркова-Каймакчиева է, որտեղ Павлова-ն հայրանունն է: Ի՞նչ սխալ կա հայերեն տեքստում, և ո՞րն է սխալի պատճառը:

Դեկտեմբերի 1-ին ՀՀ-ում Բուլղարիայի դեսպան Մարիա Պավլովա Յոցորկովա-Կայմակչիևան իր հավատարմագրերը հանձնեց ՀՀ ԱԳ նախարարին: Տիկին Պավլովան վստահեցրեց, որ կներդնի առավելագույն ջանքեր՝ բարեկամ երկրների միջև հարաբերությունների խորացման և ամրապնդման նպատակով: (ԱԳՆ կայքից)

1.2. Ո՞րն է թարգմանչի թույլ տված սխալի պատճառը:

«Ամերիկյան հնդիկների»²¹ լեզենդներն ու հեքիաթները» հայերեն է թարգմանվել և տպագրվել 1973 թ.:

1.3. Ո՞ր տոնի մասին է խոսվում տեքստում: Ի՞նչ սխալ է արել թարգմանիչը:

Վատիկանի պաշտոնական ներկայացուցիչ Ֆեդերիկո Լոմբարդին չի բացառել, որ Արմավենու կիրակի²² օրը, որն այս տարի կաթոլիկները նշում են մարտի 24-ին, Հռոմի կաթոլիկ եկեղեցին կարող է նոր առաջնորդ ունենալ:

1.4. Բացատրել, թե ինչու ճիշտ չէ «железописные книги» արտահայտությունը թարգմանության մեջ:

Ուր էլ լինեմ - չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,

Զեմ մոռանա աղոթք դարձած *երկաթագիր գրքերը* մեր: (Ե. Զարենց)

Где б ни был, не забуду грусть/ напевов наших ни на миг,

Молитвой ставшие листы/*железописных наших книг*.

(Թարգմ.՝ Մ. Պավլովա)

²¹ Անգլերեն՝ **American Indians**:

²² Անգլերեն՝ **Palm Sunday**:

Առաջադրանք 2. Կարդալ տեքստը, պատասխանել մի քանի հարցի:

ա) Ո՞ր ստեղծագործությունների մասին է ակնարկվում տեքստում:

բ) Ի՞նչ է նշանակում «коммунальная квартира», և ինչո՞ւ է հիշատակվում «Патриаршие» բառը:

գ) Թարգմանե՛ք «масло» բառը այս համատեքստում՝ հիմնավորելով ձեր ընտրությունը:

На экзамен.

- Как Лев Толстой повлиял на творчество Михаила Булгакова?
- Я могу только предположить...
- Попробуйте.
- Ну, например, Анна Каренина в реальной жизни не бросилась под поезд. Чуть тронувшись умом, забытая всеми, она пережила все войны и революции и тихо доживала свой век в коммунальной квартире недалеко от Патриарших. Однажды она купила масло.....
- Пойдите, я только валидол под язык положу...



Նկ. 7. «Բուլգակովյան մոտիվներով» ձեթ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Виноградов В. С. Введение в переводоведение. М., 2001.
2. Тер-Минасова С. Г. Язык и межкультурная коммуникация. М., 2000 (<https://bit.ly/2UjU0Fe>).
3. Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ: Նազարյան Ա., Բաղդասարյան Հ., Եր., 2000:

ԹԵՄԱ 3. ԲԱՌԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԼԵԶՎԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒՅԹ (ԲՆՖՈՐՄԱՑԻԱ)

Վ. Վինոգրադովը բառի հաղորդատվական (ինֆորմատիվ) կառուցվածքի մեջ առանձնացնում է տեղեկույթի (ինֆորմացիայի) երկու հիմնական տիպեր՝ *լեզվական* (*лингвистическая инф., linguistic inf./knowledge*) և *արտալեզվական* (*экстралингвистическая инф., extralinguistic inf./knowledge*)²³:

Լեզվական տեղեկույթն ունի ներլեզվական բովանդակություն. նրանում արտացոլվում են լեզվական համակարգի օբյեկտները, նրանց միջև եղած հարաբերությունները և խոսքի շղթայի կառուցման ձևերը (օրինակ՝ բայի սեռի կարգը, գոյականի թվի, հոլովի կարգը, նախադասության անդամների կապակցման եղանակները ևն):

Վինոգրադովն առանձնացնում է արտալեզվական տեղեկույթի մի քանի տեսակ.

ա) *Իմաստային* կամ *դեմոտատիվ*, որում արտացոլված են մեզ շրջապատող աշխարհի իրական և վերացական առարկաների մասին հասկացություններն ու պատկերացումները (օր.՝ *աստիճան – 1. սանդուղքի ամեն ոտքը, նաև սանդուղք, 2. մակարդակ, 3. փուլ, էտապ, 4. անկյան կամ աղեղի չափման միավ.*):

բ) *Հուզական-արտահայտչական* (ոճական, կոնոտատիվ), որն արտահայտում է մարդկային զգացմունքներն ու հույզերը (*քնել* (չեզոք) – *շնթռել* (արհմ.)):

գ) *Սոցիոլոկալ* (սոցիալական, ոճական, սոցիալ-աշխարհագրական). այն ցույց է տալիս բառի գործածության ոլորտը: Բառերն ունեն ոչ միայն իմաստային և հուզական բովանդակություն, այլև տեղեկույթ են պարունակում իրենց սոցիալական

²³ См. у Виноградов В. С. Введение в переводоведение. М., 2001, էջ 51-52:

պատկանելության մասին (հմմտ. *ընկույզ* (գրական) – *պոպոք/պոպոկ* (խսկց.) – *կակալ* (Թիֆլիսի, Համշենի, Ուրմիայի, Կարնո բրբռ.) – *ճղոպուր* (Ղարաբաղի բրբռ.): Կամ՝ *աչք, մեջք* բառերի *աճք, մեճք* բարբառային արտասանությունը մատնում է խոսողի ոչ այնքան բարձր կրթական մակարդակը, նրա՝ այս կամ այն բարբառի կրող լինելը, սոցիալական այս կամ այն շերտին պատկանելը: Սոցիոլոկալ տեղեկությոն կիրառվում է սոցիալական միջավայրի, կերպարների բնութագրման, ինչպես նաև խոսքի կոմիզմի, հեգնանքի, զանազան ոճական էֆեկտներ ստանալու նպատակով:

դ) *ժամանակագրական* (նորաբանություններ, հնաբանություններ): Օրինակ՝ *մուշկետ, գրոշ, արասի* բառերը պատմաբաններ են, *բոլշևիկ, կոլխոզ, լիկկայան* բառերը սովետիզմ են, *պլանշետ, սմարթֆոն, բիթքոյն/բիթքոին* բառերը՝ նորաբանություն:

Նկատենք, որ կան իմաստային նորաբանություններ, որոնք լեզվի զարգացման այս կամ այն փուլում կարող են այլ իմաստ, նշանակություն ունենալ, ինչպես, օրինակ, հիշատակված *պլանշետ* բառը, որն այսօրվա իմաստից բացի ունի նաև 1. «հատուկ տախտակ, որի վրա փակցնում են տեղանքի քարտեզը, 2. կաշվե փոքրիկ պայուսակ, որտեղ դաշտային հրամանատարները պահում էին տեղանքի քարտեզը (ռազմ.) և այլ իմաստներ:

- Перечитывал "Войну и мир",
и наткнувшись на фразу
"Пьер Безухов распечатал
письмо", минут пять пытался
понять каким образом ему это
удалось и где он нашел
принтер.

*Նկ. 8. Երբ բառի իմաստը կախված է տեքստում նկարագրված
ժամանակաշրջանից:*

ե) **Ֆոնային տեղեկույթ**: Յուրաքանչյուր ազգ, ժողովուրդ, տա-
րածաշրջան ունի առանձնահատկություններ, որոնցով տարբեր-
վում է մյուսներից: Այդ առանձնահատկություններն արտացոլ-
վում են նաև լեզվի մեջ և դառնում ֆոնային (խորքային) տեղե-
կույթ: Նման տեղեկույթը բնորոշ է հատկապես ազգային ռեալիա-
ներին (իրույթ, իրակություն)՝ ծեսեր, հավատալիքներ, ազգային
խոհանոց, ազգային նվագարաններ, տիտղոսներ, կոչումներ և
պաշտոններ, չափման միավորներ: Ֆոնային տեղեկույթը բնորոշ
է նաև խորհրդանիշներին:

զ) **Դիֆերենցիալ տեղեկույթ**, որը սերտ կապված է տվյալ լեզ-
վի քերականական կարգերի և գուտ լեզվական տեղեկույթի հետ:

Սրանցից բացի՝ Վինոգրադովն առանձնացնում է նաև **դիպ-
վածային** (оказиональная), այսինքն՝ խոսքային, համատեքս-
տային տեղեկույթ: Նման տեղեկույթը երևան է գալիս միայն խո-
սելու կամ գրելու պահին, կախված է կոնկրետ համատեքստից,
խոսքային իրավիճակից և որոշվում է խոսողի մտահղացմամբ²⁴:

²⁴ Տե՛ս **Виноградов В. С.**, նշվ. աշխ., էջ 52-65:

Այս ամենը շատ կարևոր է դառնում թարգմանելիս, քանի որ հաճախ նույն դեմոստիվ իմաստն ունեցող բառերը ինչպես նույն, այնպես էլ տարբեր լեզուներում տարբերվում են հուզարտահայտչականությամբ, ժամանակագրությամբ, գործածության ոլորտներով:

Առաջադրանք 1. Ի՞նչ են նշանակում և ի՞նչ ժամանակագրական, ֆոնային տեղեկությո՞ւ են պարունակում ընդգծված բառերը, բառակապակցությունները:

- Конечно, я мог бы обратиться к частному лицу,- сказал посетитель,- мне всякий даст, но, вы понимаете, это не совсем удобно с политической точки зрения... Сын революционера и вдруг просит денег у **частника**, у **нэпмана**...

Под все мелкие изобретения муравьиного мира подводится гранитная база коммунистической идеологии. На **пузыре "Уйди-уйди"** изображается **Чемберлен**, очень похожий на того, каким его рисуют в **"Известиях"**.

В популярной песенке умный слесарь, чтобы добиться любви **комсомолки**, в три рефрена выполняет и даже перевыполняет **промфинплан**. И пока в большом мире идет яростная дискуссия об оформлении нового быта, в маленьком мире уже все готово: есть галстук **"Мечта ударника"**, **толстовка "Гладковка"**, гипсовая статуэтка **"Купающаяся колхозница"** и дамские **пробковые подмышники "Любовь пчел трудовых"**. (И. Ильф, Е. Петров, Золотой теленок)

Առաջադրանք 2. Կարդալ Ալեն Գինզբերգի «Ամերիկա» բանաստեղծությունից հատվածները և օգտվելով համացանցից՝ պատասխանել հետևյալ հարցերին.

ա) ո՞վ է Ալեն Գինզբերգը, բ) ի՞նչ գիտեք բիթնիկների

(Beatnik) մասին, գ) ուրե՞ն էն *Burroughs*-ը, *Tom Mooney*-ը, *Sacco & Vanzetti*-ն, *Scottsboro boys*-ը:

... America after all it is you and I who are perfect not the next world.

Your machinery is too much for me.

You made me want to be a saint.

There must be some other way to settle this argument.

Burroughs is in Tangiers I don't think he'll come back it's sinister.

... America I will sell you strophes \$2500 apiece \$500 down on your old strophe

America free Tom Mooney

America save the Spanish Loyalists

America Sacco & Vanzetti must not die

America I am the Scottsboro boys. (1956)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Виноградов В. С. Введение в переводоведение. М., 2001.
2. Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ: Նազարյան Ա., Բաղդասարյան Հ., Եր., 2000:

ԹԵՄԱ 4. ՀԱՄԱՏԵՔՍԸ: ԲԱՌԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ (ըստ Յա. Ռեցկերի)

Թարգմանության համար կարևորագույն դեր ունի *համատեքստը* (*контекст, context*)՝ տեքստի այն հատվածը, որը թույլ է տալիս հասկանալու այս կամ այն բառի, բառակապակցության, նախադասության իմաստը: Առհասարակ բառի իմաստը պարզ է դառնում միայն համատեքստում՝ լայն կամ նեղ առումով: Նեղ համատեքստ ասելով սովորաբար հասկանում են բառակապակցության կամ նախադասության համատեքստը: Իսկ լայն համատեքստի սահմանները հստակ գծել հնարավոր չէ. այն կարող է լինել մի քանի նախադասության, պարբերության, իսկ գեղարվեստական գրականության մեջ՝ անգամ գլխի կամ ողջ ստեղծագործության մակարդակով:

Համատեքստը չափազանց կարևոր է բազմիմաստ բառերի թարգմանության ժամանակ: Օրինակ՝ *աստիճան* բառը տարբեր բառերով կթարգմանվի «*աստիճանները բարձրանալ*», «*հինգ աստիճան տաքություն*» և «*այդ աստիճան անտարբեր*» կապակցությունների մեջ. 1-ին դեպքում՝ *ступенька*, 2-րդ դեպքում՝ *градус*, 3-րդում՝ *степень*: «*Ես տուն եմ գնում*» նախադասության մեջ «*գնում եմ*»-ի իմաստը կարող է պարզ դառնալ միմիայն լայն համատեքստից, քանի որ նեղ համատեքստը՝ ո՛չ բառակապակցության, ո՛չ անգամ նախադասության մակարդակում, հնարավորություն չի տալիս հասկանալու՝ սա *գնա՞լ* բայի անկատար ներկան է, թե՞ *գնե՞լ*: Այսինքն՝ միայն պարբերությունից կամ անգամ ողջ տեքստից կարելի է ճիշտ ընկալել նախադասությունը և թարգմանել՝ «*Я покупаю дом*» կամ «*Я иду/еду/лечу/возвращаюсь домой*»: Եվ երկրորդ դեպքում միայն լայն համատեքստը կարող է հնարավորություն տալ ռուսերենում ընտրելու ճիշտ հոմանիշ, քանի որ հայերենի *գնալ* բառը ավելի ընդհանուր իմաստ է ար-

տահայտում, իսկ ռուսերենում սրան համապատասխանում են նեղ իմաստ արտահայտող բառեր:

Յա. Ռեցկերը նշում է թարգմանության պրոցեսում բառային մակարդակի համապատասխանությունների երեք տեսակ.

1. *համարժեքներ (эквиваленты),*
2. *տարբերակային կամ համատեքստային համապատասխանություններ (вариантные и контекстуальные соответствия),*
3. *թարգմանական փոխակերպումների բոլոր տեսակները (переводческие трансформации)*²⁵:

Նա *համարժեք* է համարում բառարանային մշտական համապատասխանությունները, որոնք կախված չեն համատեքստից: Մշտական համարժեքներ ունեն հատուկ անունները (անձնանուն, տեղանուն, աշխարհագրական անուններ), նաև նեղ մասնագիտական տերմինները, մենիմաստ բառերի մեծ մասը²⁶: Օրինակ՝ անկախ համատեքստից՝ *բայ* բառն ունի մշտական համարժեք ռուսերենում՝ *глагол*, անգլերենում՝ *verb*:

Իսկ *տարբերակային կամ համատեքստային* է համարում այն համապատասխանությունները, երբ բնագրի կամ ելակետային լեզվի՝ մի նշանակություն ունեցող բառին թարգմանության լեզվում համապատասխանում են տարբեր բառեր: Համատեքստային համապատասխանություններն ի հայտ են գալիս խոսքում և կախված են համատեքստից (նեղ ու լայն իմաստով), արտալեզվական գործոններից²⁷:

Օրինակ՝ *grey* գունանունի համար հայերենի թարգմանական բառարանները տալիս են մի քանի տարբերակ՝ «1. մոխրագույն, գորշ, գորշագույն, 2. թխպոտ, ամպամած, 3. ալեհեր», թեև իբրև

²⁵ Տե՛ս **Рецкер Я.**, նշվ. աշխ., էջ 11-12:

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 13-16:

²⁷ Նույն տեղում, էջ 18-20:

գունանուն՝ grey-ը բազմիմաստ չէ: Այսինքն՝ կախված համատեքստից՝ թարգմանիչը պիտի ընտրի այս բառի համար տարբեր համապատասխանություններ՝ *grey wolf* – գորշ/մոխրագույն գայլ; *grey hair* – ալեհեղ/ալեխառն մազեր; *grey sky* – գորշ/թխպոտ/ամպամած կամ մռայլ երկինք: Grey-ի մյուս իմաստների համար կան հետևյալ համապատասխանությունները՝ 4. փխր. *անհետաքրքիր, ձանձրալի, տափակ (մարդ)*, 5. գունատ, սփրթնած (դեմքի գույնի մասին) են:

Առաջադրանք 1. Թարգմանել հայերեն՝ ուշադրություն դարձնելով, թե նույն բառը ինչ տարբերակներ կարող է ունենալ տարբեր բառակապակցություններում:

- ա) to look blue –
 a blue bruises –
 blue blood –
 once in a blue moon –
 blue jokes –
 to be in blue –
 blue boys –

- բ) военный парад –
 военная база –
 военный билет –
 военный мундир –
 военная дисциплина –
 военные преступления –

- գ) Передай привет тете Лиде.

Агентство «Регнум» передает, что боевики заняли город N.

Нападающий передал мяч в центр поля.

Он передал свою коллекцию картин в музей.

Дело передали в суд.

Он мне передал конверт, где лежали билеты на концерт.

Առաջադրանք 2. Բառարաններից դուրս գրել տրված բառերի հայերեն համարժեքները: Արդյոք դրանց անգլերեն և ռուսերեն իմաստները համընկնո՞ւմ են.

Օրինակ՝ family – ընտանիք
фамилия – ազգանուն

1. Academic –
академик –
2. Accord –
аккорд –
3. actual –
актуальный –
4. Argument –
аргумент –
5. Blank –
бланк –
6. Brilliant –
бриллиант –
7. Caucasian –
кавказец –
8. professor –
профессор –

Առաջադրանք 3. Բառարաններից դուրս գրել ընդգծված բառերի հայերեն բոլոր համապատասխանությունները: Համեմատել թարգմանության մեջ եղած տարբերակների հետ:

Никогда не разговаривайте с неизвестными

Однажды весной, в час *небывало* жаркого *заката*, в Москве, на Патриарших прудах, появились два гражданина. Первый из них,

одетый в летнюю серенькую *пару*, был маленького роста, упитан, *лыс*, свою *приличную* шляпу пирожком нес в руке, а на хорошо выбритом лице его *помещались* сверхъестественных размеров очки в черной *роговой* оправе. Второй – плечистый, рыжеватый, вихрастый молодой человек в *заломленной* на затылок *клетчатой* кепке – был в ковбойке, *жеванных* белых брюках и в черных тапочках.

(...) Попад в тень *чуть* зеленеющих лип, писатели первым *долго* бросились к пестро раскрашенной будочке с надписью «Пиво и воды». (Булгаков М. Мастер и Маргарита)

Երբեք խոսքի մի՛ բռնվեք անծանոթ մարդկանց հետ

Մի անգամ՝ զարնանք, անասելի շոգ մայրամուտին, Մոսկվայում՝ Պատրիարքական լճի մոտ, երկու քաղաքացի հայտնվեցին: Նրանցից առաջինը ամառային մոխրագույն զգեստով էր, կարճահասակ, գեր, ճաղատ, բարեձև շյապան երկծալ բռնած ձեռքում, իսկ խնամքով սափրված դեմքի վրա անբնական չափերի, սև եղջյուրի շրջանակով ակնոց էր կրում: Երկրորդը թիկնեղ, շեկ, գիսախոիվ, վանդականախշ կեպին ծոծրակին քաշած երիտասարդ էր՝ քառեկավոր վերնաշապիկով, ճմռված սպիտակ շալվարով ու սև չստերով: (...) Հասնելով նոր-նոր կանաչող լորենիների ստվերին՝ գրողներն անմիջապես նետվեցին դեպի «Գարեջուր և ջրեր» ցուցանակը կրող գույնզգույն ներկած կրպակը: (Թարգմ.՝ Ա. Հովհաննիսյան)



Նկ. 9. Համարժեքների մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Рецкер Я. Теория перевода и переводческая практика. М., 2007.
2. Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ: Նազարյան Ա., Բաղդասարյան Հ., Եր., 2000:

**ԹԵՄԱ 5. ԲԱՌԻ ՌԵՖԵՐԵՆՑԻԱԼ ԻՄԱՍՏՆԵՐԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՈՒՆԸ. ԼԻԱԿԱՏԱՐ ԵՎ ՄԱՍՆԱԿԻ
ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ (ըստ Լ. Բարխուդարովի)**

Բարխուդարովն առանձնացնում է բառի ռեֆերենցիալ, պրագմատիկ (գործաբանական) և ներլեզվական իմաստները: Շրջապատող աշխարհի առարկաները, գործողությունները, երևույթները, հատկանիշները, որոնք անվանվում են նշանի (տվյալ դեպքում լեզվական նշանի՝ բառի) միջոցով, այդ նշանի ռեֆերենտն են: Այսինքն՝ *դուռ* բառի ռեֆերենտը *դուռ* առարկան է: **Ռեֆերենցիալ** (կամ **դեռոտատիվ**) իմաստը նշանի և նշանակյալ առարկայի միջև հարաբերությունն է: **Պրագմատիկ** (գործաբանական) իմաստը նշանի և տվյալ նշանից օգտվող մարդկանց հարաբերությունն է: Իսկ **ներլեզվական** իմաստը տվյալ նշանային համակարգի մեջ գտնվող նշանների միջև հարաբերությունն է²⁸: Պրագմատիկ և ներլեզվական իմաստներին կանդրադառնանք հաջորդիվ (տե՛ս **ԹԵՄԱ 6** և **ԹԵՄԱ 13**)

Ըստ Բարխուդարովի՝ ռեֆերենցիալ իմաստների թարգմանության ժամանակ հիմնական խնդիրը, որին բախվում է թարգմանիչը, այն է, որ տարբեր լեզուների բառային միավորների իմաստային դաշտերը սովորաբար չեն համընկնում: Նա առանձնացնում է բառային միավորների համապատասխանության երեք հիմնական տիպեր.

1. լիակատար համապատասխանություն,
2. մասնակի համապատասխանություն,
3. համապատասխանությունների բացակայություն²⁹:

Լիակատար համապատասխանություններ սովորաբար ունեն մենիմաստ բառերը, և սրանց թարգմանությունը սովորաբար

²⁸ Տե՛ս **Бархударов Л.**, նշվ. աշխ., էջ 65-68:

²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 74:

մեծ բարդություն չի ներկայացնում: Դրանք են.

ա) մասնագիտական տերմինները՝ *հականիշ* – *антоним* – *антоним*, *равнобедренный треугольник* – *հավասարաթուն ե-
ռանկյուն*, *позвоночник* – *спинной мозг* – *spinal cord*,

բ) հատուկ անունները՝ *Ադամ* – *Adam* – *Адам*, *Երևան* – *Ереван* – *Yerevan*,

գ) թվականները՝ *իննսունինը* – *девяносто девять* – *ninety nine*, *յոթերորդ* – *седьмой* – *seventh*,

դ) թանձրացական գոյականներից շատերը՝ *կարտոֆիլ* – *картофель* – *potato*, *ձնծաղիկ* – *подснежник* – *snowdrop*, *պանիր* – *сыр* – *cheese*,

ե) գիտություն/ուսմունք/ուղղություն անվանող բառերը՝ *ա-
ստղագիտություն* – *астрономия* – *astronomy*,

զ) ամսանունները, շաբաթվա օրերի անունները՝ *երկուշաբ-
թի* – *понеделник* – *Monday* (թեև որոշ բացառություններ կարող
են լինել, ինչպես, օրինակ, հայերեն *շաբաթ*-ը նշ. է. «1. 7 օրը *միա-
սին*, 2. *շաբաթվա օրերից մեկի անունը*», իսկ ռուսերեն *суббота*-ն
մենիմաստ է):

Ավելի հաճախ են հանդիպում **մասնակի համապատասխա-
նության** դեպքերը.

ա) ԲԼ-ի (բնագրի լեզու) կամ ԵԼ-ի (ելակետային լեզու) որևէ
բառին ԹԼ-ում (թարգմանության լեզու) կարող է համապատաս-
խանել մի քանի համարժեք, ընդ որում՝ պարտադիր չէ, որ ԲԼ-ի
բառը լինի բազմիմաստ. պարզապես այն կարող է ավելի լայն
իմաստ արտահայտել, քան ԹԼ-ի՝ համապատասխան իմաստով
բառը: Օրինակ՝ անգլ. *information* բառին հայերեն համապատաս-
խանում են «1. տեղեկատվություն, 2. լրատվություն, 3. հաղոր-
դատվություն, 4. տեղեկույթ» բառերը, քանի որ անգլերեն բառն ա-
վելի լայն իմաստ ունի, քան հայերեն համապատասխանություն-
ներից յուրաքանչյուրը:

բ) ԲԼ-ի և ԹԼ-ի բառերը կարող են ունենալ ինչպես համընկնող, այնպես էլ տարբերվող իմաստներ: Օրինակ՝ հայերենում տուն բառն ունի «1. բնակարան, 2. բնակության կամ հիմնարկ/ձեռնարկությունների համար շենք, շինություն (մշակույթի տուն), 3. մարդու մշտական բնակավայրը՝ քաղաք, գյուղ, 4. ընտանիք, գերդաստան, 5. ազնվական տոհմ, 6. թագավորական տոհմ, դինաստիա, 7. բանաստեղծության տուն, 8. սենյակ, 9. երդ, ծուխ» իմաստներ, ռուսերեն համարժեք *дом*-ն ունի «1. բնակելի կամ հիմնարկ/ձեռնարկությունների համար նախատեսված շենք/շինություն, 2. բնակարան, կացարան, 3. դինաստիա, տոհմ, 4. ընտանիք, 5. հիմնարկ, ձեռնարկություն, որ ծառայում է հասարակական այս կամ այն կարիքների համար» իմաստներ, իսկ անգլերեն *home*-ը՝ «1. բնակարան, 2. ընտանիք, ընտանեկան օջախ, 3. հայրենիք, բնօրրան, 4. ապաստան, օթևան» իմաստներ:

Մրանք, ինչպես տեսնում ենք, ունեն թե՛ համընկնող, թե՛ տարբերվող իմաստներ: Հաշվի առնենք նաև այն, որ բառարանային համարժեքը կարող է ունենալ նաև այլ՝ մշակութային տարբերություններ:



Նկ. 10. Տարբեր ազգերին բնորոշ տների (կացարանների) տեսակներ:

զ) ԲԼ-ի բառը կարող է ունենալ չտարբերակված, ավելի ընդհանուր իմաստ, ինչպես, օրինակ, հայերենի *ամուսնանալ* բայը, որին ռուսերենում համապատասխանում են կոնկրետ իմաստ ունեցող բառեր՝ *жениться*՝ տղամարդկանց համար, և *выйти замуж*՝ կանանց համար (*նա ամուսնացած է* – 1. *он женат*, 2. *она замужем*): Նշենք, որ հայերենում ունենք նաև *կին առնել/մարդու գնալ* տարբերակները, սակայն սրանք հնացած կամ բարբառային են: Անգլերենի համապատասխան բայը ևս հայերենի նման ավելի ընդհանուր իմաստ ունի՝ *to get married*: Կամ՝ ռուսերենի *дядя*-ին, անգլերենի *uncle*-ին հայերենում համապատասխանում են կոնկրետ իմաստով բառեր՝ 1. *քեռի/մորեղբայր*, 2. *հորեղբայր*, 3. *քեռու, մորաքրոջ, հորեղբոր կամ հորաքրոջ կին/ամուսին*:

ԲԼ-ի բառը կարող է տեսականիշ լինել (*гипоним*), որին ԹԼ-ում համապատասխանի սեռանիշ բառ (*гипероним*). օրինակ՝ հայ. *կարագ, յուղ, ձեթ* բառերը տեսականիշ են, այնինչ ռուս. *масло*-ն սեռանիշ է, և թարգմանության ժամանակ հարկ է լինում կոնկրետացնելու իմաստը՝ *կարագ* – *сливочное масло*, *յուղ* – *топленое масло*, *ձեթ* – *растительное масло* (*масло*-ն ունի նաև «*յուղաներկ*» իմաստը):

դ) Բնագրի բազմիմաստ բառին թարգմանության լեզվում կարող են համապատասխանել տարբեր բառեր: Օրինակ՝ հայերեն բազմիմաստ *կին* բառին ռուսերենում և անգլերենում համապատասխանում են երկու տարբեր բառեր՝ 1. *женщина*, 2. *жена* և 1. *woman*, 2. *wife*:

ե) Բառի իմաստը, ինչպես արդեն ասել ենք, սովորաբար կախված է համատեքստից՝ լայն կամ նեղ առումով: Խոսքն ամենից առաջ վերաբերում է կայուն բառակապակցություններին, այդ թվում և դարձվածքներին: Օրինակ՝ *public house*-ը հասարակաց/հանրային/հասարակական տունը չէ, այլ պանդոկը, գարեջրատունը, ներկայացման *first night*-ն էլ ոչ թե առաջին գիշերն

է, այլ պրեմիերան, առաջնելույթը: Միսլ թարգմանության պատճառ այս դեպքում դառնում են բնագրի լեզվի վատ իմացությունը, իրակությունները չհասկանալը, բառերի կապակցելիությունը հաշվի չառնելը, սխալ հոմանիշ ընտրելը³⁰:

Բառարանային համարժեք չունեցող բառաշերտ: Բառարանային համապատասխանություններ սովորաբար չեն ունենում *հրակությունները* (ռեալիա, իրույթ)՝ ազգային ճաշատեսակների, նվագարանների, տոների անվանումները, դրամական ու չափման միավորները, տիտղոսները, տարաշխարհիկ բույսերի, կենդանիների, թռչունների, տվյալ ազգին, ժողովրդին կամ տարածաշրջանին բնորոշ կենցաղային իրերի անվանումները: Սրանք սովորաբար թարգմանվում են տառադարձման/գրադարձման միջոցով (ավելի մանրամասն տե՛ս **ԹԵՄԱ 8**):

Առաջադրանք 1. Թարգմանել ռուսերեն և/կամ անգլերեն (հաշվի առեք, որ որոշ բառակապակցություններ կարող են բազմիմաստ լինել):

- ա) կապ ունենալ մեկի հետ –
կապ ունենալ մի բանի հետ –
մի կապ կանաչի –
կապի միջոց –
- բ) դավաճանել հայրենիքին –
դավաճանել կնոջը/ամուսնուն –
դավաճանել սկզբունքներին –
- գ) ձեռք մեկնել –
ձեռքը մեկնել –
մեկնել քաղաքից –
միտքը մեկնել –

³⁰ Տե՛ս **Бархударов Л.**, նշվ. աշխ., էջ 74-106:

- դ) երեխա պահել –
- զադտնի պահել –
- իրերը պահել պահաբանում –
- իրեն լավ պահել –

Առաջադրանք 2. Թարգմանել նախադասությունները:

1. Dictionaries are usually printed on thin paper.
2. There was an interesting article on vegetarianism in the paper yesterday.
3. It is not correct to include the article 'a' before a plural noun.
4. An article of clothing was found near the river.
5. They were fed with banana, papaya and raisins, and an assortment of water-containing articles was kept in the cage.
6. Keep medicines in a locked cupboard.
7. Does your watch keep good time?
8. You won't be able to keep it secret forever.
9. Keep calm and be happy!
10. Milk keeps much longer in a fridge.

Լեզվաբանական հումոր

No English dictionary has been able to explain the difference between the two words "COMPLETE" and "FINISHED". Some people say there is no difference between "COMPLETE" and "FINISHED", but there is. When you marry the right woman, you are COMPLETE and when you marry the wrong woman, you are FINISHED! When your wife catches you with another woman you are COMPLETELY FINISHED and when your wife likes shopping so much you are FINISHED COMPLETELY!!

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бархударов Л. Язык и перевод. М., 1975.

**ԹԵՄԱ 6. ԲԱՌԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ (ՊՐԱԳՄԱՏԻԿ)
ԻՄԱՍՏՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(ըստ Լ. Բարխուդարովի)**

Ինչպես արդեն ասվել է (տե՛ս **ԹԵՄԱ 5**), բառի գործաբանական (պրագմատիկ) իմաստը նշանի ու այդ նշանից (նշանային համակարգից) օգտվող մարդկանց հարաբերությունն է: Լ. Բարխուդարովն ընդգծում է, որ թարգմանության ժամանակ ամենից դժվարը գործաբանական իմաստները թարգմանելն է. հաճախ նույն ռեֆերենցիալ իմաստն ունեցող բառերը տարբերվում են հենց գործաբանական իմաստներով: Նա առաջարկում է գործաբանական նշանակությունների դասակարգման հետևյալ սխեման³¹.

1. **Բառի ոճական բնութագիր.** բառերը կարող են պատկանել տարբեր ոճական շերտերի (չեզոք, գրական, գրքային, առօրյա-խոսակցական, տերմինային ևն): Եվ միշտ չէ, որ ԲԼ-ի այս կամ այն ոճական շերտին պատկանող բառը ԹԼ-ում ունի համապատասխան համարժեք:

Օրինակ՝ ռուս. *лик*-ը հայերեն թարգմանվում է *դեմք, երես*, սակայն սրանք չեզոք ոճի բառեր են, այնինչ *лик*-ը բարձր ոճի է: *Раздевалка* (հանդերձարան), *кафешка* (փոքրիկ սրճարան), *бабки*, *бабло* (փող) բառերը ռուսերենում խոսակցական են, և սրանց համար հայերենը չունի համապատասխան խոսակցական բառեր: Կամ՝ հայերենում կա խոսակցական *քոք* (ծառի արմատ նշանակությամբ) բառը, որի ռուսերեն ռեֆերենցիալ համարժեքը՝ *корень*, չեզոք է, խոսակցական *нога*, *длен* բառերի համար ռուսերենն ունի միայն չեզոք տարբերակներ՝ *нога, рука* (այլ հոմանիշները՝ *лапы, костыли* ևն, ցածր ոճի են՝ գոեհիկ, արհմ.):

³¹ Տե՛ս **Бархударов Л.**, նշվ. աշխ., էջ 106-132:

2. **Բառի ռեգիստր.** այն խոսքային իրավիճակը, իրադրությունը, որում գործածվում է բառը: Ըստ այդմ՝ լեզվաբանն առանձնացնում է *ա) մտերմիկ, բ) անմիջական, գ) չեզոք, դ) պաշտոնական, ե) հանդիսավոր* խոսքային իրադրություններ: Օրինակ՝ տարբեր խոսքային իրավիճակներում ենք գործածում հետևյալ հոմանիշները՝ *մեռնել – մահանալ (չեզոք) – վախճանվել – զոհվել – ընկնել հերոսի մահով (պաշտոնական) – հոգին ավանդել – զնալ ի վերին Երուսաղեմ (հանդիսավոր) – սատկել – ոտները տնկել (ոչ պաշտոնական, արհմ.):*

3. **Բառի հուզական երանգավորում.** բառերը կարող են արտահայտել չեզոք, դրական կամ բացասական վերաբերմունք: Եվ թարգմանության լեզվում կարող են չլինել համապատասխան երանգավորումով համարժեքներ. օրինակ՝ *зимужка*-ն (*зима*՝ ձմեռ) բառից՝ փաղաքշական ածանցով) ռուսերենում դրական վերաբերմունք է արտահայտում, իսկ հայերենում *ձմեռ* բառի համար չունենք համապատասխան վերաբերմունքով բառ:

4. Բառի գործաբանական իմաստների հետ սերտորեն կապված է նաև բառի **փոխաբերական իմաստը**: Շատ հաճախ ԲԼ-ում ու ԹԼ-ում իրարից տարբերվում են նույն ռեֆերենցիալ իմաստն ունեցող բառերի փոխաբերական իմաստները: Օր.՝ հայ. *հորթ* բառը հիմնական իմաստից բացի ունի նաև փխբ. «*տկարամիտ, մանկամիտ, անհասկացող*» իմաստը, իսկ ռուս. բառարանային համարժեքը՝ *теленок*, նման փխբ. իմաստ չունի (թեև ռուսերենում կա «*телячий восторг*» արտահայտություն, որ նշանակում է «*անիմաստ, անհիմն ուրախություն, հրճվանք*»):

Գործաբանական իմաստների թարգմանությունը դժվար է, սակայն անհնարին չէ:

Օրինակ՝ *թարախ* բառը, հիմնական իմաստից բացի, խոսակցական արևելահայերենում ունի «*վատ, չար, չարհոգի մարդ*» փոխաբերական իմաստը, իսկ ռուսերեն բառարանային համար-

ժեքը՝ *гной*, նման փոխաբերական իմաստ չունի: Եվ կախված համատեքստից, խոսքային իրավիճակից՝ բառը կարող է թարգմանվել այլ ռեֆերենցիալ իմաստ ունեցող բառով, բառակապակցությամբ, դարձվածքով՝ *гнида, мразь, зараза* են: Նույն կերպ այլ բառերով, բառակապակցությամբ կարող են թարգմանվել *չոփ-ը* (փխբ. (խսկց., արհմ.) *շատ նիհար մարդ*) – *скелет, селетка, глиста* (ռուս. կա նաև «*худой как щепка*» դարձվածք («*չոփի պես նիհար*»); *кошка драная* (խսկց., արհմ. (նշ. է «շատ նիհար, խղճուկ տեսք ունեցող կին, սովորաբար թեթևաբարո») – *ներկած կաշաղակ*:

Ոճականորեն երանգավորված բառը չեզոք համարժեքով թարգմանելը կարելի է փոխհատուցել այլ՝ բառային միջոցներով, օրինակ՝ ավելացնելով ածականներ.

народишко (արհմ.) – *թշվառական/քոսոտ ազգ/ժողովուրդ*; *домишко* (նվզ., արհմ.) – *խղճուկ/քոսոտ տուն*; *հյուղակ* են:

Հնարավոր է ոճականորեն երանգավորված բառի փոխարեն տեքստի այլ հատվածում գործածել նույնպիսի երանգավորում ունեցող այլ բառ, արտահայտություն, ձևաբանական կամ շարահյուսական միջոցներ: Օրինակ՝ եթե բնագրում խոսակցական տարրեր կան, որոնք ոճականորեն համապատասխան տարրերակներ չունեն հայերենում, կարելի է պակասը լրացնել խոսակցականին հատուկ ձևաբանական, շարահյուսական, բառակազմական միջոցներով (ավելի մանրամասն տե՛ս **ԹԵՄԱ 15**-ում «փոխհատուցում»):

Առաջադրանք 1. Բառարաններից գտնել հետևյալ բառերի փոխաբերական իմաստները հայերենում, ռուսերենում և անգլերենում: Համընկնո՞ւմ են արդյոք դրանք:

Օրինակ՝ **հավ** – փխբ. 1. մոռացկոտ, 2. միամիտ, 3. խեղճ, խեղճուկրակ; **курица** – փխբ. 1. հիմար, անխելք կին/աղջիկ, 2. мокрая

курица – փխր. խղճուկ տեսք ունեցող, նաև կամագուրկ, թուլակամ մարդ; **chicken** – փխր. վախկոտ:

կով –

խոզ –

էջ –

դղում –

թուրթակ –

կապիկ –

այծ –

Առաջադրանք 2. Թարգմանել հայերեն:

2.1. ա) – Он совсем не похож на больного! Выглядит как огурчик!

բ) – Ну ты и козел, Вася!

գ) – Зайка, не мешай папе, он работает.

դ) Из серой мышки она превратилась в утонченную красавицу.

ե) – А что тут делает эта кобыла?

2.2. ա) She walked in as cool as a cucumber, as if nothing had happened.

բ) Andy is 70 but he is full of beans.

գ) “The facts are there and he’s a bad egg,” Marilyn Orange said.

դ) Lisa had ants in her pants the day before her interview.

ե) My sister is such a copycat.

զ) How can you be fresh as a daisy so early in the morning?

Առաջադրանք 3. Օգտվելով անգլերեն բառարաններից՝ բացատրել հետևյալ հոմանիշների ոճական, վերաբերմունքային,

նրբերանգային տարբերությունները³²: Թարգմանել տրված նախադասությունները:

ա) *Slim, Skinny, Slender, Thin* -

She has a lovely slim figure.

You should eat more - you're too skinny.

He is a tall, slender man.

Thin, hungry dogs roamed the streets.

բ) *Cheap, Frugal, Economical* -

It was about sunset, and the family were at their frugal meal.

He bought some cheap shoes that fell apart after a couple of months.

He's so cheap we didn't get a pay raise this year.

With rents so high, it wasn't economical to continue to live in the city.

ԳԻՏԵՔ, ՈՐ...

Աստվածաշնչի լատիներեն թարգմանության մեջ եւս մի հայտնի սխալ կա, որը տարածվել է նաև այլ լեզուներում: Թարգմանիչը շփոթել է *κάμηλος* (ռկտ) և *κάμιλος* (պարան) բառերը: Խոսքը Մատթեոսի Ավետարանից մի հատվածի մասին է. «*It is easier for a camel to go through the eye of a needle than for a rich man to enter the kingdom of God*» (անգլ.), «*Легче верблюду пройти сквозь игольное ушко, чем богатому войти в Царствие небесное*» (ռուս.): Հայերեն թարգմանությունների մեջ այս սխալը չկա. «*Դարձեալ ասեմ ձեզ. դիրիւն է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան. քան մեծատան յարքայութիւն ա'յ մտանել*»³³:

³² <https://dictionary.cambridge.org>, <https://www.oxfordlearnersdictionaries.com/>, <https://www.merriam-webster.com/dictionary/dictionary>.

³³ **Օսթ.**: Հայերենում « ՚ » նշանը կոչվում է պատվո նշան. **Ա'յ** նշանակում է «Աստուածոյ» (= Աստծո), **Մ'ք** = Մուրք, **Ա'ծ** = Աստված են:



Նկ. 11. Մխալ թարգմանության «շնորհիվ» ուղիորդ անցնում է ասեղի ծակով/ծակից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бархударов Л. Язык и перевод. М., 1975.

ԹԵՄԱ 7. ՀԱՐԱՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, ԶՈՒԳՈՐԴՈՒՄ, ԽՈՐՀՐԱՆԻՇ

Հարանշանակությունը (հարիմաստություն) կամ **կոննոտացիան** (*connotation, коннотация*) բառի լրացուցիչ, հարակից իմաստն է: Այն սերտ առնչություն ունի գործարանական իմաստների հետ (տե՛ս **ԹԵՄԱ 6**):

Ըստ «Լեզվաբանական հանրագիտական բառարանի»՝ դենոտատը մեզ շրջապատող իրականության առարկան կամ երևույթն է, որի հետ հարաբերակցվում է տվյալ լեզվական միավորը, իսկ կոննոտացիան լեզվական միավորի հուզական-գնահատողական կամ ոճական երանգավորումն է, որ կարող է լինել սովորական՝ տվյալ լեզվի համակարգում հաստատված, ընդունված (*узуальный*) կամ դիպվածային (*оказиональный*)³⁴:

«Լեզվաբանական տերմինների բառարան-տեղեկատուն» հարանշանակությունը սահմանում է իբրև «այն լրացուցիչ իմաստային կամ ոճական նրբերանգները, որ դրվում են բառի հիմնական նշանակության վրա և ծառայում հուզարտահայտչական երանգավորման համար՝ խոսքին հաղորդելով հանդիսավորություն, անմիջականություն, մտերիմիկ երանգ ևն»³⁵:

Բարխուդարովը կոննոտացիա՝ հարակից իմաստ ասելով նկատի ունի այն լրացուցիչ զուգորդությունները (ասոցիացիա), որ բառն առաջացնում է լեզվակիրների գիտակցության մեջ: Նա հարակից իմաստը չի համարում բառի իմաստային կառուցվածքի բաղադրիչ: Բարխուդարովը օրինակ է բերում ռուսերեն *черемуха* (թխենի, բեկտենի) բառը, որը ռուս լեզվակիրների հա-

³⁴ Ст'я **Лингвистический энциклопедический словарь.** /Под. ред. В. Н. Ярцевой; М., 1990. (Էլեկտրոնային տարբերակը՝ <http://lingvisticheskiy-slovar.ru/>):

³⁵ **Розенталь Д. Э., Теленкова М. А.** Словарь-справочник лингвистических терминов. М., 1976.

մար գուգորդվում է գարնան, բնության հետ, իսկ անգլիացու համար այն ուղղակի բուսանուն է և ոչ մի զգացմունք չի առաջացնում³⁶:

Ըստ լեզվաբան Յու. Ապրեսյանի՝ հարիմաստությունը գործաբանական տեղեկության մի տեսակ է, որն արտացոլում է ոչ թե շրջապատող իրականության առարկաներ ու երևույթներ, այլ դրանց նկատմամբ վերաբերմունքը: Ի տարբերություն գործաբանական նշանակությունների այլ տեսակների՝ դա ոչ թե տվյալ լեզվով խոսող անհատի, այլ նրա՝ իբրև տվյալ լեզվական հանրության ներկայացուցչի վերաբերմունքն է³⁷:

Նույն ռեֆերենցիալ իմաստն ունեցող բառերը կարող են տարբերվել կոննոտատիվ՝ հարակից իմաստներով թե՛ մի լեզվի շրջանակներում, թե՛ երկու տարբեր լեզուներում: Օրինակ՝ մարդուն բնութագրող *տարօրինակ* և *արտասովոր* բառերը հայերենում ունեն նույն դենոտատիվ իմաստը, սակայն տարբեր կոննոտացիա ունեն, արտահայտում են տարբեր վերաբերմունք. *տարօրինակ մարդ*՝ սովորաբար բացասական, իսկ *արտասովոր մարդ*՝ ընդգծված դրական: Քիչ չեն դեպքերը, երբ թարգմանության ժամանակ սա խնդիրներ է առաջացնում, քանի որ բառարանային համարժեքը կարող է այլ վերաբերմունք արտահայտող բառ լինել: Նույն ռեֆերենցիալ իմաստն ունեցող *էջ* և *ալփանակ* բառերը տարբերվում են հարակից իմաստներով. *էջ*-ն ունի բացասական, վիրավորական կոննոտացիա, իսկ *ալփանակ*-ը՝ չեզոք: Նույն կերպ ռուսերենում տարբեր կոննոտացիա ունեն *осел* և

³⁶ St' u Бархударов Л., նշվ. աշխ., էջ 123-124:

³⁷ Մեջբերումն ըստ «Кругосвет», Универсальная научно-популярная онлайн-энциклопедия-ի, Апресян Ю. Д. Коннотации как часть прагматики слова. – В кн.: Ю. Д. Апресян. Избранные труды, т. 2. Интегральное описание языка и системная лексикография. М., 1995

(http://www.krugosvet.ru/enc/gumanitarnye_nauki/lingvistika/KONNOTATSIYA.html?page=0,0):

ишак հումանիշները. *осел*-ը համառություն, նաև բթամտություն է խորհրդանշում, իսկ *ишак*-ը՝ չարչարանք, շատ աշխատել: Եվ «էշի պես աշխատել» դարձվածքը ռուսերեն ավելի ճիշտ է թարգմանել հենց *ишак*-ով, ոչ թե *осел*-ով՝ *работать как ишак, ишачить*, իսկ «էշի պես համառ»-ը՝ *упрямый, как осел*.

Լեզվում հարանշանակության առաջացումը պայմանավորված է մշակութային, քաղաքական, պատմական, սոցիալական, կրոնական, հոգեբանական և այլ գործոններով ու հանգամանքներով: Օրինակ՝ *թուրք* բառը պատմական հանգամանքների բերումով հայերենում ձեռք է բերել հարակից «դաժան, արյունարբու» իմաստ: Ժամանակի ընթացքում բառերի կոննոտատիվ իմաստները կարող են փոփոխվել: Ժամանակին *դեբիլ, իդիոտ, դաուն, իմբեցիլ* բառերը բժշկական տերմիններ էին, սակայն վերջին մի քանի տասնամյակում դրանք խոսակցական լեզվում ընդգծված բացասական, արհամարհական կոննոտացիա են ստացել, այդ պատճառով դադարել են բժշկական գրականության մեջ գործածվելուց: Կամ՝ *նեգր* բառն այսօր անգլերենի ազդեցությամբ համարվում է արհամարհական, վիրավորական, թեև մինչև վերջին ժամանակներս այն հայերենում չունեի ընդգծված արհամարհական երանգ: Այսօր կոպիտ կամ վիրավորական, ոչ պոլիտկոռեկտ են համարվում *հաշմանդամ, կույր, մտավոր հետամնացություն* բառերը, որոնք փոխարինվում են «այս կամ այն տեսակի խնդիրներ ունեցող» բառակապակցությամբ:

Շարանշանակությունը կապված է նաև **զուգորդությունների** (*սոցիալիզմ, ассоциация, associations*) և **խորհրդանիշների** (*символ, symbols*) հետ: Սոցիալիզմի (զուգորդություն, զուգորդում) հոգեբանության մեջ սահմանվում է իբրև հոգեկան երևույթների՝ պատկերների, հասկացությունների, մտքերի, պատկերացումների, զգացմունքների միջև կապ, երբ դրանցից մեկի առա-

ջանալը խթան է հանդիսանում մյուսի ի հայտ գալու համար³⁸:

Ինչպես տարբեր լեզուներում, տարբեր մշակույթներում նույն ռեֆերենցիալ իմաստով բառերը կարող են տարբեր վերաբերմունք արտահայտել կամ ունենալ տարբեր փոխաբերական իմաստներ, այնպես էլ կարող են տարբեր զուգորդումներ առաջացնել լեզվակիրների գիտակցության մեջ: Եվ թարգմանչի համար սա կարող է խնդիր դառնալ: Օրինակ՝ *ձմեռ* բառը մեր կլիմայական պայմաններում սովորաբար զուգորդվում է *ցուրտ, ձյուն, սպիտակ, Նոր տարի, թեյ* և այլ բառերի հետ, սակայն նման զուգորդումներ չեն առաջանում այն մշակույթներում և լեզուներում, որտեղ ձյուն գրեթե երբեք չի գալիս: Կամ՝ *կռունկ*-ը (թռչունը) հայերիս համար ամենից հաճախ զուգորդվում է *Կոմիտաս, կարոտ, պանդուխտ/պանդխտություն*, ապա՝ *հայրենիք, արագիլ, խաբրիկ, թռչուն, երկինք* բառերի հետ³⁹, իսկ ռուսերենում *журавль*-ը (կռունկ) զուգորդվում է *թռչուն, երկինք, թներ, կտուց, թռիչք, ոտքեր, երաշտահավ* բառերի հետ⁴⁰: Ակնհայտ է, որ ուրիշ ոչ մի լեզվում կռունկը չի զուգորդվում Կոմիտաս վարդապետի հետ. սա զուտ հայերենի լեզվակիրներին բնորոշ զուգորդում է, քանի որ մեծ մասը ծանոթ է ժողովրդական «Կռունկ» երգի կոմիտասյան մշակմանը:

Կան այս կամ այն սեռի հետ զուգորդվող մասնագիտություններ. օրինակ՝ հայերենում, որը չունի գոյականի սեռի քերականական կարգ, *ձկնորս, որսորդ, գինեգործ* բառերը հստակ զուգորդվում են արական սեռի հետ, իսկ *դայակ, դաստիարակ, մատնա-*

³⁸ St' u **Большой медицинский словарь**. 2000 (<http://med.niv.ru/doc/dictionary/big-medical/index.htm>):

³⁹ Հարցումն անցկացրել ենք ֆեյսբուքյան խմբերից մեկում, մասնակցել է մոտ 400 մարդ՝ տարբեր տարիքի, սեռի և կրթության (հղումը՝ <https://web.facebook.com/groups/230828630314947/permalink/2357779134286542/>):

⁴⁰ Մեջբերում ենք ըստ <https://kartaslov.ru/> կայքի (զուգորդումների առցանց բարարան):

հարդար, հավաքարար բառերը՝ իգական սեռի: Կան նաև այս կամ այն սեռի հետ զուգորդվող հատկանիշներ՝ արական – *հարբեցող, թիկնեղ, մկանուտ*, իգական – *նրբակազմ, լացկան, լաչառ*:

Հոգեկեզվաբանության մեջ հայտնի է «լեզվաբանական ասոցիատիվ գիտափորձի» մեթոդը, որի նպատակը բառերի ասոցիատիվ փոխադարձ կապերը պարզելն ու վերլուծելն է, ինչպես նաև ասոցիացիաների բառարաններ կազմելը⁴¹:

Հարանշանակությունն առնչվում է նաև **խորհրդանիշների** (սիմվոլ) հետ: Օրինակ՝ բոլոր ժողովուրդների մեջ էլ տարածված է գույների սիմվոլիկան⁴²: Պայմանավորված տվյալ ժողովուրդների մշակույթով՝ գույները կարող են նույն, նման կամ տարբեր խորհուրդ ունենալ: Խորհրդանիշ կարող են լինել թվերը, բույսերը, կենդանիները, ծիսական առարկաները: Վերը հիշատակված *կռունկ* թռչունը հայերենում պանդխտություն, հայրենաբաղձություն է խորհրդանշում, Ճապոնիայում, Չինաստանում՝ իմաստություն, երկարակեցություն, ազնվություն: Քրիստոնեության մեջ ձուկը խորհրդանշում է Հիսուս Քրիստոսին, չինական դիցաբանության մեջ այն հարստության, բարեկեցության, առատության խորհրդանիշն է:

Ռուսական բանահյուսության (*фольклор*) մեջ *черемуха*-ն (թխենի) ամենից հաճախ հանդիպող ծառանուն-սիմվոլներից է. այն խորհրդանշում է քնքշություն, երիտասարդություն, նաև գարնան գալուստը: Այս նրբիբան ծառը հաճախ է հանդիպում Սերգեյ Եսենինի պոեզիայում: Հայերեն բառարանային համարժեքը՝ *թխենի*-ն, մեր բանահյուսության մեջ, պոեզիայում, առհասարակ

⁴¹ St' u, օրինակ, **Долинский В. А.** Экспериментальные исследования вербальных ассоциаций в квантитативной лингвистике. Вестник МГЛУ, 2011, էջ 26-28 (հղումը՝ <https://goo.gl/tdsTuQ>):

⁴² Գույների սիմվոլիկայի մասին տե՛ս, օրինակ, **Серов Н. В.** Цвет культуры. С.-П., 2003, Աստվածաշնչում գույների խորհրդի մասին՝ <http://www.ridingthebeast.com/-articles/colors/>:

րակ լեզվում չունի նման խորհուրդ, չի առաջացնում գուգորդումներ ձյան հետ, ինչպես ռուսերենում է (քանի որ *черемуха*-ն ճերմակ, նուրբ ծաղիկներ ունի), սակայն հայերեն թարգմանության մեջ այլ բուսանունով փոխարինելը կիսախտեր բնագրի ազգային առանձնահատկությունները.

Сыплет *черемуха* снегом,
Зелень в цвету и росе.
В поле, склоняясь к
побегам,
Ходят грачи в полосе.
... Сыпь ты, черемуха,
снегом,
Пойте вы, птахи, в лесу.
По полю зыбистым бегом
Пеной я цвет разнесу.
(С. Есенин)

Թխենին առատ ձյուն է շաղ
տալիս,
Ծաղկանց մեջ սեզն է ցողով
լվացվում,
Դաշտում՝ թեքվելով ծիլերին
թավիշ,
Սերմնագոավներն են հերկերով
անցնում:
Թխենի՛, թափի՛ր ձյուներդ անհոգ,
Երգե՛ք դուք, հավքե՛ր, անտառում
մեր պերճ,
Դաշտով մեկ ես իմ խելահեղ
վազքով
Փրփուր ծաղիկներ կփռեմ անվերջ:
(թարգմ.՝ Վ. Մաղալյան)

Ինչպես **հարանշանակությունն** ու **գուգորդումը**, այնպես էլ **հարանշանակությունն** ու **խորհրդանիշը** (սիմվոլ) թեև կապված են իրար, սակայն նույն բանը չեն: Այս կամ այն խորհուրդ ունենալը, այս կամ այն բանը խորհրդանշելը տվյալ բառի/բառակապակցության հարակից իմաստը չէ. *կարմիր*-ի խորհուրդը (խորհրդանշում է կյանք, նաև արյունահեղություն, պատերազմ) «կարմիր» բառի հարակից, լրացուցիչ իմաստը չէ: Սակայն թարգմանության ընթացքում սրանք լուրջ խնդիրներ են առաջացնում,

քանի որ թարգմանում ենք ոչ միայն բառ/բառակապակցություն, նախադասություն, տեքստ, այլ նախ և առաջ մշակույթ: Իսկ մշակութային տարբերությունները փոխանցելն ամենաբարդն է:

Հարակից իմաստների թարգմանության ժամանակ գործում են նույն սկզբունքները, ինչ և գործաբանական իմաստների թարգմանության դեպքում: Իսկ թարգմանչական զանազան փոխակերպումներին կանդիդատանսք առանձին:

Առաջադրանք 1. Համո Սահյանի պոեզիայում «մասրենին» ասացացվում է երիտասարդ աղջկա, կնոջ հետ: Փորձեք բացատրել, թե ինչո՞ւ ռուսերեն թարգմանության մեջ ընտրված բառարանային համարժեքը՝ «шиповник», արդարացված չէ: Ի՞նչ տարբերակ կառաջարկեք:

Պտուղդ քաղող չկա

Дикий шиповник

Պտուղդ քաղող չկա,
Մասրենի, սարի մասրենի,
Պատիվդ պահող չկա,
Մասրենի, բարի մասրենի:
Ասում են՝ էլ մարդ չկա,
Որ փնտրի քնքշանքդ փշոտ,
Քեզ գրկի ու տաքանա,
Մասրենի, ժայռի մասրենի:
Երեսիդ նայող չկա,
Մասրենի, վայրի մասրենի,
Կրքերիդ կրակը քեզ
Թող այդպես այրի, մասրենի...
նի...

Плод твой никто не сорвёт,
И честь твою не сбережёт.
Колючая нежность твоя,
Давно никому не нужна.
Никто не обнимет тебя,
Никто не посмотрит в глаза,
Ты страстью стораешь в огне,
Стоишь на своей высоте.
В мире, где столько зла,
Никто не заметит тебя.
Одинокая, как вдова,

Կանգնել ես քո բարձունքին, Отвергнута ты навсегда.
Մեկուսի, մենակ, մենավոր... (пер. Наира Багдасарова)
Իմ երես առած դարում
Դու լքված այրի, մասրենի:

Առաջադրանք 2.1. Հին կտակարանի «Երգ երգոց»-ի հայերեն թարգմանությունից դուրս գրել գունանուններ և բուսանուններ պարունակող բառակապակցություններ⁴³:

2.2. Համեմատել ռուսերեն կամ անգլերեն տարբերակների հետ: Ի՞նչ են խորհրդանշում այդ գույներն ու բույսերը⁴⁴:

ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

Ժիրանին՝ ծիրանագույնը, պուրպուրն է (պորփյուր, գրգ.՝ պորփիր, փխռթ. հունարենից), որը կարմիրի և կապույտի խառնուրդ է: Այն թյուրիմացաբար համարում են դեղնակարմրավուն՝ թերևս ծիրան պտղի գույնը նկատի ունենալով: Սակայն Աստվածաշնչի թարգմանության մեջ հստակ երևում է, որ այնտեղ, որտեղ լատիներենից թարգմանված լեզուներում (անգլ., ֆրանս., իսպ. ևն) պուրպուր է՝ purple, հայերենում հենց ծիրանի է.

19:5 *Then came Jesus forth, wearing the crown of thorns, and the purple robe. And [Pilate] saith unto them, Behold the man:*

19:5 Ել Յիսուս արտաքս, եւ ուներ պսակ ի փշոց եւ հանդերձ ծիրանի. եւ ասէ ցնոսա. Ահա այրդ ցձեզ: (տե՛ս http://www.arak29.am/bible_28E/w22634.htm)

⁴³ Առցանց տե՛ս այստեղ՝ <https://sites.google.com/site/armbible/hin-ktakaran/erg-ergoc>, հայերեն և անգլերեն զուգահեռ տեքստերը http://www.arak29.am/bible_28E/tSong_1.htm?wid=1753#4:

⁴⁴ Տե՛ս **Dictionary of Biblical Imagery**. (<https://bit.ly/2LDKZV0>) և **Словарь библейских образов** (<https://azbyka.ru/otechnik/Spravochniki/slovar-biblejskih-obrazov/>):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Իսրայելյան Ա., Գույնի մոգական ուժը հայոց հավատալիքներում, ՊԲՀ, 2017, № 2, էջ 125-142 (<http://hpj.asj-oa.am/6341/>):
2. Апресян Ю. Коннотация как часть прагматики слова.
3. Серов Н. В. Символика цвета (<https://mybook.ru/author/nikolaj-serov/simvolika-cveta/read/>).
4. Тер-Минасова. Война и мир языков и культур (<https://studfiles.net/preview/5457911/>).
5. Dictionary of Biblical Imagery, “Colors”, “Trees” և “Flowers” բառահոսովածները (<https://bit.ly/2LDKZV0>):
6. Словарь библейских образов, “Цвета”, “Деревья” և “Цветы” բառահոսովածները (<https://azbyka.ru/otechnik/Spravochniki/slovar-biblejskih-obrazov/>).

**ԹԵՄԱ 8. ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.
ԲԱՌԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ ՉՈՒՆԵՑՈՂ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ (ՌԵԱԼԻԱ) ԵՎ
ԷԿՁՈՏԻԶՄ**

Բառապաշարի հարստացման աղբյուրներից մեկը այլ լեզուներից վերցրած բառերն են՝ փոխառությունները: Հին և հնագույն փոխառությունները սովորաբար հասարակ լեզվակիրների կողմից չեն գիտակցվում իբրև օտար բառեր, ուստի դրանց չենք անդրադառնա: **Գիտակցվող փոխառություններն** այն բառերն են, որոնք վերցնում ենք օտար լեզուներից, քանի որ դրանց հայերեն համարժեքը չունենք (կամ դեռ չունենք): Այդ բառերը անվանում են առարկա, երևույթ, հասկացություն, որոնք մտել են մեր կյանքի, կենցաղի, մշակույթի, հետևաբար նաև լեզվի մեջ, սակայն դրանց փոխառյալ լինելը սովորական լեզվակիրները գիտակցում են, օր.[՝] *գենետիկա, տանգո, ռոք, բանկոմատ, ֆուտբոլ, պլանշետ, այֆոն, թրիլեր, բիկինի, ժիլետ, գենդեր:*

Բառային օտարաբանություններ: Հայ լեզվաբանության մեջ օտարաբանություն են համարվում այլ լեզուներից վերցված այն բառերը, արտահայտությունները, որոնց հայերեն համարժեքը ունենք, լեզվակիրների մեծ մասն այդ համարժեքները գիտի, սակայն այս կամ այն պատճառով շարունակում ենք գործածել օտար բառը:

Օտարաբանություններ շատ են գործածվում խոսակցական լեզվում: Հատկապես շատ են ռուսերենից կամ ռուսերենի միջոցով, իսկ վերջին տարիներին՝ նաև անգլերենից վերցրած բառերը, օր.[՝] *սալոկ, վեդրո, շկաֆ, կուխնյա, լիֆտ, կռանտ, օքել, քոփի, պրինտեր, քենսըլ, սեյֆ:* Օտարաբանություններ հանդիպում են նաև գիտական գրականության մեջ. փոխառյալ տերմինի և հայերեն համարժեքի միջև նախընտրությունը տրվում է օտար բառին,

անգամ եթե հայերեն տարբերակը միանգամայն համարժեք է: Նշենք սակայն, որ օտարաբանությունների կիրառությունը լրատվամիջոցների լեզվում, գեղարվեստական խոսքում, հրապարակախոսության մեջ կարող է ռճական արժեք ունենալ, գործածվել հատուկ նպատակով:

Բառարանային համարժեք չունեցող բառապաշար: Ցանկացած լեզվում կան բառային միավորներ, որոնք չունեն բառարանային համապատասխանություններ այլ լեզուներում: Դրանք կոչվում են *իրակություն* կամ *իրույթ* (*ռեալիա*, *реалии*, *culture-specific items*):

Իրակություններն արտահայտում են այնպիսի առարկա, երևույթ, հասկացություն, որոնք գոյություն չունեն փոխառող ազգի, ժողովրդի կենցաղում, պատկերացումների, մշակույթի մեջ և հետևաբար չունեն բառարանային համարժեքներ լեզվում⁴⁵: Այս բառերի մեծ մասը գրեթե երբեք չի դառնում փոխառու լեզվի բառապաշարի մաս՝ ի տարբերություն սովորական փոխառությունների: Նկատենք սակայն, որ վերջին տասնամյակներում միջմշակութային շփումներն այնքան են ակտիվացել, որ մի շարք իրակություններ բավականին արագ տարածվում են և ժամանակի ընթացքում զուտ ազգային ռեալիայից վերածվում սովորական փոխառությունների: Առանձնացնում են իրակությունների հետևյալ հիմնական խմբերը.

1) ազգային ճաշատեսակներ, ըմպելիքներ, համեմունքներ նն. *սպաս*, *չաքափուլի*, *սուլուգունի*, *գրոգ*, *կումիս*, *բուրիտո*, *սումաի*, *բահար*, *մոցարելա*, *պարմեզան*, *ֆետա*, *մուսակա*.

2) ազգային նվագարաններ. *սազ*, *քամանչա*, *զուռնա*, *դուդուկ*, *բալալայկա*, *ցինցիլա*, *սիտար*, *բոնգո*, *չիբա*.

⁴⁵ Այս մասին տե՛ս, օրինակ, **Влахов С., Флорин С.** Непереводимое в переводе. М., 1980, **Гарбовский Н.** Теория перевода. М., 2004, **Верещагина Е., Костомаров В.** Язык и культура. М., 1990 նն:

3) ազգային պարեր. *լեզգիներ, յարխուշտա, քոչարի, սալսա, ֆլամենկո, մագուրկա, խոռո.*

4) չափման և դրամական միավորներ. *ֆունտ, ֆուտ, դյույմ, արշին, վերստ, ունցի, սու, ֆրանկ, լիրա, իեն, թուման, լարի.*

5) տիտղոսներ, պաշտոններ, կոչումներ. *մարկիզ, լորդ, վի-կոնտ, վախմիստր, շտաբս-կապիտան, եֆրեյտոր, վոյեվոդա.*

6) տվյալ ազգին, երկրին, տարածաշրջանին բնորոշ կենցաղային ռեալիաներ, իրեր, առարկաներ. *թոնիր, յուրտ, գոնդոլ, ոանչո, ֆագենդա, մաչետե, տոմահավկ.*

7) ազգային տարազի տարրեր. *պեպլոս, տոգա, չուխա, տրեխ, ֆես, պոնչո, կոկոշնիկ, կաֆտան, չիքիլա, սուբրերո.*

8) ազգագրական (Էթնոգրաֆիկ), դիցաբանական, առասպելական ռեալիաներ. *ոտնլվա, դալիմ, աստամհատիկ, Վարդավառ, Բվան Կուպալա, Բաբա Մարտա, Բաբա Յագա, Նուրի, գոբլին, տրոլլ.*

9) միայն տվյալ երկրին, տարածքին բնորոշ բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչներ. *պեկարի, ագուտի, հիպոպոտամ, օկապի, կոլիբրի, պանդա, մարակույա, բանկսիա, սեկվոյա.*

10) աշխարհագրական ռեալիաներ. *սավաննա, պրերիա, պամպա, տունդրա, տայգա, կանյոն.*

11) հասարակական-քաղաքական ռեալիաներ. *կանցլեր, սենատ, Դումա, Ռադա, վոյեվոդություն, կանտոն.*

12) դիմելաձևեր. *սան, սենսեյ, դոն, դոննա, հերր, ֆրաու, սըր, խանում, ջան, էֆենդի.*

13) պատմական ռեալիաներ. այն բառերը/բառակապակցությունները, որոնք անվանում են այնպիսի առարկա, երևույթ, հասկացություն, որ հատուկ են եղել այս կամ այն ազգի, ժողովրդի, տարածաշրջանի պատմական զարգացմանը, և որոնք սովորաբար գոյություն չունեն այլ ժողովուրդների, ազգերի

պատկերացումների մեջ, լեզվում. *բդեշխ, սեպուհ, լիկկայան, սովխոզ, կոլխոզ, հայդուկ, բոյար, արքոնտ*⁴⁶:



Նկ. 12. Բուլղարական ազգային տոներից մեկի՝ Բաբա Մարտայի խորհրդանիշը՝ մարտենիցան:

Իրակությունների թարգմանությունը: Սովորաբար իրակությունները թարգմանվում են մի քանի եղանակով.

ա) *Գրադարձվում-տառադարձվում* են՝ հաշվի առնելով թարգմանության լեզվի առանձնահատկությունները, մշակութային, թարգմանական ավանդույթները.

частьшка – չաստուշկա, *pizza* – պիցցա, *mozzarella* – մոցարելլա, *Бэҗэҗуҗо* – չաքափուլի, *հայրեն* – айрех:

բ) Երբեմն թարգմանվում են *բառապատճենման/կիսապատճենման* կամ *խմաստային պատճենման* միջոցով, սակայն նույնիսկ այդ դեպքում դրանք սովորաբար գիտակցվում են իբրև այլ երկրին, այլ ժողովրդի մշակույթին, կենդացին բնորոշ երևույթներ.

⁴⁶ Մանրամասն տե՛ս Влахов С., Флорин С., նշվ. աշխ.:

House of Lords – Լորդերի պալատ, grog – ջերմօղի, սա-կերրնձօղի, медовуха – մեղրօղի, jin – գիհօղի, լամա – ուղտայծ, ծովափիղ/ծովացուլ – морж:

զ) Կարող են թարգմանվել **մոտավոր համարժեքով**. օրինակ՝ *свирель – սրինգ*, թեև այս երկու նվագարանների միջև որոշ տար-բերություններ կան:

դ) Երբեմն կարող են թարգմանվել նաև **նկարագրական եղա-նակով**, երբ այլ բառերով, բառակապակցությամբ կամ նախադա-սությամբ նկարագրվում-բացատրվում է բնագրի իրակությունը: Նկարագրական թարգմանությունը կարող է ուղեկցվել նաև տա-ռադարձմամբ.

Назук – это слоеная булочка, которая встречается в армянской и грузинской кухнях. (համացանցից)

Նկարագրական թարգմանությունը կարող է լինել ոչ միայն բուն տեքստում, այլև տրվել ծանոթագրությամբ: Օրինակ.

- *Դուք տգետ և դատարկախոս դագո՞ւ եք:*

* *Ծնթ.: Բսպանացի նավագների արհամարհական անունը:*

(**Էոնեստ Հեմինգուեյ**, Հրաժեշտ զենքին, թարգմ.՝ Պերճ Զեյթուն-ցյան)

Այն իրակությունները, որոնք մտնում են այլ ազգի, ժողովրդի կյանքի ու կենցաղի մեջ, ժամանակի ընթացքում դադարում են իբրև օտար մշակույթի տարր գիտակցվելուց և կարող են վերած-վել սովորական փոխառությունների: Դրանք հիմնականում ու-տելիքի, միրգ-բանջարեղենի, համեմունքների անվանումներ են, ինչպես, օրինակ, *պելմենի, կոնյակ, խաչապուրի, պիցցա:*

Էկզոտիզմներ⁴⁷: Սրանց մեծ մասը ռեալիաներ են՝ օտար մշակույթին բնորոշ առարկաների, երևույթների, հասկացությունների անվանումներ, սակայն ռեալիաներ են ոչ բոլոր էկզոտիզմները: Կան այսպես կոչված *փոխարինելի էկզոտիզմներ*. սրանց համար թեև ԹԼ-ում կան հստակ բառարանային համապատասխանություններ, սակայն թարգմանության մեջ դրանք գրադարձվում-տառադարձվում են օտար մշակույթի կոլորիտը պահպանելու, օտար մշակույթի պատրանք ստեղծելու նպատակներով:

Օրինակ՝ թեև հայերենում ունենք անգլերեն *mister, mistress, miss*, ֆրանսերեն *madame, mademoiselle*, լեհերեն *pan, pani*, գերմաներեն *frau, herr, fraulein*, իտալերեն *señora, señorita* բառերի բառարանային համարժեքները, սակայն թարգմանական գրականության մեջ շատ հաճախ գործածվում են սրանց տառադարձված-գրադարձված տարբերակները՝ *միստեր, միսիս, միս, մադամ, մադմուազել, պան, պանի, ֆրաու, հերր, սինյորա, սինյորիտա*:

Կամ՝ թեև հայերենում *cowboy*-ի ռեֆերենցիալ իմաստին համարժեք ունենք *հովիվ/տավարած/հորթապահ* և այլ տարբերակներ, սակայն թարգմանական գրականության մեջ պահում ենք *կովբոյ*-ը, քանի որ *հովիվ/տավարած* և *կովբոյ* բառերը տարբեր մշակույթներ են ներկայացնում, տարբեր է դրանց կոննոտացիան, զուգորդվում են տարբեր բաների հետ: Նույն պատճառով ռուսերենում թարգմանական գրականության մեջ (միջինասիական, կովկասյան լեզուներից) գործածվում է *чабан*-ը, թեև ռուսերենն ունի *пастух, овчар* բառարանային համապատասխանությունները:

Այսպես նաև տարբեր ազգեր, ժողովուրդներ ունեն հայկական *պարկապզուկի* նման նվագարան, սակայն թարգմանական

⁴⁷ Այս մասին տե՛ս **Влахов С., Флорин С.**, նշվ. աշխ., էջ 40, **Ахманова О.** Словарь лингвистических терминов. 1-е изд., М., 1966:

գրականության մեջ սովորաբար ընդունված է ոչ թե թարգմանել, այլ գրադարձել/տառադարձել դրանց անվանումները՝ *դուդա* (լեհ., բելառուս.), *գայդա* (բուլղ.), *կոզա* (ուկր.), կամ *պարկապգուկ* բառի հետ նշել, թե որ ազգի, երկրի նվագարան է՝ *խոլանդական պարկապգուկ*, *շոտլանդական պարկապգուկ*:

Առաջադրանք 1. Գտնել փոխառությունները, օտարաբանություններն ու էկզոտիզմները: Բացատրել դրանց կիրառության նպատակը:

ա) - Կյորենսի լեզուն շենավարի է... Ափսոս չի՞ մեր բլադարոդնի լեզուն,- այդպես էր ասում տիկին Օլինկան՝ Մատվեյ Մատվեյիչի կինը, Անիկա տյոտյային, երբ նրանք նստում էին ֆրապ խաղալու: (**Ա. Բակունց, Կյորենս**)

բ) ...Մինչև շոշափելի չդառնա նրա (Էշի) մարմնականը, մինչև չխոշորացվեն նրա մաշկի ծակոտիները, մինչև նյարդերիդ ծայրով չընկալես նրա ականջների ուղղագիծ մաքսիմալիզմը, նրա մարմնի մասերի համագործակցության մեխանիզմը, անկարելի է զգայական և միաժամանակ transcendentis վերաբերմունք ցուցաբերել նրա նկատմամբ: (**Ադասի Այվազյան, Problema**)

գ) Եվ լուսինն, ինչպես ջենների մատաղ փերիի կուրծքը՝ չքնաղ, լուսավառ,

Մերթ ամաչելով պահվում էր ամպում և մերթ թրթռուն փայլում էր պայծառ:

... Իրար բերանից պատառ էք հանում և դարձնում աշխարհն ահավոր ջեհնեմ: (**Ավ. Իսահակյան, Աբու-Լալա Մահարի**)

դ) Բուլվարներում խեղդվում եմ՝ դեմքիս թախիծ փռած:

Ախր դա դուստրն է քո՝

իմ երգը,

աժուր չուլքիներով՝

կաֆեների առաջ: (**Վլ. Մայակովսկի (թարգմ.՝ Ե. Չաբենց)**)

ե) Դու կովբոյի շորերով

Կանգնած ես ուղիղ,

Եվ իրանից ներքև քո

Տանում է ուղին

Դեպի դրախտ մի մաքուր ... **(Ե. Չաքենց)**

զ) Միսիս Սմիթ, իմ բաժին մի պինտա պորտերն ու մի կտոր պուդինգ դրեք մատուցարանի վրա: **(Շ. Բրոնտե, Ջեյն Էյր)**

է) Անտառում թոչում էին տրագոպանները: Դրանք հավի նման թոչուն են և պատկանում են փասիանների ընտանիքին: **(Հ. Ռ. Հագարդ, Մոնթեսումայի դուստրը)**

ը) Վամպուրները վառվռուն գույներով գրկում էին գոտկատեղը, նրանց տակ խրված էին երկար դանակներ, տոմահավկներ: **(Մ. Ռիդ, Մեմֆիսների առաջնորդ Օգեռլան)**

թ) Ավարտելով այս գործը՝ նա սկսեց օրիորդի ամբողջ մարմնին Արաբիայի անուշահոտ յուղեր քսել և ապա հազգրեց փափուկ, ոսկեգույն և առանց թևերի տունիկան, որի վրա ձյունանման պեպլոս պիտի ձգեր: **(Հ. Մենկևիչ, Յո՞ յորթաս)**

Առաջադրանք 2. Թարգմանել՝ ուշադրություն դարձնելով իրակություններին:

ա) Гуакамоле - это холодная закуска из мякоти авокадо с добавлением помидоров, кинзы, сока лайма и других овощей и приправ. Имеет консистенцию густого соуса (пасты). Блюдо мексиканской кухни. Консистенция же может быть разной: если разминать вилкой, получится закуска с кусочками ингредиентов, если смешать все в блендере - соус, который отлично подойдет ко многим основным блюдам.

Приготовление: Помидоры очистить и мелко нарезать. Чили избавить от семян и измельчить вместе с луком, чесноком и кинзой. В большой ступке пестиком превратить чили, кинзу, помидоры и цедру лайма и лук в однородную пасту. Слегка

посолить и снова перемешать. Добавить одну-две столовые ложки воды и сок лайма, чтобы смесь стала более жидкой.

Очистить авокадо, удалить косточки, нарезать мякоть небольшими кубиками. Добавить к пасте из чили и помидоров и тщательно все размять. Подавать с кукурузными чипсами. (hʷɪʃu-gwɪŋhɟ)

p) **Miso soup** (味噌汁 *misoshiru*) is a traditional Japanese soup consisting of a stock called “dashi” into which softened miso paste is mixed. Many ingredients are added depending on regional and seasonal recipes, and personal preference.

Miso soup is one of the two basic soup types of Japanese cuisine – the other one is suimono (clear soup). According to Japanese custom, the solid ingredients are chosen to reflect the seasons and to provide contrasts of color, texture, and flavor. Thus negi and tofu, a strongly flavored ingredient mixed with a delicately flavored ingredient, are often combined. Ingredients that float, such as wakame seaweed, and ingredients that sink, such as potatoes, are also combined. Ingredients may include mushrooms, potatoes, seaweed, onion, shrimp, fish, clams, and sliced daikon.

If pork is added to miso soup, it is called *tonjiru*, meaning “pork soup”. Miso soup can be prepared in several ways. Japanese recipes usually call for most vegetables and meats to be cooked in the simmering *dashi*, particularly mushrooms, daikon, carrots, potatoes, tofu, and fish. The miso is suspended separately in some dashi stock removed from the simmering mix, to keep the miso paste from cooking, which alters the flavour, kills beneficial bacteria, and reduces the health benefits of biologically active miso paste. When the vegetables are cooked, the stock is removed from heat, the miso suspension is added and mixed into the soup, any uncooked ingredients are added, and the dish is served. (hʷɪʃuɡwɪŋhɟ)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бархударов Л. Язык и перевод. М., 1975.
2. Влахов С., Флорин С. Непереводимое в переводе. М., 1980.
3. Քամայան Ա., Փոխառություն, օտարաբանություն և էկզոտիզմ (տարբերակման փորձ), ԲԵՀ, 2015, № 2 (17), էջ 66-80:

**ԹԵՄԱ 9. ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ՊԱՏՃԱՌՆԵՐԸ. ՄԻՋԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆ/ՀԱՐԱՆՈՒՆՆԵՐ
ԿԱՍ «ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿԵՂԾ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ». ԲԱՌԵՐԻ
ԿԱՊԱԿՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ**

Թարգմանչական սխալների պատճառները բազմազան են:
Հաճախ են հանդիպում.

ա) *համանունության* և *հարանունության* պատճառով առաջացող սխալները, որ սովորաբար բնագրի լեզվի վատ իմացության հետևանք են: Օրինակ՝ երբ թարգմանիչը շփոթում է *компания* և *кампания* բառերը, որոնցից *компания*-ն նշանակում է «1. ընկերախումբ, խումբ, 2. առևտրային կամ արդյունաբերական ընկերություն», իսկ *кампания*-ն՝ «1. ռազմական արշավանք, պատերազմ (հնց.), 2. հասարակական-քաղաքական կարևոր միջոցառում, օրինակ՝ քարոզարշավ»; կամ *замок* (դղյակ, ամրոց) և *замок* (կողպեք); *бар* (բար, զինետուն), *бар* (ծող), *бар* (կտոր, սալիկ (շոկոլադի)) բառերը:

Եսենինի մի բանաստեղծության թարգմանիչը շփոթել է *кобель* (որձ շուն) և *кобыла* (զամբիկ, էգ ձի) բառերը, քանի որ դրանք գրությամբ և արտասանությամբ մոտ են.

Каждому здесь *кобелю* на шею

Я готов отдать мой лучший галстук.

Ու պատրաստ եմ փողկապս նվիրել

Ինձ հանդիպած առաջին իսկ *ձիուն*:

(Թարգմ.՝ Հր. Թամրազյան)

բ) Միալի պատճառ կարող է լինել բառի *բազմիմաստությունը*, երբ թարգմանիչը բնագրի բազմիմաստ բառի համար ընտրում է տվյալ համատեքստում ոչ ճիշտ տարբերակ:

Օրինակ՝ ռուս. *страсть*-ը բազմիմաստ բառ է, նշ. է «1. կիրք,

բուն սեր, 2. խանդավառություն, ոգևորություն, 3. հնգ., եկղզ. տանջանք, չարչարանք, 4. խակց., մակր. սաստիկ, չափազանց» են: Թարգմանիչներից մեկը ֆիլմի վերնագիրը թարգմանել է «*Քրիստոսի կրքերը*» (ռուս. «*Страсти по Христу*»), այնինչ ճիշտ տարբերակն է «*Քրիստոսի չարչարանքները*».

«Դերասան և ռեժիսոր Մել Գիբսոնը մտադիր է նկարահանել «*Քրիստոսի կրքերը*» ֆիլմի շարունակությունը» (մամուլից)

գ) Բավականին շատ են նաև **ֆոնային գիտելիքի պակասի** հետևանքով առաջացող սխալները (ֆոնային գիտելիքի մասին տե՛ս **ԹԵՄԱ 2**): Թարգմանիչներից մեկը լեհ հայտնի կինոռեժիսոր Անջեյ Վայդայի ֆիլմի վերնագիրը՝ «*Страстная неделя*», սխալ է թարգմանել՝ «*Կրքոտ շաբաթ*», այնինչ ճիշտ տարբերակն է «*Ավագ շաբաթ*» (եկղզ.): Նշանակում է՝ թարգմանիչը տեղյակ չէ ո՛չ ֆիլմից, ո՛չ քրիստոնեական տոներից, նաև շփոթել է *стра́стная* և *стра́стная* բառերը:

Կամ, օրինակ, թարգմանիչը պիտի իմանա, որ մի շարք անգլախոս երկրներում մինչև 1960-ականները, իսկ ԱՄՆ-ում մինչ օրս էլ ջերմաստիճանը չափում են Ֆարենհեյթով, և թարգմանելիս անպայման նշի դա (112° F) կամ վերածի Ցելսիուսի (40° C):

դ) Սխալների պատճառ կարող են դառնալ **համատեքստը** (լայն կամ նեղ իմաստով), **հեղինակի մտահղացումը, լեզվառձական առանձնահատկությունները** չհասկանալը⁴⁸: Եթե առաջին երկու տիպի սխալները համեմատաբար հեշտ ուղղելի են (դա կարող է անել ինքը՝ թարգմանիչը, ուշադիր խմբագիրը), ապա անհամեմատ բարդ է մյուս սխալներն ուղղելը: Հաճախ կարող է կարիք լինել ամբողջ թարգմանությունը խմբագրելու, անգամ նո-

⁴⁸ Թարգմանչական սխալների մասին մանրամասն տե՛ս **Бархударов Л.**, նշվ. աշխ., **Левый И.** Искусство перевода. М., 1974, **Гарбовский Н.** Теория перевода. М., 2004:

րից թարգմանելու: Իբրև օրինակ բերենք Գաբրիել Գարսիա Լորկայի բանաստեղծությունը և դրա թարգմանությունները.

Murió al amanecer

Noche de cuatro lunas/ y un solo árbol,
con una sola sombra/ y un solo pájaro.
Busco en mi carne las/ huellas de tus labios.
El manantial besa al viento/ sin tocarlo.
Llevo el No que me diste,/ en la palma de la mano,
como un limón de cera/ casi blanco.
Noche de cuatro lunas/ y un solo árbol.
En la punta de una aguja/ está mi amor ¡girando!

Բնագրում հեղինակը խուսափել է սիրած էակի սեռը նշելուց, թեև իսպաներենում անձնական դերանունները, նաև որոշյալ ու անորոշ հոդերն ունեն սեռի կարգ: Նաև իսպաներենը հայերենի նման հնարավորություն ունի զեղչելու ենթական, քանի որ խոնարհված բայից երևում է ենթակայի դեմքն ու թիվը, իսպաներենում՝ նաև ենթակայի սեռը: Ամենայն հավանականությամբ Լորկան չի ցանկացել բացահայտ ասել, որ բանաստեղծությունը նվիրված է իր սիրած տղամարդուն (որ դա այդպես է, իմանում ենք բանաստեղծի կենսագրությունից):

Անգլերենի թարգմանիչը չի հասկացել հեղինակի մտահղացումը և հենց վերնագրում «մատնել է» նրան. *he*-ն արական սեռի դերանուն է⁴⁹.

He Died at Dawn

Night of four moons/ and only one tree,

⁴⁹ Այստեղ չենք անդրադառնա թարգմանությունների քննությանն այլ տեսանկյուններից, քանի որ նպատակը մտահղացումը չհասկանալը ցույց տալն է:

only one shadow/ and only one bird.
I track through my flesh/ the trail of your lips.
The fountain kisses/ the wind without touching it.
I bear the No that you gave me/ in the palm of my hand,
like a wax lemon/ almost white.
Night of four moons/ and only one tree.
My love is spinning/ on the point of a needle.

(translated by W. S. Merwin)

Հայ թարգմանիչն առանձնապես խնդիր չուներ, քանի որ մեր լեզվում չկա սեռի քերականական կարգ ո՛չ գոյականի, ո՛չ դերանվան համար, և Լորկայի մտահղացումը՝ քողարկելու, թաքցնելու սիրո առարկային, միանգամայն հեշտությամբ իրագործվել է (թեև ամենայն հավանականությամբ թարգմանիչը տեղյակ էլ չէր, որ Լորկայի սերը տղամարդ էր):

Նա մեռավ լուսաբացին

Գիշերն ունի չորս լուսին/Ու մի ծառ մենակ,
Ծառի տակ մեն մի ստվեր,/Ծառին՝ մեն մի հավք:
Համբույրիդ հետքն է դեմքիս,/Իսկ առուն հովին
Համբուրում ու չի թողնում/Հետք բոլորովին:
«Չէ» քո տվածն եմ տանում/Իմ ավիի մեջ տաք,
Մոմե լիմոն է կարծես,/Բոլորովին խակ:
Չորս լուսին ու մեն մի ծառ/Ունի գիշերս:
Ասեղների վրա է/Առաջին սերս:

(ռուս.-ից թարգմ.՝ Համո Սահյան)

«Թարգմանչի կեղծ բարեկամներ» (ложные друзья переводчика, false friends) են կոչվում այն բառերը, որոնք տարբեր լեզուներում ունեն նույն կամ մոտ գրությունը/ արտասանությունը, սակայն իմաստով տարբեր են: Սրանք անվանում են նաև

միջլեզվական համանուններ/հարանուններ (межъязыковые омонимы/паронимы):



Նկ. 13. Միջլեզվական համանուններ:

Ամենից հաճախ հանդիպում են մոտ ցեղակցություն ունեցող լեզուներում (օր.՝ ռուս. *дыня* – սեխ, բուլղ. *диня* – ձմերուկ; ռուս. *гора* – սար, բուլղ. *гора* – անտառ; իսպ. *burro* – էջ, իտ. *burro* – կա-րագ): Տարբերություններ են լինում նաև նույն լեզվի տարբերակ-ների միջև՝ արևելահայերենի ու արևմտահայերենի (հմմտ. *սուղ* – *թանկ* (արևմտհ.), *սուղ* – *քիչ* (արևլհ.); *վայրկյան* – 1/60 րոպե (արևլհ.), *վայրկյան* – րոպե (արևմտհ.); *հոտել* – *նեխել*, *փտել* (ա-րևլհ.), *հոտել* – *բուրել*, *հոտ արձակել* (արևմտհ.), ամերիկյան և բրիտանական անգլերենների, իսպանախոս տարբեր երկրների իսպաներենների կն:

Բավականին շատ են նաև միջնորդավորված փոխառու-թյունների հետևանքով առաջացող կեղծ համարժեքները: Հայերե-նում այլ լեզուներից բազմաթիվ բառեր փոխառել ենք ռուսերենի միջոցով, և հիմա հաճախ խնդիրներ են ծագում բնագրի լեզվից թարգմանելիս:

Օրինակ՝ ռուս. *артист* – 1. արտիստ, դերասան, 2. պրոֆեսիո-նալ երգիչ, երաժիշտ, իսկ անգլ. *artist* – 1. նկարիչ, 2. քանդակա-

գործ, 3. արվեստագետ, արվեստով զբաղվող, 4. իր գործի վարպետ; ռուս. директор – տնօրեն, իսկ անգլ. director – 1. տնօրեն, ղեկավար, 2. ռեժիսոր:

Բառերի կապակցելիությունը (сочетаемость слов, lexical combinability) խոսքում որոշակի բառերի/բառերի խմբի հետ այս կամ այն բառի կապակցվելու հատկությունն է: Կապակցական տարբերությունները հատկապես կարևոր են հոմանիշների ընտրության հարցում: Շատ հաճախ անգամ նույն լեզվում իմաստով մոտ բառերը՝ հոմանիշները, չեն կարող կապակցվել նույն բառերի հետ (օր.՝ *պարզ/անամպօհինջ* հոմանիշները կապակցվում են «երկինք» բառի հետ, սակայն այս հոմանիշներից միայն մեկը կարող է կապակցվել «նախադասություն» բառի հետ՝ *պարզ նախադասություն*): Կամ՝ անգլերենում հոմանիշ են *right* և *true* բառերը, սակայն սխալ է “*you are right*” («Դուք ճիշտ եք») ասելու փոխարեն գործածել “*you are true*”:

Խնդիրն ավելի է բարդանում թարգմանության ժամանակ, երբ նույն ռեֆերենցիալ իմաստով բառերը երկու տարբեր լեզուներում դրսևորում են կապակցական տարբերություններ: Օրինակ՝ ռուս. *горький* (*դառը*) բառի հետ կապակցվում են *лекарство* (*դեղ*), *перец* (*պղպեղ/բիրբար*), *слезы* (*արցունք*), *судьба* (*ճակատագիր*, *բախտ*) բառերը, սակայն հայերենում *դառը* բառը չի կապակցվում *պղպեղ/բիրբար*, *արցունք* բառերի հետ. այս դեպքում *горький*-ն թարգմանվում է այլ ռեֆերենցիալ իմաստ ունեցող բառերով՝ *կծու պղպեղ/բիրբար*, *աղի արցունք*⁵⁰: Այս համադամանքը հաշվի առնելը խիստ կարևոր է որակյալ թարգմանություն անելու համար:

⁵⁰ ԱՐԵՎԱԿ-ի տվյալներով՝ «դառը արցունք» ձևը, որ բառացի թարգմանություն է ռուսերենից, հանդիպում է ընդամենը 16 համատեքստում, իսկ «աղի արցունք»-ը՝ 131 համատեքստում (կայքի հղումը՝ http://www.eanc.net/EANC/search/?interface_language=am):

Առաջադրանք 1. Գտնել թարգմանությունների մեջ եղած սխալները, բացատրել դրանց պատճառները: Ուղղել սխալները:

1.1. ա) На Камчатке из крупных хищных зверей самым известным видом является *бурий* медведь.

Կամչատկայում խոշոր գիշատիչ գազաններից ամենահայտնին դարչնագույն արջն է: (Վիկիպեդիա)

բ) *Миссия* ОБСЕ провела плановый мониторинг в зоне карабахского конфликта в направлении Мартакертского района.

ԵԱՀԿ առաքելությունը պլանային մշտադիտարկում է իրականացրել դարաբաղյան հակամարտության գոտում՝ Մարտակերտի շրջանի ուղղությամբ: (մամուլ)

գ) Люди, которые предпочитают классический стиль в одежде, в основном выбирают спокойные, *пастельные* тона.

Դասական հագուստ նախընտրող մարդիկ հիմնականում ընտրում են հանգիստ, անկողնային գույներ: (մամուլ)

դ) Как *передает* агентство Reuters, у Брюсселя «заканчивается терпение и добрая воля» по вопросу переговоров о Brexit.

Reuters գործակալության փոխանցմամբ՝ Բրյուսելի «համբերությունն ու բարի կամքը» հատնելու վրա է Brexit-ի հարցով բանակցություններում: (մամուլ)

1.2 ա) The Government of Armenia *does not fully meet* the minimum standards for the elimination of trafficking.

Հայաստանի կառավարությունն ամբողջությամբ չի բավարարում թրաֆիքինգի վերացման նվազագույն չափանիշներին: (ԱՄՆ պետքարտուղարության գեկույցից)

բ) *Promoting human rights* and the idea that every person has inherent dignity is a core element of U.S. foreign policy.

Մարդու իրավունքների խթանումը և անհատի արժանապատվության գաղափարը առանցքային տեղ են զբաղեցնում ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ: (ԱՄՆ պետքարտուղարության գեկույցից)

զ) It was 65 degrees in a small town in Illinois. (Charles Bucowski)

Փոքրիկ Իլլինոյս քաղաքում 65 աստիճան տաքություն էր: (թարգմ.՝ Ա. Հակոբյան)

դ) Margaret went to the bottom drawer of the dresser and got the gun out. A 22 revolver. It was loaded. (Charles Bucowski)

Մարգրիտը մոտեցավ զարդասեղանի գորոցին և այնտեղից հանեց ատրճանակը: Ա 22 հրացանը բեռնավորված էր: (թարգմ.՝ Ա. Հակոբյան)

Առաջադրանք 2. Թարգմանել հայերեն՝ ուշադրություն դարձնելով բառերի կապակցելիությանը:

1. He put his hands around her slender waist.
2. The slender book runs all of 150 pages.
3. That slender hope would seem to be the main reason for holding them.
4. Your mission is to isolate the enemy by destroying all the bridges across the river.
5. They were sent on a secret political mission to the Middle East.
6. A trade mission was sent to South Africa.
7. The new model cars are being heavily promoted on television.

Առաջադրանք 3. Գտնել բառագործածության սխալները, ուղղել:

1. Այսօր ԱԺ հայտարարությունների ժամին «ԵԼՔ» խմբակցության ղեկավարը ելույթ ունեցավ հայտարարությամբ: (*выступит с заявлением*)

2. Գերմանիայի և Ֆինլանդիայի գիտնականների տվյալներով՝ մահացած գոտիների ընդհանուր մակերեսը 70 հազար քառակուսի կիլոմետրի է հասել: Ընդ որում՝ մահացած գոտիները լքել են ծովային ֆաունայի գրեթե բոլոր տեսակները: (*мертвые зоны*)

3. Հագգարդի «Կորած աշխարհ»-ի ոճը ազդել է ամերիկացի այնպիսի գրողների վրա, ինչպիսիք են Էդգար Բարրոթսը, Ռոբերտ Հովարդը և այլն: (*Lost world/затерянный мир*)

4. Թանկագին Վա՛թսըն,- ասաց Հովմար,- ես գիտեմ, որ Դուք բաժանում եք իմ սերը դեպի այն ամենը, ինչ արտասովոր է, ինչը խախտում է մեր առօրյա կյանքի միօրինակությունը: (*разделять любовь к (кому/чему)*)

5. Վերցնում եք 2 երիտասարդ կարտոֆիլ, թարմ կանաչի, 1 թարմ գազար և 100 գրամ երիտասարդ ոլոռ, քերիչով անցկացնում, ավելացնում 2 ճ. գ. ալյուր, աղ, համեմունքներ և տապակում բուսական յուղով: (*молодой картофель, молодой горох*)

6. Երեկոյան մեր եթերում դիտեք «Հարրի Փոթերը և կիսաբլուն արքայազնը» ֆիլմը: (*принц-полукровка/half blood prince*)

7. Նա կրում էր սև գույնի բաճկոնակ և բաց մոխրագույն տաբատ, նա լայն, ռազմական քայլվածք ուներ: (*носить одежду, военная походка*)

ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

Աստվածաշնչի լատիներեն թարգմանության մեջ թարգմանիչը սխալ է թույլ տվել, ինչի պատճառով Մովսեսը դարձել է կոտորավոր/պոզավոր: Եբրայերեն տեքստում ասվում է, որ իսրայելցիք չէին կարողանում նայել Մովսեսի դեմքին, որովհետև *וַיִּרְאוּ אֶת פָּנָיו* սակայն *וַיִּרְאוּ* բառը բազմիմաստ է. այն կարող է թարգմանվել և՛ կոտոր, և՛ շողեր, ճառագայթ: Այս սխալը հայտնվել է այն բոլոր լեզուներում, որոնք Աստվածաշունչը թարգմանել են միջնորդ լատիներենից՝ անգլերենում, իտալերենում, ֆրանսերենում, ռուսերենում ևն: Իսկ հայերեն թարգմանության մեջ այս սխալը չկա. «Մինչդեռ իջանէր Մովսէս ի լեռնէն Մինայ, և երկոքին տախտակքն ուխտի ի ձեռս Մովսիսի էին, և իջանել իւրում ի լեռնէ անտի՝ ոչ գիտէր Մովսէս եթէ փառուաւորեալ իցէ տեսիլ գունոյ երեսաց նորա ի իօսել նորա ընդ նմա» (Ելք 34:29):



Նկ. 14. Միքելանջելոյի «Մովսէսը»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гарбовский Н. Теория перевода. М., 2004:
2. Antony Pym. Translation error analysis and the interface with language teaching. "The Teaching of Translation". Amsterdam: John Benjamins, 1992, 279-288.
3. Քամայան Ա., Թարգմանչական սխալների հիմնական պատճառները, ԲԵՀ, 140.2, 2013, էջ 71-80:

**ԹԵՄԱ 10. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ:
ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄ**

Քերականական (շարահյուսական) օտարաբանություններ (грамматические/ синтаксические кальки): Քերականական օտարաբանություն են համարվում այն կառույցները, արտահայտությունները, ոճերը, որոնք բառացի պատճենվում են օտար լեզուներից՝ առանց հաշվի առնելու սեփական լեզվի առանձնահատկությունները, նորմը, լեզվի ներքին օրինաչափություններն ու տրամաբանությունը:

Օր.՝ «Отказывается говорить» – «հրաժարվում է ասել» (փոխանակ՝ «հրաժարվում է ասելուց»), «У больного наблюдается повышение температуры» – «Հիվանդի մոտ նկատվում է ջերմաստիճանի բարձրացում» (փոխանակ՝ «Հիվանդի ջերմությունը/տաքությունը բարձրանում/բարձրացել է», «он у себя» – «նա իր մոտ է» (փոխանակ՝ «նա իր սենյակում/աշխատասենյակում է»):

Առավել հաճախ քերականական պատճենումները հանդիպում են պաշտոնական, նաև գիտական ոճերում, թարգմանական գրականության մեջ, իսկ խոսակցական լեզվում անհամեմատ քիչ են տարածված: Հաճախ են հանդիպում օտար լեզուների ազդեցությամբ խնդրառական սխալները, կապերի սխալ կիրառությունը, բառագործածության սխալները.

«տիրապետել ինֆորմացիային»՝ փխն.՝ «ինֆորմացիա/տեղեկություն ունենալ կամ տեղյակ լինել այսինչ բանից/բանի մասին», «կրել վերարկու/զլխարկ»՝ փխն.՝ «զլխարկ դնել, վերարկու հագնել», «մտքերով փոխանակվել»՝ փխն.՝ «տեսակետներ արտահայտել այսինչ հարցի, խնդրի մասին/շուրջ», «կիսել կարծիքը»՝ փխն.՝ «համամիտ լինել, նույն կարծիքին լինել/նույն կարծիքն ունենալ», «ծանոթանալ փաստաթղթերի հետ»՝ փխն.՝ «ծանոթանալ փաստաթղթերին»:

Կրավորական կառույցների անհարկի գործածությունը պաշտոնական ոճերում օտար լեզուների, հատկապես անգլերենի, մասամբ նաև ռուսերենի ազդեցությունն է.

«*Հանձնաժողովի կողմից կայացվել է որոշում*»՝ փխն.՝ «*Հանձնաժողովը որոշում է կայացրել*», «*Մեր կողմից քայլեր են ձեռնարկվում հարցը լուծելու ուղղությամբ*»՝ փխն.՝ «*Մենք քայլեր ենք ձեռնարկում...*» են:

Փոխներթափանցում (интерференция, Language transfer, linguistic interference): «Լեզվաբանական հանրագիտական բառարան»-ում ինտերֆերենցիան հետևյալ կերպ է սահմանվում. «Լեզվական համակարգերի փոխներգործությունը երկլեզվության (билингвизм) պայմաններում (...), որն արտահայտվում է մայրենի/հիմնական լեզվի ազդեցությամբ երկրորդ լեզվի նորմից ու համակարգից շեղումներով»⁵¹:

Առանձնացնում են փոխներթափանցման տարբեր մակարդակներ՝ ա) *հնչյունական* (фонетическая, фонологическая инт.), բ) *ուղղագրական* (орфографическая инт.), գ) *բառային* (лексическая инт.), դ) *իմաստաբանական* (семантическая инт.), ե) *քերականական* (ձևաբանական և շարահյուսական) (морфологическая и синтаксическая инт.) են⁵²:

Հնչյունական փոխներթափանցումը մայրենի լեզվի շեղ-տադրությունն է, առոգանությունը (ակցենտը) երկրորդ՝ ոչ մայրենի լեզվով խոսելիս: Սա նկատելի է միայն բանավոր խոսքում:

Ուղղագրական փոխներթափանցում – երբ օտար լեզվում ուղղագրական սխալները մայրենի կամ հիմնական լեզվի ազդեցության հետևանք են: Օրինակ՝ *грам* (*грамм*-ի փոխարեն), քանի որ հայերենում *գրամ* է, կամ *limon* (*lemon*-ի փոխարեն)՝ խոսակ-

⁵¹ Лингвистический энциклопедический словарь. Под. ред. Ярцевой. М., 1990.

⁵² St' u Алимов В. В. Интерференция в переводе. (док. дисс). М., 2004 (սեղմագիրը՝ <https://www.gavrilenko-nn.ru/upload/pdf/3a37e6637493ce3d576d251af95e42cd.pdf>):

ցական հայերենի լիմոն-ի և/կամ ռուսերենի лимон-ի ազդեցությամբ:

Բառային փոխներթափանցում – երբ սխալները ոչ ճիշտ հոմանիշի ընտրության, մայրենի լեզվի բառակապակցությունները այլ լեզվով բառացի թարգմանելու հետևանք են. «*иди здесь*» – «*иди сюда*»-ի փխրն. (քանի որ երկու բառն էլ հայերեն թարգմանվում են «այստեղ»), «*լավ ժամանակ ունեցանք*»՝ փխն.՝ «*լավ ժամանակ անցկացրինք*» (անգլ.՝ “have a good time”):

Իմաստաբանական փոխներթափանցում – սովորաբար արտահայտվում է իրար նման գրվող կամ արտասանվող բառերի՝ համանունների շփոթի պատճառով, երբ առաջին հայացքից նույն բառը երկու տարբեր լեզուներում տարբեր իմաստներ ունի: Օրինակ՝ *caucasian* (գոյ.) կամ *caucasian race* ուղղակի նշանակում է «սպիտակամորթ, եվրոպոիդ ռասայի մարդ», ապա նոր միայն «կովկասցի»:

Քերականական փոխներթափանցում – օրինակ՝ հայերեն նոր սովորող ռուսախոսները հաճախ դժվարանում են ներկա ժամանակում «են» օժ. բայը գործածելիս, քանի որ ռուսերենում անվանական բաղադրյալ ստորոգյալի էական բայը ներկա ժամանակում չի արտահայտվում (*нулевая связка*). «*я студент – ես ուսանող*»՝ փխն.՝ «*ես ուսանող եմ*», կամ «*я иду домой – ես գնում տուն*»՝ փխն.՝ «*ես գնում եմ տուն*» են: Հայերեն նոր սովորող անգլախոսներն էլ դժվարանում են, օրինակ, կրկնակի ժխտում անելիս («*ես ոչ մի գիրք ունեմ*»՝ փխն.՝ «*ես ոչ մի գիրք չունեմ*» (անգլ. “I have no book”): Կամ երբ արևմտահայերեն խոսողն արևելահայերեն խոսելիս ասում է «*այս պարագային*», քանի որ այդպես է արևմտահայերենում՝ փոխանակ «*այս պարագայում*» ասելու:

Հատկապես շատ են քերականական փոխներթափանցումները երկլեզու մարդկանց շրջանում: Օրինակ՝ սփյուռքահայերը,

որոնց հիմնական լեզուն տվյալ երկրի լեզուն է, իսկ հայերենը կենցաղային շփումների ժամանակ են գործածում, հայերեն խոսելիս ուղղակի պատճենում են իրենց հիմնական լեզվի կառույցները («*ավտոբուս վերցնել*»՝ փխն.՝ «*ավտոբուս նստել*» (“*Take a bus*” (անգլ.), «*вземам автобус*» (բուլղ.)); «*չկա ինչի համար*»՝ փխն.՝ «*չարժե/խնդրեմ*» (բուլղ.՝ «*няма защо*»)), պահպանում են հիմնական լեզվի շարադասությունը («*ես գրում եմ նամակ*»՝ փխն.՝ «*(ես) նամակ եմ գրում*» – ռուս.՝ «*я пишу письмо*»)), խառնում են թվի քեր. կարգը («*ես սիրում եմ խնձորներ*»՝ փխն.՝ «*ես խնձոր սիրում եմ*» – «*я люблю яблоки*» (ռուս.) և “*I like apples*” (անգլ.)):

Մինչև 20-րդ դարի կեսերը փոխներթափանցումն ընկալվում էր բացառապես իբրև մերժելի երևույթ, սակայն հետագայում լեզվաբանները սկսեցին խոսել նաև դրական փոխներթափանցման մասին. դրա միջոցով փոխադարձաբար հարստանում են երկու լեզուները (*Positive and negative transfer*)⁵³:

Դրական փոխներթափանցումը ժամանակակից հայ լեզվաբանության մեջ գրեթե ուսումնասիրված չէ. հիմնականում ուսումնասիրում են այլ լեզուներից անհարկի փոխառությունները՝ օտարաբանությունները, օտար լեզուների ազդեցությամբ արտասանական սխալները, օտարաբան կառույցները, որոնք ներկայացվում են միմիայն բացասական լույսի ներքո:

Առաջադրանք 1. Ուղղել օտարաբան կառույցները, քերականական պատճենումները:

ա) Ոչ միայն կրպակի մոտ, այլև Մալայա Բրոննայա փողոցի գուգահեռ ամբողջ ծառուղու վրա ոչ մի մարդ չկար:

բ) Չնայած վիրահատվել էր և հաստ ոսպնյակավոր ակնոց էր

⁵³ Ավելի մանրամասն տե՛ս *RunGLISH, Spanglish, Finglish, Dunglish* տերմինները անգլերենի բառարաններում:

կրում, տեսողությունը չէր լավանում:

զ) Խանութում առկա ողջ տեսականու վրա կա 20 % զեղչ:

դ) Գրքի կազմման և խմբագրման աշխատանքներին մասնակցել են նաև ուսանողները:

ե) Ուրախ ենք հայտնել, որ թարմացվել է Ucom-ի շարժական հեռուստատեսության «MediaRoom» հավելվածը:

զ) Հիվանդների մոտ նկատվում է ջերմաստիճանի բարձրացում, վատ ինքնազգացողություն, սրտխառնոց:

է) Օբսեսիվ (կաշուն) մտքերի էությունը կայանում է նրանում, որ հիվանդի մոտ պարզ գիտակցության պայմաններում առաջանում են երևույթներ՝ մտքեր, հիշողություններ, վախեր, որոնք անընդհատ կրկնվում են, տանջում հիվանդին:

ը) Հոմանիշները դրանք իմաստով նույն կամ մոտ բառերն են:

թ) «Խնդիրը նրանում է, որ աուտիզմի մասին քիչ է տեղեկացված ոչ միայն հանրությունը, այլ խնդրի մասին քիչ են իրազեկ նույնիսկ բժիշկները», - ասաց «Երեխաների զարգացման միջազգային կենտրոն»-ի տնօրենը:

ժ) Խոսքը գնում է այնպիսի կարևորագույն բանի մասին, ինչպիսին գիտության ֆինանսավորումն է:

ի) Ի տարբերություն Բաքվի՝ Երևանը կիսում է միջազգային հանրության կարծիքը դարաբաղյան կարգավորման հարցում:

լ) Խնդիրը կայանում է նրանում, որ մենք թերագնահատում ենք հակառակորդին:

խ) Մենք չենք տիրապետում նման ինֆորմացիայի, և այս պահին չենք կարող պատասխանել ձեր հարցերին:

ծ) ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանվել է դեղերի՝ դեղատոմսով բաց թողնման կարգը:

կ) Ցանկանում եմ, որպեսզի այս տարին լինի խաղաղության և բարեկեցության տարի:

Առաջադրանք 2. Գտնել օտարաբան կառույցները, քերականական պատճենումները և ուղղել:

ա) Mr and Mrs Dursley, of number four, Privet Drive, were proud to say that they were perfectly normal, thank you very much. They were the last people you'd expect to be involved in anything strange or mysterious, because they just didn't hold with such nonsense.

Բաղեղի փողոց 4 հասցեում բնակվող պարոն և տիկին Դուրսլիները հպարտ էին բոլորին հայտարարել, որ իրենք լրիվ նորմալ են՝ հանկարծ մեկը չկասկածի: Նրանք վերջին մարդիկ էին, ում խառնված կտեսնեիք անհասկանալի ու տարօրինակ որևէ գործում:

բ) Mr Dursley was the director of a firm called Grunnings, which made drills. He was a big, beefy man with hardly any neck, although he did have a very large moustache.

Պարոն Դուրսլին տնօրինում էր «Գրաննինգս» ֆիրման, որ զբաղվում էր գայլիկոնների արտադրությամբ: Նա մարմնեղ էր ու պարարտ, վզի իսպառ բացակայությամբ ու թավ բեղերով:

գ) He got into his car and backed out of number four's drive. It was on the corner of the street that he noticed the first sign of something peculiar – a cat reading a map.

Մեքենան չորրորդ տան մոտ կանգնեցնելիս առաջինը, որ տեսավ՝ բնավ տրամադրության բարձրացմանը չնպաստող գծավոր կատուն էր:

դ) Albus Dumbledore didn't seem to realise that he had just arrived in a street where everything from his name to his boots was unwelcome.

Ալբրուս Դամբլդորն ասես չէր գիտակցում, որ հայտնվել է մի փողոցում, ուր իր ամեն ինչը, սկսած անունից, վերջացած կոշիկ-

ներով, մեղմ ասած չէր ողջունվում:

(Հարի Փոթերը և փիլիսոփայական քարը, թարգմ.՝ Լ. Մկրտչյան)

ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

Աշխարհի ամենաներկար քարանձավը գտնվում է ԱՄՆ-ում: Հսկայական չափերի պատճառով այն ստացել է Mammoth cave անունը, որը սիսալմամբ ռուսերեն թարգմանվել է Мамонтова пещера: Բանն այն է, որ անգլերենում mammoth-ը ոչ միայն մամոնտն է, այլև նշանակում է «հսկայական, անհեղին»: Ռուսերենի միջոցով այս սխալն անցել է նաև հայերենին, և քարանձավի անունը թարգմանվում է Մամոնտի քարանձավ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագյան Մ., Խոհեր մայրենի լեզվի մասին, Եր., 1988 (2-րդ հրատ.):
2. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2003:
3. Թեյլան Լ., Շարահյուսական նորմ. գուգաձևեր և շեղումներ, «Հայագիտության հարցեր», 2017, 1 (10), էջ 37-148:
4. Алимов В. В. Интерференция в переводе (докторская диссертация). М., 2004:

ԹԵՄԱ 11. ՏԱՌԱԴԱՐՁՈՒՄ ԵՎ ԳՐԱԴԱՐՁՈՒՄ. ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

Սովորաբար ԹԼ-ում գրադարձվում/տառադարձվում են հատուկ անունները՝ անձնանուն, տեղանուն, աշխարհագրական անուն, թերթերի, ապրանքանիշների, երաժշտական խմբերի անվանումները, նաև փոխառյալ բառերն ու իրակությունները⁵⁴:

Տառադարձում (транскрипция): Որևէ լեզվի հնչույթների, հնչյունների, արտասանական առանձնահատկությունների փոխանցումը մի այլ լեզվի տառերով: Այստեղ կարևորվում է բառի արտասանությունը փոխանցելը: Տառադարձում սովորաբար անում ենք ոչ թափանցիկ ուղղագրություն ունեցող լեզուներից՝ անգլերենից, ֆրանսերենից ն. օրինակ՝ անգլ. **George – Ջորջ, Jane – Ջեյն, Michael – Մայքլ**, ֆրանս. **Jean – Ժան, Renault – Ռենո, Jean – Louis Trintignant – Ժան Լուի Տրենտինյան, Henri Verneuil – Անրի Վեռնյո**:

Թեև մաքուր տառադարձում միշտ չի հանդիպում. հայերեն թարգմանելիս մենք սովորաբար մասամբ պահպանում ենք բառի գրաֆիկական պատկերը, մասամբ՝ արտասանությունը՝ հաշվի առնելով մեր լեզվի առանձնահատկությունները, ձևավորված թարգմանական ավանդույթը. օրինակ՝ **Bayron – Բայրոն** (ոչ թե **Բայրըն**), **London – Լոնդոն** (ոչ թե **Լանդըն**), **Thames – Թեմզա** (ոչ թե **Թեմզ**), **ֆրանսերենի** հետնաքմային **r-ն** (*guttural R*) (**Pierre, Paris**) հայերենում գրում ենք **ռ** կամ **ր**, ոչ թե **դ**:

Կարևոր դեր է խաղում նաև այն հանգամանքը, թե ինչ ճանապարհով ենք փոխառել այս կամ այն բառը՝ անմիջակա՞ն, թե՞ միջնորդավորված, գրավո՞ր, թե՞ բանավոր եղանակով: Մինչ անկախությունը լույս տեսած մեր բոլոր բառարաններում *dollar-ը*

⁵⁴ Տառադարձման կանոնների մասին մանրամասն տե՛ս **Տեքսինաբանական և ուղղագրական տեղեկատու**, Եր., 2006 (<https://bit.ly/3brlr7c>):

գրված է կրկնակ լ-ով՝ *ղըլլար*. ակնհայտ է, որ բառը փոխառել ենք գրավոր եղանակով, այդ պատճառով բառի գրաֆիկական պատկերը պահպանել ենք՝ հաշվի չառնելով արտասանությունը⁵⁵:

Խորհրդային շրջանում բազմաթիվ հատուկ անուններ փոխառել ենք միջնորդ ռուսերենից, ինչն այսօր երբեմն խնդիրներ է ստեղծում, քանի որ շատացել են բնագրի լեզվից թարգմանությունները: Օրինակ՝ ռուսերենի միջոցով ժամանակին փոխառել ենք *Տեխաս* տեղանունը, իսկ այսօր անգլերենից անմիջական թարգմանություններում այն հանդիպում է *Թեքսազ* ձևով (անգլ.՝ *Texas* (*ˈtɛksəs*)): Կամ՝ հայերենում *Nizza* քաղաքի անունը դեռ Մխիթարյանների ժամանակից ավանդաբար տառադարձում ենք *Նիցցա*, սակայն վերջին 1-2 տասնամյակում հանդիպում է նաև *Նիս* ձևը (ֆր.՝ *Nice*), քանի որ թարգմանում են բնագիր ֆրանսերենից՝ առանց հաշվի առնելու արդեն ձևավորված ավանդական գրությունը:

Գրադարձում (транслитерация): Որևէ լեզվի գրային նշանների, տառերի փոխանցում մի այլ լեզվի գրային նշանների, տառերի միջոցով: Այստեղ կարևորվում է ԲԼ-ի բառի գրաֆիկական պատկերը ԹԼ-ում հնարավորինս փոխանցելը: Գրադարձում անում ենք, օրինակ, ռուսերենից, վրացերենից, իսպաներենից, որոնք բավականին թափանցիկ ուղղագրություն ունեն (*Денис – Դենիս*, ոչ թե *Ձենիս*, ինչպես արտասանվում է, *Москва – Մոսկվա*, ոչ թե *Մասկվա*, *Madrid – Մադրիդ*, ոչ թե *Մադրի* (իսպ. վերջին *դ*-ն գրեթե անլսելի է արտասանվում): Բացարձակ մաքուր գրադարձումը ևս միշտ չի հանդիպում. օրինակ՝ *Дмитрий –*

⁵⁵ Վերջին շրջանում լույս տեսած բառարաններում բառը գրվում է մեկ լ-ով՝ *ղըլար*, ինչը մեր համոզմամբ ճիշտ չէ, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, բառը գրավոր եղանակով ենք փոխառել, և լեզվակիրների մեծ մասը բառն արտասանում է երկար բաղաձայնով:

Դմիտրի, ոչ թե Դմիտրիյ, Чайковский – Չայկովսկի, ոչ թե Չայկովսկիյ:

Նկատի առնենք սակայն, որ մականունները, երգիծական, «խոսուն անունները» սովորաբար թարգմանվում են, ոչ թե տառադարձվում, քանի որ դրանք զուտ անվանողական գործառույթ չունեն, այլ բնութագրական, արտահայտչական.

Иоан Грозный – Իվան Սևեդ, Pépin le Bref – Պիպին Կարճահասակ, Richard the Lionheart – Ռիչարդ Առյուծասիրտ:

Ավանդական գրություն: Դիցաբանական, աստվածաշնչյան, պատմական անունների համար ունենք վաղուց ընդունված գրություն. դրանք չեն թարգմանվում այսօր ընդունված տառադարձման/գրադարձման կանոններով: Ընդ որում՝ այդ անունների համար ավանդական գրություն գոյություն ունի թերևս բոլոր լեզուներում: Տարբերությունները պայմանավորված են տվյալ լեզվի առանձնահատկություններով և նրանով, թե որ լեզվի միջնորդությամբ են անունները թարգմանվել: Օրինակ՝ **נָשִׁׁ** (եբրայերեն՝ *Մոշե*) աստվածաշնչյան մարգարեի անունը տարբեր լեզուներում ունի ավանդական գրություն՝ *Մովսես* (հայ.), *Moses* (անգլ.), *Moisés* (իսպ.), *Moïse* (ֆր.), *Моисей* (ռուս.), *Musa* (թուրք.) ևն:

Ավանդական գրությունը վերաբերում է դիցաբանական, աստվածաշնչյան, պատմական անուններին: Այսինքն՝ եթե խոսքը աստվածաշնչյան կերպարի մասին է, ռուս. *апостол Павел*, անգլ. *Paul the Apostle*, ֆր. *Paul de Tarse* կամ *saint Paul*, իսպ. *Pablo de Tarso* անունները թարգմանում ենք *Պողոս առաքյալ*, մնացած դեպքերում գործում են տառադարձման/գրադարձման ընդունված կանոնները՝ *Павел – Պավել, Paul – Փոլ, Pablo – Պաբլո:*

Առաջադրանք 1. Օգտվելով «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու»-ից, թարգմանական բառարաններից, համացանցից՝ գրել տրված հատուկ անունների համարժեքները

տարբեր լեզուներում (ռուս., անգլ., ֆրանս.):

Աստվածաշնչյան անուններ⁵⁶

Պողոս (Պաւղոս/Պօղոս) –

Հովսեփ (Յովսէփ) –

Հիսուս (Յիսուս) –

Հուդա (Յուդա) –

Ռաքել (Հռաքել) –

Մատթեոս (Մատթէոս) –

Փիլիպոս –

Մարիամ Մագդաղինացի –

Պետրոս –

Պիղատոս –

Մարիամ –

Դիցաբանական և պատմական անուններ

Հովերոս –

Լուկուլլոս –

Հովիոս Գայոս Կեսար –

Բարդուղիմեոս –

Աքիլլես –

Ողիսևս –

Պրոմեթևս –

Թեսևս –

Պերիկլես –

Առաջադրանք 2. Օգտվելով բառարաններից՝ գրել հետևյալ տեղանունների հայերեն համարժեքները, նշել զուգաձևությունները (եթե կան):

Nice, Niza, Nizza, Ницца –

⁵⁶ Փակագծում անունները տրված են նաև դասական ուղղագրությամբ, եթե դրանց գրությունը տարբերվում է այսօրվա ուղղագրությունից:

Venice, Venezia, Венеция –
 Rome, Rom, Roma, Рим –
 Athens, Atenas, Atene, Афины –
 Croatia, Croazia, Croatie, Хорватия –
 Montenegro, Црна Гора, Черногория –
 Qatar, Catar, Катар –
 Nile, Nil, Nilo, Нил –
 Babylon, Babilonia, Вавилон –
 Istanbul, Estambul, Стамбул –
 Beijing -Peking – Пекин -Pequin –

Առաջադրանք 3. Թարգմանել տեքստը, ուշադրություն դարձնել հատուկ անունների տառադարձմանը/գրադարձմանը:

ш) Площадь Святого Петра - одна из самых красивых и известных площадей в мире, созданная по проекту Джованни Бернини в 1656-1667 годах, - имеет форму замочной скважины и являет собой пример урбанистического барокко. К площади ведет прямая широкая улица Примирения (Via della Conciliazione), проложенная Муссолини в 1930 гг. Белая линия, нарисованная на брусчатке по внешнему периметру площади, очерчивает государственную границу Ватикана. Со всех других сторон город-государство Ватикан окружен высокой стеной. Посередине площади возвышается египетский обелиск из розового гранита высотой 25,5 метров, привезённый в Рим императором Калигулой в 37 году.

p) Located in modern Turkey, Göbekli Tepe is one of the most important archaeological sites in the world. Göbekli Tepe (Turkish for the 'hill of the navel') is a 1000 foot diameter mound located at the highest point of a mountain ridge, around 9 miles northeast of the town of Şanlıurfa (Urfa) in southeastern Turkey. Since 1994 CE, excavations conducted by Klaus Schmidt of the Istanbul branch of the

German Archaeological Institute, with the cooperation of the Şanlıurfa Museum, have been taking place at the site. (...) The depictions of vultures at Göbekli Tepe have parallels at other Anatolian and Near Eastern sites. The walls of many of the shrines at the large Neolithic settlement of Çatal Höyük (in existence from approximately 7500 BCE to 5700 BCE) in south-central Turkey were adorned with large skeletal representations of vultures.

ԳԻՏԵՔ, ՈՐ...

«Կոմպոտ» (ֆր. *compote*) բառը ֆրանսերենից անցել է ռուսերենին, իսկ հայերենը փոխառել է միջնորդ ռուսերենից: Մակայն դրանց պատրաստման եղանակները փոքր-ինչ տարբեր են. ռուսերենում, հայերենում կոմպոտը ջրիկ է, իսկ ֆրանսիացին կարող է կոմպոտը գդալով ուտել:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., 2006:
2. Զահուկյան Գ., Օտար բառերի տառադարձման սկզբունքները, «Լրաբեր», 1972, N 3:
3. Ղարաբյուլյան Թ., Օտարազգի բառերի տառադարձման շուրջ, «Լրաբեր», 1973, N 1, էջ 85-94:

ԹԵՄԱ 12. ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ (ԴՄ) ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դարձվածքը, ինչպես գիտենք, կայուն բառակապակցություն է, որի կազմի մեջ մտնող բաղադրիչները անտրոհելի են ու անփոխարինելի, և բաղադրիչների առանձին իմաստներից հնարավոր չէ հասկանալ դարձվածքի իմաստը⁵⁷: Դարձվածքների մեծ մասը, հատկապես դարձվածային սերտաճումները՝ իդիոմները, հնարավոր չէ բառացի թարգմանել: Սակայն սա չի նշանակում, թե դարձվածքներն առհասարակ անթարգմանելի են:



Նկ. 15. Երբ դարձվածքը բառացի էս հասկանում:

ԴՄ-ները թարգմանվում են մի քանի հիմնական սկզբունքներով՝ ա) բացարձակ համարժեքով, բ) մոտավոր կամ հարաբերական համարժեքով, գ) պատճենման միջոցով, դ) նկարագրական թարգմանությամբ⁵⁸:

ա) **Բացարձակ համարժեք** սովորաբար ունեն նույն աղբյու-

⁵⁷ Լեզվաբանների մի մասը դարձվածային միավորների մեջ է դնում ասացվածքները, թևավոր խոսքերը, անեծքներն ու օրհնանքները:

⁵⁸ Այս մասին տե՛ս **Влахов С., Флорин С.**, նշվ. աշխ., **Бархударов Л.**, նշվ. աշխ., **Федоров А.**, նշվ. աշխ.:

րից ծագած ԴՄ-ները (Աստվածաշնչից, հունա-հռոմեական դի-
ցաբանությունից, համաշխարհային պատմությունից ու գրական-
ությունից, գիտության, արվեստի բնագավառներից): Դրանք սո-
վորաբար բառացի պատճենված դարձվածքներ են: Օրինակ՝

իր խաչը տանել/կրել – Нести свой крест – Carry your cross

Ռուբիկոնն անցնել – перейти Рубикон – To cross the Rubicon

արգելված պտուղ – запретный плод – forbidden fruit:

Բացարձակ համարժեք կարող են ունենալ մարմնի մասերի
անվանումներով (սոմատիկ) և կենդանիների անուններով կազմ-
ված ԴՄ-ները, որոնք ինքնուրույն են առաջացել տարբեր լեզու-
ներում, կամ որոնց առաջացման աղբյուրը պարզ չէ.

զրուխը կորցնել – потерять голову – lose one's head

прикусить язык – լեզուն կծել – bite one's tongue

քիթը կախել – повесить нос

շան պես հոգնած – устал как собака

*մազը երկար, խելքը կարճ – волос длинный, ум короткий –
дълга коса, къс ум:*

բ) **Հարաբերական/մոտավոր համարժեք:** ԴՄ-ների պատկե-
րային հիմքը տարբեր է, սակայն դրանք ունեն նույն իմաստն ու
ոճական համապատասխանությունը.

*երկու կրակի/քարի արանքում – между молотом и наковаль-
ней* (ոուսերենն ունի նաև բացարձակ համարժեք՝ *между двух
огней*)

*լույն ուղտ սարքել – делать из мухи слона – making a mountain
out of a molehill*

*սիրտը փորն ընկնել – душа в пятки ушла – sb's heart is in
his/her boots*

իրեն հավաքել – взять/брать себя в руки

чья бы корова мычала? – ո՞վ էլ խուփ

бить баклуши – ճանճ քշել, պարապ-սարապ լինել/ման գալ

(знать) до седьмого колена – մինչև յոթ պորտն իմանալ:

զ) **ԴՄ-ի պատճենումը** հնարավոր է հատկապես դարձվածային կապակցությունների թարգմանության ժամանակ, քանի որ առանձին բաղադրիչների իմաստից դարձվածքի իմաստը հասկանալի է դառնում, կամ դրանց աղբյուրը հայտնի է՝ գիտության, արվեստի ոլորտ, համաշխարհային գրականություն, պատմություն և այլն: Օրինակ.

дареному коню в зубы не смотрят – նվեր տված ձիու ատամներին չեն նայում

лить крокодиловы слезы – կոկորդիլոսի արցունք թափել

первая скрипка – առաջին ջութակ

остаться у разбитого корыта – կոտորած տաշտակի առաջ մնալ:

դ) **Նկարագրական թարգմանության** դիմում են այն ժամանակ, երբ ԹԼ-ում չկա ԲԼ-ի դարձվածքին ո՛չ բացարձակ, ո՛չ հարաբերական համարժեք ընդհանրապես կամ տվյալ համատեքստում, և հնարավոր չէ նաև բառացի պատճենումը: Այս դեպքում դարձվածքը կարող է թարգմանվել բառով.

ձայնը/ձենը կտրել – заткнуть, замолкнуть; ձայնը/ձենը գլուխը զցել – разораться; աչքդ լույս -поздравить (с чем-то), աչքով տալ – сглазить:

ԹԼ-ում համապատասխան դարձվածք չլինելու պարագայում հնարավոր է նաև բառապակապակցությամբ, նույնիսկ նախադասությամբ թարգմանությունը. այս դեպքերում թարգմանությունը կախված է կոնկրետ համատեքստից, խոսքային իրադրությունից: Օրինակ.

Ни пуха, ни пера. արտահայտությունը գործածվում է հաջողություն մատրիցի: Հայերենում բառարանային համարժեք չունենք, համատեքստից կախված՝ կարող է լինել նկարագրական թարգմանություն (օր.՝ եթե ճանապարհ դնելիս են ասում «*НИ*

пыха...», կարելի է թարգմանել՝ *բարի ճանապարհ, հաջողություն, բարով գնաս*):

Bluestocking (ռուս.՝ *синий чулок*). 17-18-րդ դդ. հեզնանքով այդպես էին կոչում գիտությամբ զբաղվող կանանց, որոնք զուրկ էին կանացիությունից, անհրապույր էին: Բառացի պատճենված «*կապույտ գուլպա*»-ն խիստ անհաջող տարբերակ է: Այս դարձվածքը համատեքստում կարող է թարգմանվել նկարագրական եղանակով:

The tail wagging the dog (ռուս.՝ *хвост виляет собакой*). Բառացի՝ *պոչը թափահարում է շանը*: Հեզնական իմաստ ունի, ասում են այն իրավիճակում, երբ անկարևոր, երկրորդական որևէ բան/որևէ մեկը դառնում է իրավիճակը վերահսկող:

Առաջադրանք 1. Օգտվելով բառարաններից՝ գտնել տրված դարձվածքների և կայուն բառակապակցությունների համարժեքները ռուսերենում և անգլերենում: Բացատրել դրանց իմաստը:

Միզիփոսի աշխատանք/տառապանք –
Տրոյական ձի –
Կռվախնձոր դառնալ –
Գորդյան հանգույց –
Դանայան տակառ –
Արգելված պտուղ –
Աստծո գառ –
Աչքի լույսի պես պահել –
Ավագ ուրբաթ –
Թաթախման/Խթման երեկո –
Անառակ որդի –
Գողգոթայի ճանապարհ –
Ռուբիկոնն անցնել –

Պյուռոսյան հաղթանակ –
Հողմադացների դեմ կռվել/կռիվ անել –

Առաջադրանք 2. Հետևյալ դարձվածքները թարգմանել հայերեն:

a stone's throw –
add fuel to the fire –
dog eat dog –
get out of hand –
et the cat out of the bag –
off the top of one's head –
strick to one's guns –

Առաջադրանք 3. Բառարաններից օգտվելով՝ գտնել ընդգծված դարձվածքների համարժեքները հայերենում: Ի՞նչ սխալներ է արել թարգմանիչը:

1. Ежели баба в шляпке, ежели чулочки на ней фильдековские, или мопсик у ней на руках, или зуб золотой, то такая аристократка мне и не баба вовсе, а **гладкое место**.

Եթե կնիկը գլխարկով է, եթե հագի գուլպաները, հագի չուլքին ֆիլդեկոսի է, կամ ձեռքին մոպսիկ կա, կամ ատամը ոսկյա է, ապա այդպիսի ազնվագարմուհին ինձ համար կնիկ չի սկի, այլ հարթ տեղ:

2. И сама кутается в байковый платок, и **ни мур-мур больше**.
Только **глазами стрижёт**.

Ու փաթաթվում է բայկայից շալով, և ոչ մի ավելորդ մոլտոց: Մենակ աչքերով թրաշում է:

3. А **денег** у меня - **кот наплакал**. Самое большое, что на три пирожных. Она кушает, а я с беспокойством по карманам шарю, смотрю рукой, сколько у меня денег. А **денег** - с **гульки**н нос.

Իսկ ինձ մոտ փողը գյուլ չի տվել: Ամենաշատը երեք թխվածքի է: Նա ուտում է, իսկ ես անհանգստությամբ ջեբերս եմ պրպտում, շոշափում եմ գրպանի մեջ՝ տեսնեմ ինչքան փող ունեմ: Իսկ փողը քչից քչիչ է:

4. А мне будто **попала вожжа под хвост**.

Իսկ ես, ասես պոչիս տակը կոծոծ կպած լինի:

5. - Сколько с нас за скушанные три пирожные?

А хозяин держится индифферентно - **ваньку валяет**.


Իսկ տերը իրեն ինդիֆերենտ է պահում՝ միամիտի տեղ է դրել:

(Մ. Зощенко. Аристократка.
Թարգմ.՝ Ա. Ոսկանյան)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Влахов С., Флорин С. Непереводимое в переводе. М., 1980.
2. Бархударов Л. Язык и перевод. М., 1975.

ԹԵՄԱ 13. ԲԱՌԻ ՆԵՐԼԵԶՎԱԿԱՆ ԻՄԱՍՏ. ԲԱՌԱԽԱՂԵՐԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ



Նկ. 16. Լեզվաբանական բառախաղ:

Ներլեզվական իմաստը տվյալ նշանային համակարգում նշանների փոխհարաբերությունն է: Ներլեզվական իմաստները գրեթե երբեք չեն թարգմանվում բառարանային համարժեքներով, քանի որ ամեն լեզու ունի իր կազմի մեջ մտնող միավորների՝ միայն իրեն բնորոշ ներլեզվական համակարգ⁵⁹: Որոշ բացառություններ կարելի է անել մոտ ցեղակցություն ունեցող լեզուների համար, խիստ հազվադեպ էլ ներլեզվական իմաստները կարող են պատահաբար համընկնել տարբեր լեզուներում:

Ներլեզվական իմաստ ասելով նկատի ունենք, օրինակ, բառերի հնչյունական նմանությունը (առձայնայնոյթ, բաղաձայնայնոյթ, հանգ), ձևային նմանությունը (բառակազմական հիմք), իմաստային նմանությունը (հոմանշություն) կամ տարբերությունը (հականշություն), բառերի կապակցելիությունը նախադասության մեջ ևն:

Օրինակ՝ հայերենում 1. բալ՝ «բալենու պտուղը», 2. բալ՝ «մշուշ, մեգ» (գրք.), 3. բալ՝ «չափման միավոր», 4. բալ՝ «ասել, խո-

⁵⁹ Տե՛ս Բարхударов Л., նշվ. աշխ., էջ 72, 133-142:

սեղ» (գրբ.) բառերը համանուն են, և դժվար է գտնել որևէ լեզու, որտեղ այս բառերի բառարանային համարժեքները նույնպես համանուն լինեն: Այդ է պատճառը, որ բառացի չեն թարգմանվում **բառախաղերը** (*каламбур, игра слов, word play, pun*), քանի որ դրանք կառուցվոժում են զուտ ներլեզվական իմաստների վրա. Օրինակ.

Գիտեմ, գիտեմ, գուշակ էլ ես, *կախարդ էլ ես*,

Չէ՞ որ դու ինձ ոտով-գլխով *կախարդել ես»* (Պ. Ս.):

Չեն թարգմանվում **խաչբառները**, քանի որ տարբեր լեզուներում նույն բառարանային իմաստով բառերի մեջ տառերի թիվն ու դասավորությունը չեն համընկնում (օր.՝ հայ. *սեղան*՝ հինգ տառ, իսկ ռուս. *стол*՝ չորս տառ): Բառարանային համարժեքներով չեն թարգմանվում նաև **շուտասելուկները**, քանի որ դրանք ևս հիմնված են զուտ ներլեզվական նշանակությունների վրա (օր.՝ *Շուշանիկը սուս անի, նստի մոտը Սուսանի*): Ներլեզվական իմաստների վրա են հիմնված **հանգերը**, այդ պատճառով հանգ կազմող բառերը նույնպես սովորաբար հնարավոր չէ թարգմանել բառարանային համարժեքներով:

Զուտ ներլեզվական իմաստների վրա են հիմնված **տավտոգրամները**, որտեղ տեքստի բոլոր բառերը սկսվում են նույն տառով: Իբրև օրինակ հիշենք Չարենցի հայտնի տավտոգրամներից մեկը.

Մառ մորմոքում է մայրամուտը,

Մահվան մոխիր է մովից մաղում,-

Մեռնում է մուրը մթնշաղում,-

Մառ մորմոքում է մայրամուտը: -

Մտորումներս մահ են, մուր են,

Մարիսե մտքեր են միայն միտում,-

Եվ մորմոքում է մայրամուտը,

Մահվան մրուր է մովից մաղում...

Այս տավտոգրամը հնարավոր չէ թարգմանել այլ լեզվով՝ միաժամանակ պահպանելով բառերի թե՛ բառարանային, թե՛ ներլեզվական իմաստները: Սակայն եթե ներլեզվական իմաստները հնարավոր չէ բառարանային համարժեքներով թարգմանել, չի նշանակում, թե դրանք առհասարակ չեն թարգմանվում: Օրինակ՝ վերոհիշյալ տավտոգրամը կարելի է փորձել թարգմանել *смерть* բառի օգնությամբ (քանի որ այն բանաստեղծության «առանցքն» է)՝ հնչյունախաղը փոխանցելով *с, р, т* հնչյուններ ունեցող, մոտ իմաստային դաշտի բառերով՝ *мертвый, смутный, муть, темный*՝ և այլն:

Ամեն անգամ թարգմանիչը պիտի որոշի, թե ինչն է ավելի կարևոր տվյալ թարգմանության մեջ՝ հնչյունախաղը, բառախաղը, թե՛ իմաստը փոխանցելը: Այստեղ կարևոր է դառնում նաև թարգմանչի երևակայությունը, ստեղծագործական միտքը:

Ինչպես գիտենք, **բառախաղ** է ստեղծվում մի քանի հիմնական եղանակներով՝

- ա) համանուններով, հարանուններով,
- բ) բազմիմաստ բառերով,
- գ) հականիշներով (սովորաբար նույնարմատ),
- դ) կեղծ ստուգաբանության միջոցով:

Այս նույն միջոցները կիրառելի են նաև բառախաղերի թարգմանության ժամանակ⁶⁰: Նույն կերպ հնարավոր է թարգմանել նաև շուտասելուկները, հանգերը՝ օգտագործելով ԹԼ-ի ներլեզվական իմաստները: Օրինակ՝ Նկ. 16-ի լեզվաբանական բառախաղը, որը կազմված է *причастие* համանուն բառերի միջոցով (1. *причастие* – *եկղց*. հաղորդություն, 2. *причастие* – *լեզվը*. անականական դերբայ), հնարավոր է հայերեն թարգմանել, օրինակ, *խոնարհվել* բառի տարբեր իմաստներն օգտագործելով (1. *զլուխ*

⁶⁰ Բառախաղերի թարգմանության մասին տե՛ս, օրինակ, **Влахов С., Флорин С.**, նշվ. աշխ., էջ 286-313:

խոնարհել մեկի առաջ, թեքվել, 2, լեզվը. բայի քեր. կարգերից մեկը):

Առաջադրանք 1. Համեմատել Քերոլի «Ալիսը հրաշքների աշխարհում» հեքիաթի բնագիրը ռուսերեն երկու թարգմանությունների ու հայերեն թարգմանության հետ, գտնել բառախաղերի թարգմանությունը:

ա) I couldn't afford to learn it.' said the Mock Turtle with a sigh. 'I only took the regular course.'

'What was that?' inquired Alice.

'*Reeling and Writhing*, of course, to begin with,' the Mock Turtle replied; 'and then the different branches of Arithmetic—*Ambition, Distraction, Uglification, and Derision*.'

'I never heard of "Uglification,"' Alice ventured to say. 'What is it?'

The Gryphon lifted up both its paws in surprise. 'What! Never heard of uglifying!' it exclaimed. 'You know what to beautify is, I suppose?'

'Yes,' said Alice doubtfully: 'it means—to—make—anything—prettier.'

'Well, then,' the Gryphon went on, 'if you don't know what to uglify is, you *area* simpleton.'

- Мне вот так и не удалось по-настоящему углубиться! Не хватило меня на это,- сказал Деликатес со вздохом.- Так я и остался при высшем образовании...

А что же вы учили? - спросила Алиса.

Деликатес неожиданно оживился.

- Кучу всяких наук! - начал он.- Ну, первым делом, учились Чихать и Пихать. Потом арифметика, вся насквозь: Почитание,

Давление, Уважение и Искажение.

- Почитание - понимаю. Уважение - понимаю. Давление - понимаю, а вот "Искажение"? Что это такое? - сказала Алиса.

Грифон с деланным удивлением всплеснул лапами.

- Не знаешь "искажения"? И чему вас там только учат! - ужаснулся он.- Ну, хоть такое простое слово "реставрировать" слыхала?

- Ну как же,- не слишком уверенно начала Алиса.- Это... это... по-моему, это - делать, как было раньше.

- Вот именно! А уж если ты после этого не понимаешь, что такое "искажение",- значит, ты девица-тупица! - победоносно объявил Грифон, после чего Алисе совершенно расхотелось задавать вопросы на эту тему. (թարգմ.՝ Բորիս Զախորդեր)

- Все равно я не мог заниматься стиркой,- вздохнул Черепаха Квази.- Мне она была не по карману. Я изучал только обязательные предметы.

- Какие? - спросила Алиса.

- Сначала мы, как полагается, Чихали и Пищали,- отвечал Черепаха Квази.- А потом принялись за четыре действия Арифметики: Скольжение, Причитание, Умиление и Изнеможение.

- Я о «Причитании» никогда не слыхала,- рискнула заметить Алиса.

- Никогда не слыхала о «Причитании»! - воскликнул Грифон, вздевая лапы к небу.- Что такое «читать», надеюсь, ты знаешь?

- Да,- отвечала Алиса неуверенно,- смотреть, что написано в книжке и... читать.

- Ну да,- сказал Грифон,- и если ты при этом не знаешь, что такое «причитать», значит, ты совсем дурочка. (թարգմ.՝ Նինա Դեմուրովա)

- Ես չէի կարող սովորել այդ առարկաները,- հառաչեց Կեղծ

Կրիան,- ես միայն հիմնական դասընթացն էի անցնում:

- Իսկ ի՞նչ առարկաներ էին դրանք:

- Սկզբում, անշուշտ, մրել-կարթել,- բացատրեց Կեղծ Կրիան,- իսկ հետո թվաբանության չորս գործողությունները՝ գուշակել, մանել, ցանկապատել, բարակել:

- Ես երբեք «ցանկապատման» մասին չեմ լսել, դա ի՞նչ բան է: Արծվառնությունը զարմանքից բարձրացրեց Թները:

- Երբեք չե՞ս լսել «ցանկապատելու» մասին,- բացականչեց նա,- դու երևի զիտես, թե ի՞նչ է «այգի գցելը»:

- Այո,- թերահավատորեն ասաց Ալիսը,- դա նշանակում է ծառապատել մի որոշ տարածություն:

-Դե, եթե դու չզիտես, թե ինչ բան է «ցանկապատելը», - շարունակեց Արծվառնությունը,- ուրեմն դու ապուշ ես: (թաքսի.՝ Սոնա Սեֆերյան)

p) Alice did not feel encouraged to ask any more questions about it, so she turned to the Mock Turtle, and said ‘What else had you to learn?’

‘Well, there was Mystery,’ the Mock Turtle replied, counting off the subjects on his flappers, ‘—**Mystery, ancient and modern**, with *Seaography*: then *Drawling*—the Drawling-master was an old conger-eel, that used to come once a week:he taught us *Drawling, Stretching*, and *Fainting* in Coils.’

- А какие у вас еще были предметы? - спросила она.

- Ну, конечно, Истерия,- отвечал Деликатес, загибая лучи на своих плавниках.- Истерия, древняя и новейшая, с Биографией. Потом... раз в неделю приходила старая Мурена. Считалось, что она нас учит Рисковать Угрем и прочей муре - ну, там, Лживопись, Натюр-Морды, Верчение Тушею... (Բ. Չ.)

(...) Սոնա Ալիսին չէր համարձակվում հարցնել, թե ինչ էր նշանակում «սեֆերյան»:

«Причитание», она повернулась к Черепахе Квази и спросила:

- А что еще вы учили?

- Были у нас еще Рифы - Древней Греции и Древнего Рима, Грязнописание и Мать-и-мачеха. И еще Мимические опыты; мимиком у нас был старый угорь, он приходил раз в неделю. Он же учил нас Тригонометрии, Физиономии.... (Ն. Ռ.)

(...) Այիսն այլևս չհամարձակվեց հարցեր տալ և դիմեց Կեղծ Կրիային.

- Ուրիշ ի՞նչ առարկաներ էիր անցնում:

- Հին դարերի և նորագույն մատնություն,- պատասխանեց Կեղծ Կրիան և սկսեց մաշկաթաթերի վրա հաշվել առարկաները,- Հին ու նոր դարերի մատնություն, ջրագրության հետ միասին, և հետո բժագրություն: Այդ առարկայի դասատուն՝ ծեր Բժավոր Կարմրախայտը շաբաթը մեկ անգամ էր գալիս: Նա մեզ սովորեցնում էր կարմրել և խայտալ ծանծաղուտների մեջ: (Ս. Ս.)

Առաջադրանք 2. Փորձեք թարգմանել բառախաղերը՝ օգտագործելով հայերենի համանուն/հարանունները, բառերի բազմիմաստությունը, հականշությունը ևն:

ա) I love you in English because you make my present perfect.

բ) Страдаешь? Несовершенен? Не можешь определиться? Скорее всего, ты – глагол.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Влахов. С., Флорин С. Непереводимое в переводе. М., 1980.
2. Бархударов Л. Язык и перевод. М., 1975.
3. Քամայան Ա., Բառախաղերի թարգմանությունը, «Պոեզիայի ապագան թարգմանության միջոցով» միջ. գիտաժողով (հոդվածների ժողովածու), Եր., 2004, էջ 124-133:

ԹԵՄԱ 14. ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ. ՏԵՄԱԿՆԵՐԸ

Ցանկացած թարգմանության մեջ անխուսափելի են լեզվական ու արտալեզվական գործոններով պայմանավորված զանազան **փոխակերպումները** (переводческие трансформации/translation transformations): Տարբեր տեսաբաններ փոխակերպումները տարբեր կերպ են դասակարգում:

Լ. Բարխուդարովը բոլոր փոխակերպումները պայմանականորեն բաժանում է չորս խմբի՝ 1) **տեղափոխում** կամ **փոխատեղում** (перестановка), 2) **փոխարինում** (замена), 3) **բացթողում** (опущение) և 4) **հավելում** (добавление)՝ ընդգծելով, որ սրանք հազվադեպ են հանդես գալիս առանձին-առանձին⁶¹:

Տեղափոխումը կամ **փոխատեղումը** նախադասության մեջ բառերի, բառակապակցությունների ու բարդ նախադասության կազմի մեջ մտնող բաղադրիչների շարադասության փոփոխությունն է.

օր.՝ *обложка книги – գրքի կազմ, жена Игоря – Իգորի կինը, I am tired – ես հոգնած եմ:*

Փոխարինման դեպքերը Բարխուդարովը մի քանի խմբի է բաժանում.

ա) **բառաձևերի փոխարինումներ** (գոյականի թիվ, հոլով, առում, բայի եղանակա-ժամանակային ձևեր ևն).

բ) **խոսքիմասային փոխարինումներ** (գոյ.շղերանուն, գոյ.ձած., գոյ.ձբայ, ած.շղերանուն, ած.ձմակբ. ևն).

գ) **նախադասության անդամների փոխարինումներ** (որոշիչհատկացուցիչ, ենթակառարկայի ևն).

դ) **բառային փոխարինումներ**՝ կոնկրետացում, ընդհանրա-

⁶¹ Տե՛ս Բархударов Л. Язык и перевод, էջ 191-231:

ցում, պատճառահետևանքային կապերի փոխարինումներ.

ե) **հականշային թարգմանություն.** Բառը փոխարինվում է հականիշով, և սովորաբար փոխվում է նաև նախադասության կառույցը (դրական նխդ. չ ժխտական նխդ.):

զ) **փոխհաստուցում.** Բավականին հաճախ հանդիպող փոխակերպում է, երբ թարգմանության մեջ բնագրի այս կամ այն բաց թողնված տեղեկությամբ լրացվում է այլ տեղում և այլ միջոցներով.

է) **շարահյուսական կառուցվածքի փոխարինումներ** (ներգ. կառույց՝ կրավ. կառույց, դր. խոն.՝ ժխտ. խոն., դերբ. դարձվ.՝ շատորար. նխդ. են):

3. **Հավելումը** թարգմանության մեջ լրացուցիչ բառերի, բառակապակցությունների ներմուծումն է, որոնք բացակայում են բնագրի տեքստում: Հավելումներ են արվում այն դեպքերում, երբ թարգմանությունն ընթերցողների ֆոնային գիտելիքները բավարար չեն տեքստը հասկանալու համար, կամ երբ ԲԼ-ի բառին ԹԼ-ում համապատասխանում է բառակապակցություն/նախադասություն:

Օրինակ՝ *“Babylonia was a state in ancient Mesopotamia”* նախադասությունը հայերեն թարգմանելիս անհրաժեշտ է ավելացնել *թագավորություն* բառը՝ *«Բաբելոնի թագավորությունը Հին Միջագետքում գտնվող պետություն է եղել»:* *«Աբովյանով իջնում եմ Ամիրյան»* նախադասությունն այլ լեզվով թարգմանելիս հավելումների կարիք կա, քանի որ օտարալեզու ընթերցողի համար պարզ չէ, որ դրանք փողոցների անվանումներ են. *«По улице Абовяна спускаюсь на Амиряна»:* *«Из Москвы в Лиссабон на "Москвиче"»* հոդվածի վերնագիրը անհասկանալի է ամերիկացու, եվրոպացու համար, քանի որ նա ամենայն հավանականությամբ չգիտի, որ *"Москвич"*-ը խորհրդային ավտոմեքենայի անվանում է: Այս դեպքում թարգմանության մեջ պետք է հավելել *«ավտոմեքենա»* բառը, իսկ գուցե և հարկ լինի բացատրելու, որ այս մեքե-

նան բավականին ցածր դասի է և Էժանագին: Կամ՝ *городишко* բառը կազմված է նվազական-արհամարհական ածանցով, որի համար հայերենում մեկ բառով ձև չունենք. այն ճիշտ կլինի թարգմանել՝ համատեքստից կախված հավելելով համապատասխան որոշիչներ՝ *խղճուկ/անշուք/կորած-մոլորած փոքրիկ քաղաք*:

4. **Բացթողումներ** ամենից հաճախ լինում են այն դեպքերում, երբ բնագրի բառակապակցությանը/նախադասությանը ԹԼ-ում համապատասխանում է բառ, կամ երբ որևէ բառ/բառակապակցություն ավելորդաբանություն է ԹԼ-ում:

Հաճախ տարածված սխալներից է անձնական դերանունների անհարկի թարգմանությունը. հայերենի դիմավոր բայից պարզ է դառնում ենթակայի և՛ դեմքը, և՛ թիվը, մի բան, որ չկա, օրինակ, անգլերենում, ռուսերենի անցյալ ժամանակաձևերում: Հայերեն թարգմանելիս պետք է խուսափել անձնական դերանունների անհարկի կրկնությունից, դրանց կուտակումից: *“Where are you going?”*-ը հարկ է թարգմանել ոչ թե *«Դու ո՞ւր ես գնում»,* այլ *«ո՞ւր ես գնում»* (եթե, իհարկե, տրամաբանական շեշտը «դու»-ի վրա չէ. այդ դեպքում հնարավոր է *«Դո՞ւ ուր ես գնում»* տարբերակը):

Կամ՝ *“It’s cold”*-ը հայերեն թարգմանում ենք *«Ցուրտ է»*՝ առանց հայերենի համար այս նախադասության մեջ ավելորդ *It* դերանվան: *«Ереван - это прекрасный город»* նախադասությունը հայերեն թարգմանելիս բաց ենք թողնում *это*-ն, որն ավելորդաբանություն է մեր լեզվում՝ *«Երևանը հրաշալի քաղաք է»*:

Բացթողումներ կարող են լինել նաև օտար լեզվով տեքստում թարգմանության լեզվի՝ այսպես կոչված «սեփական իրակությունների» թարգմանության ժամանակ, քանի որ այն, ինչ օտար լեզվում հավելումների, բացատրության, ծանոթագրության կա-

րիք ունի, թարգմանությունն ընթերցողներին հայտնի է⁶²:

Վ. Կոմիսարովը առանձնացնում է փոխակերպումների երեք հիմնական տեսակ.

1. *բառային*՝ գրադարձում/տառադարձում, բառապատճենում, կոնկրետացում, ընդհանրացում, մոդուլյացիա (իմաստային զարգացում).

2. *քերականական*՝ բառաձևերի փոխարինումները, խոսքիմասային փոխարինումները, նախադասության անդամների փոխարինումներ, մասնատում ևն.

3. *համալիր* կամ *բառային-քերականական*՝ հականշային թարգմանություն, նկարագրական թարգմանություն, փոխհատուցում⁶³:

Յա. Ռեցկերն առանձնացնում է փոխակերպումների երկու հիմնական տիպեր՝ 1. *բառային փոխակերպումներ* (лексические трансформации) և 2. *քերականական փոխակերպումներ* (грамматические трансформации), որոնք էլ իրենց հերթին բաժանվում են մի քանի հիմնական խմբերի: Քերականական փոխակերպումները կարող են նաև *հավելումների* և *բացթողումների* պատճառ դառնալ, սակայն այս վերջինները Ռեցկերը քննում է բառային փոխակերպումների մեջ:

Փոխակերպումների տարբեր տեսակներին ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդիվ (տե՛ս **ԹԵՄԱ 15, 16, 17**):

⁶² Օրինակ՝ ռուսալեզու գրող **Նարինե Աբգարյանի** ստեղծագործությունների հայերեն թարգմանություններում կարիք չկա բացատրելու *гулли, захрумар, крак и цав, зурна* բառերը, որոնք ռուսերեն բնագրում բացատրված են կա՛մ ծանոթագրությամբ, կա՛մ հենց տեքստում:

⁶³ Տե՛ս **Комиссаров В.**, նշվ. աշխ., էջ 172-186:

“Mr. President, can you give us
a voiceless dental fricative?”

Tweet übersetzen



*Նկ. 17. Նախագահ Թրամփը ցույց է տալիս ինչպե՞ս ատամնային շփական
հնչյունի արտասանությունը:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бархударов Л. Язык и перевод. М., 1975.
2. Рецкер Я. Теория перевода и переводческая практика. М., 2007.

ԹԵՄԱ 15. ԲԱՌԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ

Յա. Ռեցկերն առանձնացնում է բառային փոխակերպումներին հետևյալ տեսակները՝ ա) *իմաստի տարբերակում/տարբերացում* (դիֆերենցիացիա), բ) *իմաստի կոնկրետացում*, գ) *իմաստի ընդհանրացում*, դ) *իմաստային զարգացում*, ե) *հականշային թարգմանություն*, զ) *ամբողջական փոխակերպում*, է) *փոխհատուցում*⁶⁴:

Տարբերակումը/տարբերացումը (дифференциация) և **կոնկրետացումը** սովորաբար միասին են հանդես գալիս: Տարբերակում առանց կոնկրետացման հնարավոր է, երբ ԲԼ կամ ԵԼ ընդհանուր, լայն իմաստով բառը պետք է թարգմանել նույնպիսի ընդհանուր, լայն իմաստ ունեցող բառով: Օրինակ՝ *drink*-ը նշանակում է առհասարակ ըմպելիք, իսկելու համար նախատեսված հեղուկ մի բան՝ սուրճ, թեյ, հյութ, կաթ, նաև ալկոհոլային խմիչքներ (մյուս իմաստներին այստեղ չենք անդրադառնա): Կախված համատեքստից՝ հայերենում սրան կարող է համապատասխանել կա՛մ նույնպիսի ընդհանուր, չտարբերակված իմաստ ունեցող *ըմպելիք* բառը, որը նշանակում է ոչ ալկոհոլային ըմպելիք, կա՛մ *խմիչք*-ը՝ սովորաբար ալկոհոլային ըմպելիք:

Սակայն հաշվի առնենք, որ անգամ բոլորիս ծանոթ *սուրճ* – *кофе* – *coffee* բառարանային բացարձակ համարժեքներն իրականում տարբերվում են տարբեր մշակույթներում. տարբեր են պատրաստման եղանակը, օգտագործվող սուրճի տեսակները: Եվ թարգմանության մեջ, հատկապես բանավոր խոսքում, կարող է կոնկրետացման կարիք լինել: Եվրոպացիների մեծ մասը սուրճ պատվիրելիս նկատի ունի էսպրեսո, արևելյան երկրներում սուրճը սովորաբար այսպես կոչված արևելյան կամ «թուրքա-

⁶⁴ Տե՛ս **Рецкер Я.**, նշվ. աշխ., էջ 46-69:

կան»՝ *turkish coffee* է: Հույները սովորաբար *turkish coffee*-ն անվանում են հունական (*ελληνικός καφές*), իսկ Հայաստանում մենք այն առօրյայում կոչում ենք *սև սուրճ*:

Կոնկրետացումն առանց տարբերացման անհնարին է: Նույն *drink* սեռանիշ բառը կարող է թարգմանվել տեսականիշ բառերով՝ կախված համատեքստից՝ վիսկի, օղի, կոնյակ, ջին նն: Կամ՝ անգլերեն *cousin*-ը (*first cousin*) հորաքրոջ/մորաքրոջ կամ հորեղբոր/մորեղբոր զավակներն են, ավելի ընդհանուր իմաստով՝ երկրորդ, երրորդ պորտի ազգականների երեխաները: Եվ հայերեն թարգմանելիս կարող է տեղի ունենալ կոնկրետացում՝ *հորաքրոջ տղա/աղջիկ, մորաքրոջ տղա/աղջիկ*:

Ընդհանրացումը կոնկրետացման հակառակ երևույթն է: Երբեմն ԲԼ-ի՝ կոնկրետ իմաստով բառը կարող է համապատասխանություն չունենալ ԹԼ-ում, և թարգմանիչն այլընտրանք չունի ընդհանրացում անելուց բացի: Օրինակ՝ հայերենը կոշիկի տարբեր տեսակների համար՝ *ботфарты, дерби, балетки, берцы, боти-льоны, слиппоны, гриндерсы, угги, лоферы*, չունի համապատասխան տեսականիշ բառեր, մեր ունեցած *կոշիկ, երկարաձիտ կոշիկ* կամ *կիսաճտքավոր կոշիկ* բառերը սեռանիշ են: Երբ տվյալ համատեքստում էական չէ կոնկրետ նշանակությունը, կամ այն հասկացվում է համատեքստից, թարգմանիչը տեսականիշ բառը կարող է փոխարինել սեռանիշ բառով: Սակայն համատեքստը կարող է պարտադրել թարգմանել հենց տեսականիշ բառով. այդ դեպքում նկարագրական թարգմանության անհրաժեշտություն կարող է ծագել, որը սովորաբար ուղեկցվում է գրադարձում/տառադարձումով:

Իմաստի զարգացումը թարգմանական հնար է, որն ըստ Ռեցկերի կարող է ունենալ հետևյալ տարբերակները՝ 1) *պրոցեսը փոխարինվում է հետևանքով*, 2) *պրոցեսը փոխարինվում է պատճառով*, 3) *պատճառը փոխարինվում է պրոցեսով*, 4) *պատճառը*

փոխարինվում է հետևանքով, 5) հետևանքը փոխարինվում է պատճառով, 6) հետևանքը փոխարինվում է պրոդեսով: Օրինակ.

«Он еще не вернулся с работы» (բառացի՝ «Նա դեռ աշխատանքից չի վերադարձել») – «Նա դեռ տուն չի հասել»:

«Еле на ногах стою» (բառացի՝ «Հազիվ եմ ոտքի վրա մնում») – «Ահավոր/չափազանց հոգնած եմ»:

«Он слишком быстро ходит» (բառացի՝ «Նա շատ արագ է քայլում») – «Նրա հետևից չեմ կարողանում հասնել»:

«- Ты где? - Уже вышла» (բառացի՝ «- Ո՞ւր ես:- Արդեն դուրս եմ եկել») – «- Ո՞ւր ես:- Շուտով կհասնեմ»:

«- Извини, я опаздываю» (բառացի՝ «Ուշանում եմ») – «Կնե՜րես, շտապում եմ»:

Հականշային թարգմանությունը բավականին հաճախ հանդիպող փոխակերպում է: Այս դեպքում ոչ միայն բնագրի բառը փոխարինվում է հականիշով, այլև կարող է փոխակերպվել նախադասության կառույցը՝ դրական → ժխտական կամ հակառակը: Օրինակ.

“Hi, Mary! I’m not sure if you remember me” (բառացի՝ «Բարև, Մերի: Վստահ չեմ, թե ինձ հիշում եք») – «Բարև, Մերի: Երևի ինձ մոռացել եք/մոռացած կլինեք»:

“Are you coming?” – «-Գալի՞ս ես, թե՞ մնում ես»: Կամ ժխտականով՝ «- Չես գալի՞ս»:

Կամ՝ «Она почти не изменилась за эти годы» (բառացի՝ «Նա գրեթե չի փոխվել այս տարիների ընթացքում») – «Նա գրեթե նույնն է մնացել»:

«Не хочу, чтобы ты уезжала» (բառացի՝ «Չեմ ուզում, որ գնաս/մեկնես») – «Ուզում եմ, (որ) մնաս»:

Ամբողջական փոխակերպում. երբ փոխակերպման ենթարկվում են ոչ թե նախադասության մեջ առանձին միավորներ, այլ ամբողջ բառակապակցություններ, երբեմն նաև նախադասու-

թյունն ամբողջությամբ:

Օրինակ՝ հայերենում հեքիաթները սովորաբար սկսվում են «լինում է-չի լինում», «կար-չկար», «ժուկով-ժամանակով» բանաձևերով, ռուսերենում՝ «жили-были», «в одном царстве», «в одном государстве», անգլերենում՝ “once upon a time”, բուլղարարենում՝ «имало едно време» ևն: Եվ մի լեզվից մյուսը թարգմանության ժամանակ այս բանաձևերը ենթակա են ամբողջական փոխակերպումների՝ պայմանավորված արտալեզվական գործոններով, տվյալ դեպքում՝ թարգմանության լեզվի ավանդույթով:

Թարգմանության մեջ ամբողջական փոխակերպման են ենթարկվում դարձվածքները, հատկապես սերտաճումները.

наломать дров (բառացի՝ (շատ) փայտ ջարդել) – համատեքստից կախված՝ կարող է թարգմանվել *համը հանել; մի բանի հերն անիծել;*

աչքը մեկի համար ուռչել/ուռել – համատեքստից կախված՝ *очень надо; больно надо, подумаешь* ևն:

Ամբողջական փոխակերպումը հաճախ է հանդիպում նաև պոեզիայի թարգմանության մեջ, երբ պատկերը կարող է փոխարինվել այլ պատկերով, քանի որ թարգմանիչը ստիպված է հաշվի առնել տաղաչափական խնդիրները (ռիթմ, հանգավորում), իր լեզվում ձևավորված ավանդույթը, խորհրդանիշների տարբերությունները և բազմաթիվ այլ արտալեզվական գործոններ: Օրինակ.

«Катится, в солнце измокнув/Улица предо мной». (С. Есенин)
(բառացի՝ «Գլորվում է՝ արևի մեջ թրջվելով/թաթախվելով/Փողոցն իմ դիմաց»)

«Արևը հուր է անձրևում/Հետվում ձգվող ճանապարհին»:
(թարգմ.՝ Հր. Թամրազյան)

Փոխհաստոցումը փոխակերպման ամենահաճախ գործածվող տեսակներից է, երբ թարգմանության մեջ բնագրի այս կամ

այն բաց թողած տեղեկությո՞ւր լրացվում է այլ տեղում, այլ միջոցներով:

Ասենք՝ բնագիր տեքստում խոսակցական, բարբառային, ժարգոնային որևէ բառ, բառակապակցություն, դարձվածք կարող է չունենալ համապատասխան ոճական համարժեք ԹԼ-ում և փոխարինվել չեզոք արտահայտությամբ, սակայն բացթողումը հնարավոր է լրացնել այլ տեղում այլ միջոցներով: Օրինակ՝ բնագրի խոսակցական կամ ցածր ոճը փոխանցելու համար հայերենում կարելի է գործածել «ա» օժ. բայը՝ գրական «է»-ի փոխարեն, խոսակցականին հատուկ հնչյունափոխությունը (*էս/էդ/էն*-ը՝ *այս/այդ/այն*-ի փոխարեն, *թոնել*, *փախնել*՝ գրական *թոչել*, *փախչել*-ի փոխարեն, *ասեց*՝ *ասաց*-ի փոխարեն), հարադիր բայեր և կրկնավորներ (որ հատուկ են խոսակցականին, բարբառներին)՝ *մարդ-մուրդ*, *բան-ման*, *շուտ-շուտ*, *ծափ տալ*, *ման գալ*: Կարևորը ոչ թե կոնկրետ խոսակցական, ժարգոնային կամ ցածր ոճի բառի, արտահայտության թարգմանությունն է համապատասխան համարժեքով, այլ բնագրի ոճը թարգմանության մեջ պահպանելը:

Կամ եթե, օրինակ, տեքստում գործածված են բարձր ոճի բառեր, հնաբանություններ (*архаизмы*, *archaism*), որոնք խոսքը հանդիսավոր դարձնելու միջոց են տվյալ տեքստում, իսկ թարգմանության լեզվում կոնկրետ բառերը չունեն համապատասխան ոճական համարժեք, թարգմանիչը կարող է կիրառել փոխհատուցման մեթոդը՝ օգտագործելով հայերենի հնարավորությունները՝ բարձր ոճի գրական-գրքային բառեր, գրաբարյան քերականական ձևեր, շրջուն շարադասություն են:

Առաջադրանք 1. Թարգմանել, բացատրել կատարած փոխակերպումները:

ա) The Taj Mahal is a famous mausoleum next to the river Yamuna in the Indian city of Agra. A mausoleum is a building where

people bury the dead. The name Taj Mahal means ‘the crown of palaces’.

p) The most famous part of the Taj Mahal is the large white dome in the centre. It is 35 metres high and is surrounded by four smaller domes. The rooms inside the building are decorated with beautiful archways and precious stones in the walls. The buildings are surrounded by gardens with pathways, pools, fountains and green gardens.

q) The construction of the Taj Mahal began in 1632 and finished in 1653. It was built with materials from all over India and Asia, but the main material is white marble. Historians believe that the materials were transported by over 1,000 elephants for the construction.

r) The emperor Shah Jahan built the Taj Mahal as a burial place for his wife, Mumtaz Mahal. According to legend, he wanted to build another Taj Mahal in black on the other side of the river, but this never happened.

Առաջադրանք 2. Համեմատել բնագիրն ու թարգմանությունը, վերլուծել բառային փոխակերպումները:

Последний тост

Я пью за разоренный дом,
За злую жизнь мою,
За одиночество вдвоем,
И за тебя я пью,—
За ложь меня предавших губ,
За мертвый холод глаз,
За то, что мир жесток и груб,
За то, что Бог не спас. (Марина Цветаева)

Վերջին կենացը

Ես խմում եմ քանդված իմ տան
Ու ձախողակ բախտի համար,
Մեր համատեղ այս մենության
Եվ, իհարկե, հենց քեզ համար:
Ինձ դավաճան շրթունքների
Ու աչքերի համար մռայլ,
Նրա համար, որ ցավերիս
Տերը հարմար ճար չգտավ:

(Թարգմ.՝ Լևոն Բլբուլյան)

Վերջին կենաց

Ես խմում եմ կենացն ավեր,
անտեր այս տան,
Ես կենացն եմ խմում չար ու
անտուն կյանքիս,
Երկուսների այս կենտ, անգույգ
այս մենության
Եվ կենացն եմ խմում քո՝ անա-
սել, անգիր:
Ձեր կենա՛ցը ստեր՝ դավաճա-
նած շուրթի,
Ձեր կենացը՝ մեռա՛ծ, աչ-
քադրախտ պաղե՛ր,
Ես խմում եմ կենացն այս բիրտ
հողագնդի,
Եվ չփրկած Փրկչի, Նրա, ով
չհապաղեց...

(Թարգմ.՝ Արա Ալոյան)

ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

Այլ երկրի, ժողովրդի մշակույթը հասկանալու համար միայն վերբալ լեզուն իմանալը քիչ է, պակաս կարևոր չեն նաև ժեստերը: Օրինակ՝ եթե մատը քունքին պտտելը հայկական, ռուսական մշակույթում վիրավորանք է (նշանակում է «անխելք, գիժ, ցնդած»), ապա Արգենտինայում այդ ժեստով կանչում են հեռախոսի մոտ, Պերուում դա նշանակում է «մտավոր աշխատանքով զբաղվող մարդ»: Խնդիրներ կարող են ծագել թե՛ բանավոր հաղորդակցման ընթացքում, թե՛ ֆիլմերի, մուլտֆիլմների, ներկայացումների ևն թարգմանության ժամանակ:



*Նկ. 18. Այս ժեստը Իտալիայում նշանակում է «ի՛նչ եք ուզում»,
Կոնգոյում՝ «փոքր», Թուրքիայում՝ «զեղեցիկ», Եգիպտոսում՝ «մի րոպե
սպասեք»:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бархударов Л. Язык и перевод. М., 1975.
2. Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ: Նազարյան Ա., Բաղդասարյան Հ., Եր., 2000:

**ԹԵՄԱ 16. ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ
ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ-1**

Քերականական փոխակերպումների մեջ Ռեցկերն առանձնացնում է՝ ա) *նախադասության մեջ բառերի շարադասության փոփոխությունը*, բ) *խոսքիմասային փոխարինումներն ու նախադասության անդամների փոխարինումները*, գ) *նախադասության կառուցվածքի մասնակի կամ ամբողջական փոփոխությունները*⁶⁵:

Շարադասության փոփոխությունը կարող է ունենալ լեզվական և արտալեզվական պատճառներ: Օրինակ՝ արևելահայերենի սովորական շարադասությունը հիմնականում SVO է (ենթակա-ստորոգյալ-խնդիր), կարող է լինել նաև SOV, անգլերենինը՝ SVO, արաբերենինը՝ VSO, ինչով պայմանավորված էլ անխուսափելի են նախադասության անդամների տեղափոխությունները: Կամ՝ մենք ունենք որոշյալ-որոշիչ սովորական շարադասություն՝ *կապույտ աչքեր*, իսկ իսպաներենին բնորոշ է որոշյալ-որոշիչ շարադասությունը՝ *los ojos azules* (բառացի՝ *աչքեր կապույտ*): Նույն կերպ հայերենին բնորոշ է հատկացուցիչ-հատկացյալ շարադասությունը՝ *երեխայի լաց*, իսկ ռուսերենում հատկացուցիչը (*несогласованное определение*) սովորաբար դրվում է լրացյալից հետո՝ *плач ребенка*: Նշենք, որ նկատի չունենք շրջուն շարադասությունը, որ նույնպես բնորոշ է տարբեր լեզուների. այն կարող է ոճական զանազան նպատակներով կիրառվել:

Ձևաբանական մակարդակում ամենից հաճախ հանդիպող փոխակերպումներից են.

ա) խոսքիմասային փոխակերպումները՝ գոյականաձերանուն, գոյականաձածական, գոյականաձբայ/դերբայ, մակբայաձածա-

⁶⁵ Տե՛ս **Рецкер Я.**, նշվ. աշխ., էջ 81-130:

կան, մակրայշդերանուն, ածականշդերանուն են.

рыбий (ած.) *жир* – ձկան (գոյ.) յուղ

быстрая езда (գոյ.) – *աշագ վարել (ը)/ քշել(ը)* (անորոշ դերբ.)

игра (գոյ.) *на пианино* – դաշնամուր *նվագել(ը)* (անորոշ դերբ.)

любимая (ած.) *девушка* – *սիրած* (հրկտ. դերբ.) աղջիկ

дать поесть (բայ) – *նուտելու բան* տալ, *հաց* տալ (=կերակրել) (գոյ.)

English teacher (ած.) – *անգլերենի* (գոյ.) ուսուցիչ

English literature (ած.) – անգլիական (ած.) գրականություն

I'm a terrible dancer (գոյ.) – ես շատ/ահավոր վատ եմ պարում (բայ) են:

Բավականին հաճախ են հանդիպում **դիմավոր բայշդերբայ** փոխակերպումները, որոնք պատճառ են դառնում նաև այլ փոխակերպումների. ստորադասական նախադասությունը կարող է փոխակերպվել պարզի կամ հակառակը.

Парень, который жил на втором этаже, уехал на пару дней. – Երկրորդ հարկում ապրող տղան/երիտասարդը մի քանի օրով մեկնել է:

Կամ՝ *он/he* և *она/she* դերանունները երբեմն հնարավոր չէ հայերեն թարգմանել *նա* դերանունով, քանի որ հայերենը չունի սեռի քեր. կարգ ո՛չ գոյականի, ո՛չ դերանվան համար, իսկ համատեքստը պահանջում է սեռային տարբերակում մտցնել: Օրինակ՝ «*Он ее искал, но она переехала в другой город*» նախադասությունը անհեթեթ կլինի թարգմանել «*Նա նրան փնտրում էր, բայց նա տեղափոխվել էր ուրիշ քաղաք*»: Սեռանիշ դերանունները կարող են թարգմանվել այլ բառային միջոցներով, օրինակ՝ հատուկ անուններով կամ համապատասխան գոյականներով (աղջիկ/տղա, կին/տղամարդ, օրիորդ/տիկին/պարոն, -ուհի ածանցի միջոցով):

ՀԻՇԵՔ

Քանի որ հայերենում դիմավոր քայից երևում է գործողություն կատարողի դեմքն ու թիվը, հաճախ կարիք չի լինում դերանունները թարգմանելու: Այնտեղ, որտեղ անգլերենում կամ ռուսերենում դերանունը պարտադիր է, հայերեն թարգմանության մեջ հնարավոր է այն զեղչել:

Я вчера пришла домой поздно. – Երեկ ուշ տուն եկա/երեկ ուշ եմ տուն եկել:

Megan said that she was tired yesterday. – Մեգանն ասաց, որ երեկ հոգնած էր:

բ) Քերականական կարգերի փոխակերպումներ (թվի, առման, հոլովի, եղանակի, ժամանակի, քայի սեռի են):

Գոյականի թվի կարգի փոխակերպումներ. եզակի՝հոգնակի, անեզական՝հոգնակի կամ հոգնակի, անհոգնական՝հոգնակի կամ հոգնակի են:

Այն, ինչ անգլերենում, ռուսերենում արտահայտվում է հոգնակիով, հայերենում կարող է արտահայտվել եզակիով կամ հակառակը.

Physics, Maths (անեզական/Pluralia tantum) – *ֆիզիկա, մաթեմատիկա* (անհոգնական)

money (միմիայն եզակիով, անհաշվելի) – *փող* (եզ. թ.) և *փողեր* (հոգն. թ.)

деньги (սվրբ. հոգն.) – *փող* (եզ. թ.) և *փողեր* (հոգն. թ.)

ножницы (անեզական) – *մկրատ* (եզ. թ.) և *մկրատներ* (հոգն. թ.):

Օրինակ՝ *Вчера он сам брюки* (անեզական) *погладил. – Երեկ ինքն է (իր) շալվարը* (եզ. թ.) *արդուկել:*

В яблоках (հոգն. թ.) *много витаминов. – Խնձորի* (եզ. թ.) *մեջ շատ վիտամիններ կան:*

Я не люблю собак. (հոգն. թ.) – *Ես չուն* (եզ. թ.) *չեմ սիրում:*

Carrots (հոգն. թ.) *are rich in vitamin A.* – *Փազարը* (եզ. թ.) *հա-
րուստ է A վիտամինով* (կամ՝ *Փազարի մեջ շատ A վիտամին կա*):

Հոդեր (article): Ինչպես գիտենք, հայերենն ունի անորոշ (զրո
ձև) և որոշյալ (ը/ն) հոդ, ինչպես և անգլերենը (a/an, the, zero
article), սակայն միշտ չէ, որ դրանք համընկնում են: Օրինակ՝
հայերենում անձնանունները կարող են որոշյալ հոդ ստանալ,
իսկ անգլերենում՝ ոչ (չհաշված այն դեպքը, երբ կարիք կա կոնկ-
րետացնելու, թե հատկապես որ մարդու մասին է խոսքը (*The mr.
Brown from Australia*)՝ *John is coming.* – *Ջոնը գալիս է:*

Ի տարբերություն հայերենի՝ անգլերենում տեղանունները,
աշխարհագրական անունները սովորաբար որոշյալ հոդ չեն
ստանում⁶⁶.

Երևանը գեղեցիկ քաղաք է: – *Yerevan is a beautiful city.*

Իսկ, օրինակ, բուլղարերենը, իսպաներենը ունեն ոչ միայն
որոշյալ և անորոշ հոդ, դրանք տարբեր են ըստ սեռի և թվի⁶⁷: Ռու-
սերենը, ի տարբերություն հայերենի, անգլերենի, ռոմանական լե-
զուների, չունի հոդի քերականական կարգ: Որոշյալություն/անո-
րոշությունը ռուսերենում արտահայտվում է շարադասությամբ,
բառային միջոցներով (որոշյալ, անորոշ կամ ցուցական դերա-
նուններ, թվականներ, ածականներ ևն), հնչերանգով:

Эта книга (որոշյալ) – (*այս*) *գիրքը, кака-то книга* (անորոշ) –
(ինչ-որ) *գիրք:*

Книга лежала на столе (որոշյալ) – *Գիրքը սեղանին էր:*

⁶⁶ Անգլերենում որոշյալ հոդ կարող են ստանալ միայն անեզական տեղանուն-
ները (*The Netherlands*), միությունները, դաշնությունները (*The UK, The USA, The
Czech Republic*), ծովերի, օվկիանոսների, լճերի, գետերի անունները (*the Amazon,
the Atlantic ocean*) ևն:

⁶⁷ Իսպ. – *անորոշի համար՝ un* (եզ., ար.), *una* (եզ., իգ.), *unos* (հոգն., ար.), *unas*
(հոգն., իգ.), որոշյալի համար՝ *el* (եզ., ար.), *la* (եզ., իգ.), *los* (հոգն., ար. սեռ), *las*
(հոգն., իգ. սեռ), նաև չեզոք որոշյալ՝ *lo*:

*На столе лежала **книга** (անորոշ) – Սեղանին **գիրք** կար/գիրք էր դրված:*

Հայերենի **ստացական հոդերը (ս, դ)** այլ լեզուներով, օրինակ՝ ռուսերեն, անգլերեն, սովորաբար թարգմանվում են համապատասխան դերանուններով, կարող են թարգմանվել նաև շարադասության միջոցով, ինչպես նաև ստացականությունը կարող է պարզ դառնալ համատեքստից՝ **գիրքս – моя книга/my book, աչքերդ – твои глаза/your eyes:**

Հոլովը (падеж/Grammatical case), ինչպես գիտենք, բառի, հիմնականում գոյականի ու դերանվան շարահյուսական կախվածությունն արտահայտող միջոցներից է: Նույնպիսի միջոց են նաև **նախդիրները (предлог/Prepositions)**, հայերենում՝ **կապերը**: Ինչպես նույն, այնպես էլ տարբեր լեզուներում նույն քերականական իմաստը կարող է արտահայտվել տարբեր հոլովներով, նախդիրներով կամ կապային կառույցներով, իսկ հոլովի քերականական կարգ չունեցող լեզուներում հոլովների քերականական իմաստները արտահայտվում են նախդիրներով, շարադասության միջոցով:

выпить воды (սեռ. հոլ.) – ջուր խմել (ուղղականաձև հայցական), **волком смотреть (գործ. հոլ.) – գայլի պես/նման** նայել⁶⁸ (կապային կառույց), **на улице – փողոցում** (ներգ. հոլ.), իսկ **на столе-սեղանին** (տր. հոլ.) կամ **սեղանի վրա, բարձրանալ երկրորդ հարկ** (հայց. հոլ.) – **подняться на второй этаж** (նախդիրով), **գնալ քաղաք** (հայց.) – **поехать в город** (նախդիր), **бояться признаться – վախենալ խոստովանելուց** (բցո.):

Նույն նախդիրը կարող է թարգմանվել տարբեր հոլովներով կամ հակառակը՝ տարբեր նախդիրներ կարող են նույն հոլովով թարգմանվել: Օրինակ՝

⁶⁸ Դարձվածքը նշանակում է «մոայլ/խոժոռ/թշնամաբար նայել», համատեքստում կարող է ունենալ հարաբերական համարժեքներ:

իջ Երեւան – Երևանից, от тебя не ожидал – քեզնից չէի սպասում, с неба – երկնքից նն; ехать к маме – գնալ/մեկնել մոր մոտ/մոր տուն, подойти к ребенку – մոտենալ երեխային, к утру дождь перестал – առավոտվա կողմ անձրևը կտրվեց; vote for sb./sth. – քվեարկել հանուն մեկի/մի բանի; քվեարկել մեկի/մի բանի оգտին; flowers for sb. – խաղիկներ մեկի համար; to leave for London – մեկնել Լոնդոն; for two days – երկու օրվա ընթացքում նն: Կամ՝ իսպաներենի “de” նախդիրը հայերեն կարող է թարգմանվել սեռական հոլովով՝ la universidad de Erevan – Երևանի համալսարան, բացառականով՝ yo soy de Erevan – ես Երևանից եմ:

Առաջադրանք 1. Թարգմանել ռուսերեն ն/կամ անգլերեն: Բացատրել կատարած փոխակերպումները:

- ա) Երեխաներս դրսում խաղում են:
Դրսում երեխաներ են խաղում:
- բ) Մոտս փող չկա:
Աննան փողը չի տվել:
- գ) Կինը լուռ նստած գիրք էր կարդում:
Դարակում գիրք կար:
- դ) Ծաղկամանը սեղանին էր:
Սեղանին ծաղկաման կար:
- ե) Գլուխս ցավում է:
- Ձեռքդ տուր, կընկնես:
- Սա ո՞ւմ գրիչն է: - Իմն է:

Առաջադրանք 2. Թարգմանել հայերեն: Բացատրել կատարած փոխակերպումները:

- ա) The news is at 6.30 p.m.

Linguistics is the study of language.

Billiards is played all over the world.

Her jeans are black.

The United States is a federal republic, composed of 50 states.

բ) Соединенные Штаты Америки имеют федеративную форму устройства и делятся на 50 штатов.

У меня очки вспотели.

В доме нет ни собак, ни кошек.

Шахматы очень интересная игра.

Часы остановились.

Առաջադրանք 3. Գտնել ձևաբանական փոխակերպումները, բացատրել:

ա) В больничном дворе стоит небольшой флигель, окруженный целым лесом репейника, крапивы и дикой конопли. Крыша на нем ржавая, труба наполовину обвалилась, ступеньки у крыльца сгнили и поросли травой, а от штукатурки остались одни только следы.

Հիվանդանոցի բակում կա մի փոքրիկ կողաշենք, որ շրջապատված է կռատուկի, եղինջի ու վայրի կանեփի մի ամբողջ անտառով: Նրա տանիքի թիթեղյա ծածկը ժանգոտել է, ծխնելույզը կիսով չափ փլվել, նախամուտքի աստիճանները փտել են ու ծածկվել կանաչած խոտով, իսկ պատերի ծեփի միմիայն հետքերն են մնացել:

բ) Передним фасадом обращен он к больнице, задним -глядит в поле, от которого отделяет его серый больничный забор с гвоздями. Эти гвозди, обращенные остриями вверх, и забор, и самый флигель имеют тот особый унылый, окаянный вид, какой у нас бывает только у больничных и тюремных построек.

Նրա ճակատն ուղղված է դեպի հիվանդանոցը, իսկ հետևի երեսը նայում է դաշտին, որից նրան բաժանում է հիվանդանոցի գորշ ցանկապատը՝ կատարին մեխեր: Սուր ծայրերը դեպի վեր ուղղված այդ մեխերը և ցանկապատը, և հենց կողաշենքն ունեն այն հատուկ մռայլ, դժոխային տեսքը, որպիսին մեզ մոտ ունենում են միայն հիվանդանոցային և բանտային շենքերը:

զ) Если вы не боитесь обжечься о крапиву, то пойдёмте по узкой тропинке, ведущей к флигелю, и посмотрим, что делается внутри. Отворив первую дверь, мы входим в сени. Здесь у стен и около печки навалены целые горы больничного хлама.

Եթե դուք եղինջի դադելուց չեք վախենում, ապա գնանք կողաշենք տանող նեղ արահետով և տեսնենք՝ ինչ է կատարվում նրա ներսում: Առաջին դուռը բաց անելով՝ մենք մտնում ենք նախասենյակ: Այդտեղ պատերի տակ և վառարանի մոտ իրար վրա թափված են հիվանդանոցային հնոտիի ամբողջ սարեր:

դ) Матрацы, старые изодранные халаты, панталоны, рубахи с синими полосками, никуда негодная, истасканная обувь, -вся эта рвань свалена в кучи, перемята, спуталась, гниет и издаёт душливый запах.

Ներքնակներ, պատառոտված հին խալաթներ, վարտիքներ, կապտաշերտ շապիկներ, բոլորովին անպետք, իսպառ մաշված ոտնամաններ, - այդ ամբողջ հնոտին դիզված է կոյտերով, տրորված է, խճճված, նեխում է և հեղձուցիչ հոտ արձակում:

(Антон Чехов. Палата N 6, թարգմ.՝ Ա. Խոնդկարյան)

ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

✓ Էստոններենն ունի 14 հոլով, ֆիններենը՝ 15, իսկ հունգարերենը՝ 35 հոլով: Գերմաներենն ունի ընդամենը 4 հոլով: Կան լեզուներ, որոնք չունեն հոլովի քերականական կարգ, օրինակ՝ անգլերենը, բուլղարերենը:

✓ Որոշ լեզուներ չունեն անորոշ դերբայ (ինֆինիտիվ), օրինակ՝ վրացերենը, բուլղարերենը, արաբերենը: Բուլղարերենում իբրև բայի ուղիղ ձև հանդես է գալիս անկատար ներկա ժամանակի եզակի 1-ին դեմքը՝ *искам* – ուզում եմ, *живея* – ապրում եմ: Համիլետի մենախոսությունը՝ “*To be or not to be*”, բուլղարարեն թարգմանված է եզակի երկրորդ դեմքով՝ «*Да бъдеш или да не бъдеш?*»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бархударов Л. Язык и перевод. М., 1975.
2. Рецкер Я. Теория перевода и переводческая практика. М., 2007.

ԹԵՄԱ 17. ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ- 2

Թարգմանության ժամանակ շատ հաճախ են փոխակերպման ենթարկվում *բայի եղանակաժամանակային ձևերը*⁶⁹: Այն թարգմանիչը, որը չի օգտագործում իր լեզվի ընձեռած հնարավորությունները, իր լեզվի հարստությունը, չի կարող լավ թարգմանիչ լինել: Իսկ հայերենը հարուստ է ժամանակաձևերով, նաև բաղադրյալ երկրորդական ժամանակաձևերով:

Ռուսերենի անորոշ դերբայից հնարավոր է որոշել բայի կերպը (вид глагола)⁷⁰, իսկ հայերենի անորոշ դերբայը չունի տարբերակում *делать – сделать, стучать – стукнуть, затыкать – заткнуть* ձևերի համար, որոնք կատարված կամ անկատար կերպ ցույց տալուց բացի՝ ցույց են տալիս նաև միակատարություն կամ բազմակատարություն: Այս ամենը հայերենում արտահայտվում է ժամանակային ձևերով, նաև բառային միջոցներով:

Я делал уроки (անկ. կերպ) – *Ես դառ էի անում* (անկ. անցյալ):

Я сделал уроки (կատ. կերպ.) – *Ես (արդեն) արել եմ դասերս* (վղկ. ներկա) կամ *Ես (հենց նոր) դասերս արեցի* (անց. կատ.):

Он стучнул по столу (կատ. կերպ, միակտ.) – *Նա ձեռքը խփեց սեղանին* (անց. կատ.):

Он стучал в дверь (անկ. կերպ., բազմակտ.) – *Նա թափում էր դուռը* (անկ. անց.):

Ռուսերեն բայի միակատարություն/բազմակատարությունը հայերենում կարող է թարգմանվել բազմապատկական բայերի

⁶⁹ Ռուսերենի ժամանակաձևերի մասին տե՛ս https://school-assistant.ru/?predmet=russian&theme=vremia_glagola, անգլերենի եղանակների մասին տե՛ս <https://www.lexico.com/grammar/moods>, ժամանակաձևերի մասին տե՛ս <https://www.lexico.com/grammar/verb-tenses>:

⁷⁰ Տե՛ս <http://www.fio.ru/pravila/grammatika/kategoriya-vida-glagola/>:

միջոցով, արմատի կրկնությամբ, բառային միջոցներով.

бежал/-а – վազում էր; бегал/-а (туда-сюда) – վազվզում էր; прыгнул/-а – ցատկեց; прыгал/-а – ցատկոտում էր; шел/шла – քայլում էր, գնում էր; ходил/-а (взад-перед) – գնում-գալիս էր:

Անգլերենի *Past Simple* (անորոշ անցյալ) և *Past Continuous* (շարունակական անցյալ) ժամանակաձևերը հայերեն կարող են թարգմանվել անցյալ անկատարով, անցյալ կատարյալով, վաղակատարով, երբեմն՝ անկատար ներկայով.

He *lived* in London in 2001. – 2001-ին նա *ապրել է* Լոնդոնում:

Peter *said* he was sick. – Պիտերն *ասաց*, որ հիվանդ է:

I saw him in Moscow. – Ես տեսել եմ/տեսա նրան Մոսկվայում:

Present Perfect-ը կարող է թարգմանվել վաղակատարով, անցյալ կատարյալով, երբեմն՝ ներկայով.

He *has worked* there for three months now. – Արդեն երեք ամիս է՝ նա աշխատում է այնտեղ:

She *has lived* in Liverpool all her life. – Նա ամբողջ կյանքում ապրել է Լիվերպուլում:

I'm tired out. I've been working all day. – Հոգնած եմ, ամբողջ օրն աշխատել եմ/աշխատում էի:

Կամ, օրինակ, հայերենում պայմանի պարագա երկրորդական նախադասությունը կարող է ձևավորվել ըղձական ապառնիով, իսկ գլխավոր նախադասության մեջ կա՛մ հաստատական (պայմանական) ապառնի է, կա՛մ հրամայական եղանակ՝ «*Եթե գաս, կգանգես/գանգի՛ր*»: Ռուսերենում պայմանի պարագա երկրորդականը սահմանական ապառնիով է, *գլխավորը՝ հրամայականով՝ «Если приедешь, позвони!»*, իսկ անգլերենում՝ անորոշ ներկայով՝ “If you come, call me”:

**Առաջադրանք 1. Թարգմանել հայերեն բոլոր հնարավոր ե-
ղանակաժամանակային ձևերով:**

ա) Вечером приеду, поговорим.

Когда доедешь, позвони.

Они будут ждать меня в 8 вечера.

Если уедешь до того как я вернусь, оставь ключи у соседки.

Когда устою, ни хочу никого видеть.

բ) If she is late, I will be angry.

It had been raining hard for several hours and the streets were very wet.

The train had just left when I arrived at the station.

He asked me not to be late.

She enjoys playing the piano.

Would you like to join us for dinner tonight?

You walk for two hundred meters, then you turn left (instruction).

**Առաջադրանք 2. Թարգմանել տեքստը՝ ուշադրություն
դարձնելով ժամանակաձևերին:**

Gobekli Tepe

Located in modern Turkey, Göbekli Tepe is one of the most important archaeological sites in the world. The discovery of this stunning 10,000 year old site in the 1990s CE sent shock waves through the archaeological world and beyond, with some researchers even claiming it was the site of the biblical Garden of Eden. The many examples of sculptures and megalithic architecture which make up what is perhaps the world's earliest temple at Göbekli Tepe predate pottery, metallurgy, the invention of writing, the wheel and the beginning of agriculture. The fact that hunter-gatherer peoples could


organize the construction of such a complex site as far back as the 10th or 11th millennium BC not only revolutionizes our understanding of hunter-gatherer culture but poses a serious challenge to the conventional view of the rise of civilization. A Description of the Göbekli Tepe Site

Göbekli Tepe (Turkish for the ‘hill of the navel’) is a 1000 foot diameter mound located at the highest point of a mountain ridge, around 9 miles northeast of the town of Şanlıurfa (Urfa) in southeastern Turkey. Since 1994 CE, excavations conducted by Klaus Schmidt of the Istanbul branch of the German Archaeological Institute, with the cooperation of the Şanlıurfa Museum, have been taking place at the site. Results to date have been astounding; especially bearing in mind the excavators estimate that their work has uncovered a mere 5% of the site.

Göbekli Tepe consists of four arrangements of monolithic pillars linked together by segments of coarsely built dry stone walls to form a series of circular or oval structures. There are two large pillars in the center of each complex which are encircled by slightly smaller stones facing inward. Archaeologists believe that these pillars could have once supported roofs. The structures vary in size between around 33 and 98 feet in diameter and have floors made of terrazzo (burnt lime).

ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

Հայաստան թուրքերենով գրականություն եղել է դեռ 14-րդ դարից, իսկ 1-ին տպագիր գրքերը լույս են տեսել 18-րդ դարի սկզբներին: Պատճառն այն էր, որ Թուրքիայում բնակվող շատ հայեր թրքախոս էին դարձել, սակայն գիտեին հայերեն տառերը: Հայաստան թուրքերենով տպագրվել են դասագրքեր, թերթեր, բանաստեղծություններ, գեղարվեստական գործեր, անգամ Աստվածաշունչ: Ամբողջական Աստվածաշունչն առաջին անգամ հայաստան թուրքերենով հրատարակվել է 1859 թ.:



Երկու էջ Կոստանդնուպոլսում լույս տեսած եռալեզու՝
անգլերեն-հայերեն-հայատառ թուրքերեն, բառարանից:

Գրականություն

1. Бархударов Л. Язык и перевод. М., 1975.
2. Рецкер Я. Теория перевода и переводческая практика. М., 2007.

ԹԵՄԱ 18. ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Փոխակերպումներն անխուսափելի են նաև շարահյուսական մակարդակում: Դրանց պատճառները կա կարող են լինել թե՛ լեզվական, թե՛ արտալեզվական: Ընդգծենք, որ բոլոր տեսակի փոխակերպումները՝ բառային, ձևաբանական, շարահյուսական մակարդակներում, սերտ կապված են, և որևէ մակարդակում փոխակերպումը կարող է նաև մյուս մակարդակներում փոխակերպումների պատճառ դառնալ:

Շարադասություն (порядок слов, word order)⁷¹: Բավականին հաճախ են հանդիպում նախադասության մեջ անդամների կամ բարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունների շարադասության փոփոխությունները: Պատճառները կարող են լինել թե՛ լեզվական, թե՛ արտալեզվական:

Օրինակ՝ հայերենում շարադասության փոփոխությունից կարող է փոխվել տրամաբանական շեշտը՝ *ես այսօր տուն եմ գնում* (շեշտվում է *տուն*-ը), *ես եմ այսօր տուն գնում* (շեշտվում է *ես*-ը), *ես այսօր եմ տուն գնում* (շեշտվում է *այսօր*-ը): Ինչպես գիտենք, հայերենում տրամաբանական շեշտն արտահայտվում է ոչ միայն հնչերանգով (իսկ գրավոր խոսքում՝ առոգանության նշաններով), այլև օժանդակ բայը տրամաբանական շեշտ կրող բառի կողքը դնելով: Ռուսերենը ևս բավականին ազատ շարադասություն ունի՝ *я люблю тебя – я тебя люблю – люблю тебя я – тебя я люблю*: Այնինչ անգլերենում սովորաբար հնարավոր չէ շարադասության նման փոփոխություն. անգլերենում դրական նախադասության մեջ կայուն SVO է՝ ենթակա-ստորոգյալ-խնդիր. նախադասության ենթական չի կարող հանդես գալ ստորոգյալից հետո,

⁷¹ Ռուսերենի համար տե՛ս <https://orfogrammka.ru/OGLO2/70091264.html>, անգլերենի համար՝ <https://linguapress.com/grammar/word-order.htm>:

կամ ստորոգյալով չի կարող սկսվել նախադասությունը (այստեղ նկատի չունենք ոճական այս կամ այն նպատակով կատարվող շարադասական փոփոխությունները):

Վատ թարգմանիչը հաշվի չի առնում սեփական լեզվի առանձնահատկությունները, հնարավորությունները, ճկունությունը՝ պահպանելով օտար լեզվի շարադասությունը, ինչը կարող է ազդել թարգմանության որակի վրա, դառնալ իմաստային, տրամաբանական, ոճական սխալների պատճառ:

Ներգործական կառույց ⇌ կրավորական կառույց (активная конструкция-пассивная конструкция, Active Voice-Passive Voice):

Կրավորական կառույցը հիմնականում հանդիպում է պաշտոնական ու գիտական ոճերում, քանի որ հենց դրանք են ամենաշատը օտար լեզուների կաղապարները փոխառել թարգմանական գրականության միջոցով⁷²: Հայերեն թարգմանելիս հարկ է հնարավորինս խուսափել կրավորական կառույցներից, քանի որ կրավորական կառույցը մեր լեզվին հատուկ չէ. այն սահմանափակ կիրառություն ունի, իսկ խոսակցական, կենդանի լեզվում քիչ է գործածվում:

I was surprised. (Pass. V.) – *Ես անսկնկալի եկա* (ներգ.):

The streets have been cleane. (Pass. V.) – հնարավոր է ն՝ *Փողոցները մաքրած էին*, ն՝ *Փողոցները մաքրել են/էին* (ներգ.):

Երբ հայտնի չէ կամ էական չէ գործողություն կատարողը, և անգլերենն օգտագործում է կրավորական կառույց, հայերենում հնարավոր է այն փոխարինել ներգործական անենթակա նախադասությամբ.

He was subpoenaed to testify. (Pass. V.) – Նրան կանչել են դա-

⁷² Ի դեպ, Ջորջ Օրուելը 1946-ին էսսեներից մեկում գրում է. “Never use the passive where you can use the active”՝ «Երբեք մի գործածեք կրավորական կառույցն այնտեղ, որտեղ կարող եք գործածել ներգործականը» (George Orwell. Politics and English Language. London, FE 1946):

տարան՝ վկայություն տալու (ներգ., անենթ. նխդ.):

He was asked (about sth.). (Pass. V.) – Նրան հարցրին (մի բանի մասին) (ներգ., անենթակա նխդ.):

She had been invited. (Pass. V.) – Նրան հրավիրել էին (ներգ., անենթակա նխդ.) են:

Դրական նախադասություն չ ժխտական նախադասություն:

Ինչպես որ մի լեզվում կարող ենք նույն միտքը ձևակերպել դրական ու ժխտական կառույցներով (հմմտ. *գալի՞ս ես – չե՞ս գալիս*), այնպես էլ մի լեզվից մյուսը թարգմանելիս է հնարավոր դրական նախադասությունը փոխակերպել ժխտականի կամ հակառակը:

Օրինակ՝ «*Я себя нехорошо чувствую*» նախադասությունը հնարավոր է թարգմանել ն՝ «*Ես ինձ լավ չեմ զգում*», ն՝ «*Ես ինձ վատ եմ զգում*»:

Կամ, օրինակ, արևելահայերենը, ռուսերենն ունեն կրկնակի ժխտում (*двойное отрицание, double negative*), իսկ անգլերենին դա հատուկ չէ (թեև երբեմն գործածվում է ոչ ստանդարտ լեզվում)⁷³: Եվ թարգմանելիս փոխակերպումներն անխուսափելի են:

«*I have nothing to say*» (բառացի՝ «*Ես ոչինչ ունեմ ասելու*») նախադասությունը հայերեն հնարավոր է թարգմանել միայն կրկնակի ժխտումով՝ «*Ես ոչինչ/ոչ մի բան չունեմ ասելու*» (կամ ուղղակի «*Ես ասելու բան չունեմ*»), *There was nobody* (բառացի՝ «*Այնտեղ ոչ ոք կար*») – «*Այնտեղ ոչ ոք/ոչ մեկը չկար*»:

Դերբայական դարձված (деепричастный и причастный оборот) չ ստորադասական նախադասություն: Այս փոխակերպումը ևս բավականին հաճախ է հանդիպում: Հայերեն թարգմանելիս հարկ է նկատի առնել, որ մեր լեզվին բնորոշ չեն հատկապես տրոհված դերբայական դարձվածով նախադասությունները. դրանք սովորաբար հանդիպում են գրավոր խոսքում՝ գիտական,

⁷³ Ի դեպ, կրկնակի ժխտումը հատուկ չէ նաև արևմտահայերենին (հմմտ. «*Ոչ ոք չուսավ՝ Սա տղին՝ Պատռենք կուրծքը տրտմազին*» (**Պետրոս Դուրյան**)):

պաշտոնական ոճերում: Հայերենում երբեմն նպատակահարմար է այս կառույցները փոխակերպել ստորադասական նախադասությունների, հատկապես երբ խոսքը գեղարվեստական գրականության մասին է.

հմմտ. *Перейдя улицу, я встретил друзей.* – Փողոցն անցնելով՝ հանդիպեցի ընկերներին vs *Երբ փողոցն անցա, հանդիպեցի ընկերներու:*

Полиция задержала ехавшего на высокой скорости пьяного водителя. – Ոստիկանությունը կալանավորել է մեծ արագությունամբ **սլացող** հարբած վարորդին կամ Ոստիկանությունը կալանավորել է հարբած վարորդին, **որը սլանում էր մեծ արագությամբ:**

Կամ՝ անգլերենի **Participle**-ը (**Present Participle** և **Past Participle**) կարող է թարգմանվել անկախ դերբայներով կամ երկրորդական նախադասությամբ.

Reading is fun. – **Կարդալը** ուրախ/հաճելի զբաղմունք է:

Standing in the queue, I realised I didn't have any money. – Հերթի մեջ **կանգնած՝** հանկարծ պարզեցի, որ ոչ մի կոպեկ փող չունեմ մոտս:

Located in modern Turkey, Göbekli Tepe is one of the most important archaeological sites in the world. – Գյոբեկլի Թեփեն, **որը գտնվում է ներկայիս Թուրքիայի տարածքում**, աշխարհի կարևորագույն հնագիտական վայրերից է:

Նախադասությունների միավորում և մասնատում: Բազմաբարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունները կարող են մասնատվել, թարգմանվել առանձին-առանձին, հատկապես եթե նման բազմաբարդ կառույցը խճողում է միտքը, տրամաբանական, ոճական և այլ սխալների պատճառ դառնում: Նույն կերպ մեկ բարդ նախադասության մեջ կարող են միավորվել մի քանի նախադասություններ: Սակայն պիտի հաշվի առնել

հեղինակի ոճական առանձնահատկությունները, ինչպես նաև չխախտել մտքի տրամաբանական կապը:

Ինֆինիտիվով կառույցների թարգմանությունը: Անգլերենում բավականին հաճախ են հանդիպում ինֆինիտիվով կառույցներ, որոնց մեծ մասը հայերեն հնարավոր է թարգմանել միայն փոխակերպումների միջոցով:

*I want you **to come*** (բառացի՝ *Ուզում եմ քո գալը*) – *Ուզում եմ, որ գաս:*

*The tea is too hot **to drink*** (բառացի՝ *Թեյը շատ տաք է խմելու համար*) նախադասությունը, կախված համատեքստից, կարող է թարգմանվել «*Թեյը շատ տաք է, չեմ/չես կարող խմել*», «*Թեյը շատ տաք է, կվառվեմ/կվառվես*» ևն:

Խնդիր կա նաև ռուսերենից թարգմանելիս. ռուսերենում անորոշ դերբայով դրված անդամը հայերեն կարող է թարգմանվել այս կամ այն հոլովով, երկրորդական նախադասությամբ, նաև այլ խոսքի մասով, մասնավորապես գոյականով: Օրինակ՝

*Я должна тебе кое-что **сказать*** (բառացի՝ *Ես պետք է քեզ մի բան ասել*) – (*Ես*) *քեզ մի բան պիտի ասեմ/ես քեզ ասելու բան ունեմ:*

*Они обещали **приехать** на пару дней **погостить*** (բառացի՝ *Նրանք խոստացել են գալ մի երկու օր հյուր մնալ*) – Նրանք խոստացել են, որ մի երկու օրով հյուր կգան: Հնարավոր է նաև «*Նրանք խոստացել են մի երկու օրով հյուր գալ*» տարբերակը:

Փոխակերպումները բազմազան են ու բազմաթիվ, դրանց բոլորին անդրադառնալը մի ձեռնարկի շրջանակներում նպատակահարմար չէ: Տարբեր տեսակի փոխակերպումները սովորաբար հանդես են գալիս միասին, և դրանց բաժանումը պայմանական է: Թարգմանության ընթացքում փոխակերպումներն անխուսափելի են, սակայն դրանք միշտ պետք է հիմնավորված, պատճառաբանված լինեն:

Առաջադրանք 1. Թարգմանել, բացատրել կատարած փոխակերպումները:

u) The city of Babylon, whose ruins are located in present-day Iraq, was founded more than 4,000 years ago as a small port town on the Euphrates River. It grew into one of the largest cities of the ancient world under the rule of Hammurabi.

p) Several centuries later, a new line of kings established a Neo-Babylonian Empire that spanned from the Persian Gulf to the Mediterranean Sea. During this period, Babylon became a city of beautiful and lavish buildings.

q) The town of Babylon was located along the Euphrates River in present-day Iraq, about 50 miles south of Baghdad. It was founded around 2300 B.C. by the ancient Akkadian-speaking people of southern Mesopotamia.

η) Babylon became a major military power under Amorite king Hammurabi, who ruled from 1792 to 1750 B.C. After Hammurabi conquered neighboring city-states, he brought much of southern and central Mesopotamia under unified Babylonian rule, creating an empire called Babylonia.

Առաջադրանք 2. Գտնել շարահյուսական փոխակերպումները, բացատրել դրանք:

... Окончательно пес очнулся вечером, когда звоночки прекратились, и как раз в то мгновение, когда дверь пропустила особенных посетителей. Их было сразу четверо. Все молодые люди, и все одеты очень скромно.

Շունը վերջնականապես արթնացավ ուշ երեկոյան, երբ զանգի զնգոցները դադարել էին, ճիշտ այն պահին, երբ դռնից ներս մտան միանգամից չորս հոգի: Բոլորն էլ ջահել էին, շատ համեստ

հազնված:

«Этим что нужно?» – удивленно подумал пес. Гораздо более неприязненно встретил гостей Филипп Филиппович. Он стоял у письменного стола и смотрел, как полководец на врагов. Ноздри его ястребиного носа раздувались. Вошедшие топтались на ковре.

«Սրա՞նց ինչ է պետք», - դժկամությամբ և զարմացած մտածեց շունը: Առավել դժկամությամբ դիմավորեց հյուրերին Ֆիլիպ Ֆիլիպովիչը: Նա կանգնած էր գրասեղանի մոտ և նրանց նայում էր, ինչպես գորավարը թշնամիներին: Նրա արծվենի քրի ռունգերը փքվել էին: Ներս մտածները դոփդոփում էին գորգի վրա:

– Мы к вам, профессор, – заговорил тот из них, у кого на голове возвышалась на четверть аршина копна густейших вьющихся черных волос, – вот по какому делу...

– Մենք ձեզ մոտ ենք եկել, պրոֆեսոր,- խոսեց մեկը նրանցից, ում գլխին էր քառորդ արշին բարձրությամբ խիտ ու զանգուր, սև մազերի խուրձը,- ահա թե ինչ հարցով...

– Вы, господа, напрасно ходите без калош в такую погоду, – перебил его наставительно Филипп Филиппович, – во-первых, вы простудитесь, а во-вторых, вы наследите мне на коврах, а все ковры у меня персидские.

– Դուք, պարոնայք, իզուր եք առանց կրկնակոշիկների ման գալիս այսպիսի եղանակին,- խրատաբար ընդհատեց նրան Ֆիլիպ Ֆիլիպովիչը,- նախ, կմրսեք, երկրորդը՝ հետքեր եք թողել իմ գորգերի վրա, իսկ իմ գորգերը բոլորը պարսկական են:

– Во-первых, мы не господа, – молвил наконец самый юный из четверых, персикового вида.

– Նախ և առաջ, մենք պարոններ չենք,- վերջապես արտաբերեց չորսից ամենադեռատին՝ դեղձի տեսքով:

– Во-вторых, – перебил и его Филипп Филиппович, – вы мужчина или женщина?

- Նախ և առաջ,- ընդհատեց նաև նրան Ֆիլիպ Ֆիլիպովիչը,-
դուք տղամա՞րդ եք, թե՞ կին:

Четверо вновь смолкли и открыли рты. На этот раз опомнился
первый тот, с копной.

– Какая разница, товарищ? – спросил он горделиво.

Չորսը նորից պապանձվեցին և բացեցին բերանները: Այս
անգամ առաջինն ուշքի եկավ այն մեկը՝ խրձովը:

- Ի՞նչ տարբերություն, ընկեր,- հարցրեց հպարտությամբ:

– Я - женщина, – признался персиковый юноша в кожаной
куртке и сильно покраснел. Вслед за ним покраснел почему-то
густейшим образом один из вошедших – блондин в папаче.

- Ես կին եմ,- խոստովանեց կաշվե բաճկոնակով դեղձանման
դեռահասը և սաստիկ կարմրեց: Նրանից հետո, չգիտես ինչու, ա-
վելի թունդ կարմրատակեց ներս եկածներից մյուսը, փափախով
շիկահերը:

– В таком случае вы можете оставаться в кепке, а вас,
милостивый государь, попрошу снять головной убор, –
внушительно сказал Филипп Филиппович (....)

- Այդ դեպքում, դուք կարող եք մնալ կեպիով, իսկ ձեզ, ողոր-
մած պարոն, կխնդրեմ հանել ձեր գլխարկը,- ազդու տոնով ասաց
Ֆիլիպ Ֆիլիպովիչը: (Մ. Булгаков, Собачье сердце. Թարգմ.՝ Ար-
մեն Հովհաննիսյան)

The past tense of William Shakespeare would be Wouldiwas Shookspeared

Նկ. 21. Լեզվաբանական բառախաղ անգլերենի ժամանակաձևերով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Рецкер Я. Теория перевода и переводческая практика. М., 2007.
2. Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ: Նազարյան Ա., Բաղդասարյան Հ., Եր., 2000:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԻՇԵ՛Ք

1. Հայերենում **անկատար ներկան** ցույց է տալիս.

ա) ներկայում ընդհանրապես կատարվող գործողություն (*Ամեն կիրակի գնում ենք արշավի*).

բ) այս պահին ընթացքի մեջ գործողություն (*Առավոտից գիրք եմ կարդում*):

Կարող է ցույց տալ նաև.

գ) կատարված գործողություն (*Բշխանն իր մոտ է կանչում սեպուհներին* (պատմական ներկա); *Երեկ գնում եմ դասի, տեսնեմ՝ իսկանում է*).

դ) ապառնի գործողություն (*Երեկոյան գնում ենք կինո*).

ե) հրամայական եղանակի իմաստ (*Հենց հիմա իրերդ հավաքո՛ւմ ես*) նն:

2. **Անցյալ կատարյալը** ցույց է տալիս.

ա) անցյալում ընդհանրապես կատարված, ավարտված գործողություն (*Անճան ասաց, որ չի գալու*).

բ) խոսելու պահից քիչ առաջ ավարտված գործողություն (*Արամը հենց նոր գնաց դուրս*).

Կարող է ցույց տալ նաև.

գ) կատարվելիք գործողություն (*Դե, ես գնացի տուն*).

դ) գործածվել հրամայական եղանակի իմաստով (*Ձայնդ կտրեցի՛ր ու դո՛ւրս եկար սենյակից*):

3. **Հրամայական եղանակը**, ինչպես գիտենք, ցույց է տալիս ոչ միայն հրաման, կոչ, այլև խնդրանք, դիմում: Հայերենում խնդրանք կարելի է արտահայտել.

ա) հրամայական եղանակի միջոցով (*Մի բաժակ ջո՛ւր տուր*,

խնդրում եմ).

բ) պայմանական ապառնի կոչվող ժամանակով (*Մի բաժակ ջուր կտա՞ս*).

գ) ժխտական խոնարհումով (*Մի բաժակ ջուր չես տա՞*).

դ) պայմանական անցյալով (*Մի բաժակ ջուր չէիր տա՞*) ևն:

4. Հայերենում **կրավորական կառույցը** գործածում ենք մի քանի դեպքում.

ա) Երբ հայտնի չէ գործողություն կատարողը և հնարավոր չէ պարզել (*Պահպանվել են 7-րդ դարի ամրոցի ավերակները; Մյուսների վրա փորագրված են զանազան նշաններ*):

բ) Երբ կարևոր չէ գործողություն կատարողը/կատարողները (*Հանձնարարությունը կատարվել է ժամանակին; Շենքը կառուցվել է 1959 թվ.*):

գ) Երբ ուզում ենք թաքցնել գործողություն կատարողին (*Վերնաշապիկը պատռվել է*):

դ) Երբ տրամաբանական շեշտը ոչ թե գործողություն կատարողի՝ ենթակայի վրա է, այլ խնդրի (*Մրցույթի հաղթողները պարգևատրվել են (ինչ-որ մեկի կողմից)*):

Հարկ է չմոռանալ, որ հայերենում հարակատար դերբայը ներգործական սեռով արտահայտում է նաև կրավորականի իմաստ՝ (*սեղանին*) *դրած գիրքը, հատակին թափած իրերը, (մեկի) արած գործը* ևն, և պարտադիր չէ *դրված, թափված, արված* ձևերի կիրառությունը:

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԸ

THE SIMPLE PRESENT TENSE IS USED:

— To express habits, general truths, repeated actions or unchanging situations, emotions and wishes: **I smoke** (habit); **I work in London** (unchanging situation); **London is a large city** (general truth)

– To give instructions or directions: **You walk** for two hundred meters, then **you turn** left.

– To express fixed arrangements, present or future: Your exam **starts** at 09.00

– To express future time, after some conjunctions: **after, when, before, as soon as, until**: He'll give it to you **when you come next Saturday**.

EXAMPLES

He goes to school every morning.

1. **She understands** English.
2. **It mixes** the sand and the water.
3. **He tries** very hard.
4. **She enjoys** playing the piano.

THE PRESENT CONTINUOUS IS USED:

✓ to describe an action that is going on at this moment: **You are using** the Internet. **You are studying** English grammar.

✓ to describe an action that is going on during this period of time or a trend: **Are you still working** for the same company? More and more people **are becoming** vegetarian.

✓ to describe an action or event in the future, which has already been planned or prepared: **We're going** on holiday tomorrow. **I'm meeting** my boyfriend tonight. **Are they visiting** you next winter?

✓ to describe a temporary event or situation: He usually plays the drums, but **he's playing** bass guitar tonight. The weather forecast was good, but **it's raining** at the moment.

✓ with “always, forever, constantly”, to describe and emphasise a continuing series of repeated actions: Harry and Sally **are always**

arguing! You're constantly complaining about your mother-in-law!

EXCEPTIONS

Perception verbs (see, hear, feel, taste, smell) are often used with can: I can see... These verbs may be used in the continuous form but with a different meaning

- This coat **feels** nice and warm. (your perception of the coat's qualities)
- **John's feeling** much better now (his health is improving)
- She **has** three dogs and a cat. (possession)
- **She's having** supper. (She's eating)
- I can **see** Anthony in the garden (perception)
- **I'm seeing** Anthony later (We are planning to meet)

The present perfect continuous is used to refer to an **unspecified time** between 'before now' and 'now'. The speaker is thinking about something that started but perhaps did not finish in that period of time. He/she is interested in the **process as well as the result**, and this process may still be going on, or may have just finished.

ACTIONS THAT STARTED IN THE PAST AND CONTINUE IN THE PRESENT

She **has been waiting** for you all day (= and she's still waiting now).

I've been working on this report since eight o'clock this morning (= and I still haven't finished it).

They have been travelling since last October (= and they're not home yet).

ACTIONS THAT HAVE JUST FINISHED, BUT WE ARE INTERESTED IN THE RESULTS

She has been cooking since last night (= and the food on the table looks delicious).

It's been raining (= and the streets are still wet).
Someone's been eating my chips (= half of them have gone).

FUNCTIONS OF THE PAST PERFECT

The past perfect refers to a time **earlier than before now**. It is used to make it clear that **one event happened before another** in the past. It does not matter which event is mentioned first - the tense makes it clear which one happened first.

The train **had just left** when I arrived at the station.

4. She **had just left** the room when the police arrived.

5. I **had just put** the washing out when it started to rain.

John **had gone** out when I arrived in the office.

I **had saved** my document before the computer crashed.

He was very tired because he **hadn't slept** well.

When they arrived we **had already started** cooking.

FUNCTIONS OF THE PAST PERFECT CONTINUOUS

The past perfect continuous corresponds to the present perfect continuous, but with reference to a time earlier than 'before now'. As with the present perfect continuous, we are more interested in the **process**.

EXAMPLES

- **Had you been waiting** long before the taxi arrived?
- **We had been trying** to open the door for five minutes when Jane found her key.
- **It had been raining** hard for several hours and the streets

were very wet.

– Her friends **had been thinking** of calling the police when she walked in.

FUNCTION

The future perfect tense refers to a completed action in the future. When we use this tense we are projecting ourselves forward into the future and looking back at an action that will be completed some time later than now. It is most often used with a time expression.

EXAMPLES

- **I will have been** here for six months on June 23rd.
- By the time you read this **I will have left**.
- **You will have finished** your report by this time next week.
- **Won't they have arrived** by 5:00?
- **Will you have eaten** when I pick you up?

FUNCTIONS OF THE PAST PERFECT CONTINUOUS

The past perfect continuous corresponds to the present perfect continuous, but with reference to a time earlier than 'before now'. As with the present perfect continuous, we are more interested in the **process**.

EXAMPLES

- **Had you been waiting** long before the taxi arrived?
- **We had been trying** to open the door for five minutes when Jane found her key.
- **It had been raining** hard for several hours and the streets were very wet.
- Her friends **had been thinking** of calling the police when she walked in. (<https://www.ef.com/> lqujphg)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հայերեն

1. Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ: Նազարյան Ա., Բաղդասարյան Հ., Եր., 2000:
2. Թարգմանության տեսություն: Լեզվաբանական հայեցակետ, Եր., ՌՀՀ հրատ., 2018:
3. Համառոտ ակնարկ թարգմանաբանության: Սեֆերյան Ս. և այլք, Եր., 2012, 2-րդ հրատ:
4. Վարդանյան Ն., Թարգմանչական արվեստ: Տեսական և գործնական ուսումնասիրություններ: Ուս. ձեռնարկ, Եր., 2011:
5. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., 2006:

Հոդվածներ

1. Ղարազյուլյան Թ., Օտարազգի բառերի տառադարձման շուրջ, «Լրաբեր», 1973:
2. Ջահուկյան Գ., Օտար բառերի տառադարձման սկզբունքները, «Լրաբեր», 1972, N 3:
3. Քամալյան Ա., Փոխառություն, օտարաբանություն և էկզոտիզմ (տարբերակման փորձ), ԲԵՀ, 2015, N 2 (17), էջ 66-80:
4. Քամալյան Ա., Թարգմանչական սխալների հիմնական պատճառները, ԲԵՀ, 140.2, 2013, էջ 71-80:
5. Քամալյան Ա., Բառախաղերի թարգմանությունը, «Պոեզիայի ապագան թարգմանության միջոցով» միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2004:

Գրականություն

1. Алексеева И. С. Введение в переводоведение: Учеб. пособие. М., 2004.
2. Алимов В. В. Интерференция в переводе (докторская диссертация). М., 2004:
3. Бархударов Л. Язык и перевод. М., 1975
4. Виноградов В. С. Введение в переводоведение. М., 2001.
5. Виноградов В. С. Лексические вопросы перевода художественной прозы. М., 1978.
6. Влахов С., Флорин С. Непереводимое в переводе. М., 1980.
7. Верещагина Е., Костомаров В. Язык и культура. М., 1990.
8. Гарбовский Н. Теория перевода. М., 2004.
9. Комиссаров В. Теория перевода. 1990.
10. Комиссаров В. Н. Общая теория перевода. М., 1999.
11. Латышев Л., Перевод: проблемы теории, практики и методики преподавания. М., 1988.
12. Левый И., Искусство перевода. М., 1974.
13. Рецкер Я. Теория перевода и переводческая практика. 3-е изд., М., 2007.
14. Серов Н. В. Цвет культуры. С.-П., 2003.
15. Тер-Минасова С. Г. Язык и межкультурная коммуникация. М., 2000.
16. Федоров А. В. Основы общей теории перевода. М., 2002.
17. Швейцер А. Д. Теория перевода: Статус, проблемы, аспекты. М., 1988.
18. Шеина И. М. Роль фоновых знаний в понимании иноязычного текста (<https://bit.ly/2UdAiZV>).

Անգլերեն

1. Antony Pym. Translation error analysis and the interface with language teaching. “The Teaching of Translation”. Amsterdam: John Benjamins. 1992, 279-288.
2. Eugene Albert Nida. Contexts in Translating (<https://bit.ly/2M4mDTD>).
3. Juliane House. Translation. The Basics. 2018.
4. Juliane House. Translation. Oxford: Oxford University Press. 2009.
5. Mona Baker. In other words. (<https://bit.ly/2BC49Up>)
6. Translation journal. (<https://translationjournal.net/>)
7. Umberto Eco. Experiences in Translation.
8. A dictionary of translation and interpreting. John Laver and Ian Mason. 2018 (https://www.academia.edu/37923697/A_Dictionary_of_Translation_and_Interpreting.docx).

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ, ԱՌՑԱՆՑ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

<http://www.nayiri.com/> – 100-ից ավելի բառարաններ՝ բացատրական, հոմանիշների, ստուգաբանական, դարձվածաբանական, մասնագիտական, թարգմանական (ռուս., անգլ., ֆրանս., գերմ., իսպ., պարսկ., թուրք. ևն) :

<https://bit.ly/2B1bnUo> – հայերեն առցանց բառարանների ամենամեծ ցանկը:

<http://dict.am/> – անգլերեն-հայերեն:

<http://brn.armenia.ru/ru/brn> – ռուսերեն-հայերեն:

<https://dic.academic.ru/> – ռուսերեն բառարանների ամենամեծ ցանկը:

<https://dictionary.cambridge.org/> – Քեմբրիջի բառարան, անգլերեն:

<https://www.collinsdictionary.com/us/> – Քոլինզի բառարան, անգլերեն:

Ахманова О. Словарь лингвистических терминов. М., 2004.

Розенталь Д. Э., Теленкова М. А. Словарь-справочник лингвистических терминов. М., 1976.

Лингвистический энциклопедический словарь. Под. ред. Ярцевой. М., 1990.

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

https://grahavak.blogspot.com/p/blog-page_22.html. – **Գրահավաք** (թվայնացված հայերեն գրականություն, պարբերականներ, բառարաններ):

<http://etd.asj-oa.am/view/subjects/18.html>. – **Հայաստանի ատենախոսությունների բաց մատչելիության պահոց:**

<http://www.eanc.net/> – **Արևակ արևելահայերենի կորպուս** (19-րդ դարի կեսերից մինչև մեր օրերն ստեղծված արևելահայերեն տեքստեր պարունակող լեզվաբանական որոնման համակարգ է՝ մոտ 110 միլիոն բառամթերքով):

<http://www.ruscorpora.ru/index.html>. – **ռուսերենի կորպուս:**

<https://context.reverso.net/translation/> – բազմալեզու բառարաններ, քերականություն, համատեքստային թարգմանություններ:

<http://translation-blog.ru/alfavitniy-ukazatel/>. – թարգմանչական բլոգ, ռուս.:

http://linguisticus.com/ru/TranslationTheory/OpenFolder/BEZJEKVIVALENTNAJA_LEKSIKA. – թարգմանության տեսության հիմնական հասկացությունների բառարան-տեղեկատու, ռուս.:

<https://www.proz.com/> – թարգմանիչների, լեզվաբանների ամենահեղինակավոր հարթակներից մեկը:

<https://www.sdltados.com/> – **Trados**-ը տվյալների բազա է, որն անհրաժեշտ է ոչ գեղարվեստական թարգմանությամբ զբաղվողներին: Թարգմանչին օգնող գործիքներ են նաև **Wordfast**, **MemoQ**, **Déjà Vu** նւ:

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՑԱՆԿ

- Адекватный перевод – նույնարժեք թարգմանություն
Антонимический перевод – հականշային թարգմանություն
Ассоциация – ասոցիացիա, զուգորդում
Безэквивалентная лексика – բառարանային համարժեք չունեցող բառապաշար
Билингвизм – բիլինգվիզմ, երկլեզվություն
Буквальный перевод – տառացի թարգմանություն
Вариантное соответствие – տարբերակային համապատասխանություն
Варваризм – օտարաբանություն
Внутрилингвистическое значение – ներլեզվական իմաստ
Генерализация – ընդհանրացում
Гипоним – տեսականիշ բառ
Гипероним – սեռանիշ բառ
Грамматические трансформации – քերականական փոխակերպումներ
Грамматические/синтаксические кальки – քերականական պատճենումներ
Денотат – դենոտատ (լեզվաբանության մեջ՝ ռեֆերենտ)
Денотативная или референциальная информация – դենոտատիվ կամ ռեֆերենցիալ տեղեկույթ
Дифференциальная информация – դիֆերենցիալ (տարբերակիչ) տեղեկույթ
Добавление – հավելում
Заимствование – փոխառություն
Замены – փոխարինումներ
Инверсия – շրջուն շարադասություն

Интерпретация – մեկնաբանություն, մեկնություն
 Интерференция – փոխներթափանցում
 Калькирование – պատճենում
 Компенсация – փոխհատուցում
 Конкретизация – կոնկրետացում
 Коннотация – հարանշանակություն, հարակից իմաստ, հարի-
 մասություն
 Контекст – համատեքստ
 Лексические трансформации – բառային փոխակերպումներ
 Логическое развитие – տրամաբանական, իմաստային զարգա-
 ցում
 Машинный перевод – մեքենական թարգմանություն
 Межъязыковая трансформация – միջլեզվական փոխակերպում
 Межъязыковые омонимы – միջլեզվական համանուններ
 Модуляция (смысловое развитие) – տե՛ւս Логическое развитие
 Описательный перевод – նկարագրական թարգմանություն
 Опускание – բացթողում
 Перестановка – փոխատեղում կամ տեղափոխում
 Переводоведение – թարգմանաբանություն, գիտություն թարգմա-
 նության մասին
 Подтекст – ենթատեքստ
 Прагматическое значение – գործարանական կամ պրագմատիկ
 իմաստ
 Реалия – իրականություն, իրույթ
 Референт – ռեֆերենտ (տե՛ւս денотат)
 Референциальное значение – ռեֆերենցիալ իմաստ
 Транскрипция – տառադարձում
 Транслитерация – գրադարձում
 Трансформация – փոխակերպում

Узус – կիրարկություն, ընդունված/սովորական կիրառություն

Фоновая информация – ֆոնային, խորքային գիտելիք

Эквивалент – համարժեք

Экзотизм – էկզոտիզմ, տարաշխարհիկ բան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԵՎԻԿ ՔԱՄԱԼՅԱՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ

ՏԵՍՈՒԹՅԱՆ

ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Մ. Կեսոյանի

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, բն. 43

Ստորագրված է տպագրության՝ 05.06.2020:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 10.125:
Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am